

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ  
ՇԵՏ

Վարեց՝ ՊԵՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Նիսի Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան մէջ, դէմ յանդիման բանաստեղծին և մեծ հայրենասէրի եղբորորդիին՝ Յովհաննէս Չիլինկիրեանին հետ, ունեցանք հետեւեալ հարցազրոյցը, որուն սիրով ընդառաջեց պատասխանել ան:

Արդարեւ, Յովհաննէս Չիլինկիրեան ծանօթ անուն մըն է Հայրենիքի և Սփիւռքի մէջ: Ան յատկապէս Իսթանպուլէն դուրս գալէ ետք, նուիրուեցաւ, առաջին հերթին, իր 1915-ի Մեծ Ծղեռնի նահատակ գրագէտ հորեղբոր յիշատակի վերածննդեան: Նիւթական և բարոյական մեծ զոհողութիւններու յանձնառու ըլլալով վերականգնեց Մեծ Նահատակին գրական հասարակական և բարոյական կերպարը՝ յիշատակը յաւերժացնող ձեռնարկներով: Անոր յիշատակին վրայ ձգուած ստուերը անհետացնելու նախանձախնդրութեամբ:

Բաց աստի, Յովհաննէս Չիլինկիրեան ասպարէզ եկաւ նաեւ իրր հրապարակագիր, և Ռուբէն Սեւակի ազգային մտածողութեան հետքերով հակաթուրք պայքարի ձեռնարկեց 1915-ի հայոց դէմ գործադրուած ցեղապանութիւնը վերագրելով Սիոնիստական-Բանթուրիստական ցեղապաշտական ծրագիրի մը գործադրութեան: Չիլինկիրեանը նաեւ անոր հետ մօտաւոր և հեռաւոր առնչութիւն և մեղսակցութիւն ունեցող շրջանակներուն և դէմքերուն...: Այդ լուսարձակին տակ համոզուած գիծ մը կարելի է նկատել Յովհաննէս Չիլինկիրեանի մտածողութեան, որ կ'արտայայտուի իր հրապարագրական էջերէն, ժամանակակից ազգային և միջազգային իրադարձութիւնները դատելու յախուռն ոճը և հայ ժողովուրդի և Հայաստանի արեւելումին մէջ Ռուսամէտ քաղաքականութեան պաշտպանութիւնն ու ջատագովումը:

Հեղինակ է «Ռուբէն Սեւակ և Փրցուելիք Ուղեղներ» գիրքին: Բանի մը ստուար հատորներ կրնան կազմել իր ստորագրած յօդուածները:

Ինչպէս իր յօդուածներուն մէջ, իր հետ մեր վարած հարցազրոյցին տուած իր պատասխաններն ալ, կը յատկանշուին խիստ և անխնայ դատումներով: Պ. Ս.

**Ա. ՀԱՐՑՈՒՄ.**... Նիսի հայկական գաղութի մէջ Ռուբէն Սեւակի անուան յիշատակի թանգարանը, որ Ձեր ձեռակերտն է, ներշնչող ներկայութիւն մըն է Նիսի տեսարժան վայրերուն առընթեր: Ինչպիսի աշխատանքներ կը շարունակուին հոն: Անձնապէս գո՛հ է՛ք արգիւնէն՝ յատկապէս այցելուներու տպաւորութիւններու ընդմէջէն: Կ'ուզէի՞ք կարգ մը նշանաւոր այցելուներու անուններ թուել՝ հայրենի-  
էն և Սփիւռէն:

**ՊԱՏԱՍԽԱՆ.**... Չեր այս հարցումին պիտի պատասխանենք, 1985-ին հրատարակուած «Ռուբէն Սեւակ և Փըրցընելիք Ուղեղներ» անունը կրող գիրքէն նախադասութեամբ մը՝ «Ազգ մը, որ իր հերոսները կը մոռնայ, ինքն ալ մեռնելու դատապարտուած է»:

Երբ այսօր հայ ազգը, ընդհանուր առմամբ «Եղեռն»ը և «Արեւմտեան Հայաստան»ը մոռցած է, մենք չենք զարմանար, որ Նիսի հայութիւնը և Սփիւռքի հայութեան մեծամասնութիւնը՝ Ռուբէն Սեւակին ո՞վ ըլլալը չի գիտեր և Coie D'Azur-ի մէջ «Ռուբէն Սեւակի անուան Յիշատակի Տուն»ին գոյութենէն լուր չ'ունենար, և լուր ունեցողներն ալ անտարբեր կը մնան:

Հակառակ հայ ժողովուրդին մեծամասնութեան՝ իր պատմութեան, իր հերոսներուն և իր նահատակներուն հանդէպ ցուցաբերած անցերելի անտարբերութեան, գիտակից փոքրամասնութիւն մը՝ երկիւղածութեամբ կ'այցելէ Ռուբէն

Սեւակի յիշատակին յատկացուած այս տունը:

Այստեղ, նախ կ'ուզենք նշել, վերջերս Ռուբէն Սեւակի Տունը այցելած անձի մը անունը, որ մեզի համար անմոռանալի պիտի մնայ:

Զօրավար Դրոյին քարտուղարը եղած, Դաշնակցական երեսելիներէն՝ մեծ հայրենասէր Յովիկ Էթեանն է ան:

1990-ին, Ամերիկայէն մեզի գրած մէկ նամակին մէջ, Երուանդ Ազատեանին թելադրանքին ընդառաջելով, ան փափաք կը յայտներ, այցելել Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Բայց, Յովիկ Էթեանին համար իր այս փափաքը կարելի եղաւ իրականացնել՝ միայն ինը տարիներ վերջ, 25 Յուլիս 1999-ին, երբ ան 86 տարեկան էր արդէն:

Եւ Յովիկ Էթեան, իր զարմիկին՝ Էտմոն Ղազարեանին առաջնորդութեամբ Զօթ Տ'Ազիւր եկաւ և նախ իր փափաքովը Նիսի Հայկական եկեղեցիին մէջ Ռուբէն Սեւակի յիշատակին հոգեհանգիստ մը կատարել տալէ յետոյ, այցելեց Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Եւ մեկնելէ առաջ, հետեւեալ տողերը արձանագրեց այցելուներու յատուկ յիշատակի մատեանին մէջ.

«ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՃՈՅՔՈՎ ԵՒ ԵՐԱՄՏԱԳԻՏԱԿԱՆ ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՎ ԱՅՑԵԼԵԾԻ ՄԵՐ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԱՆԳԵՐԱԶԱՆՅԵԼԻ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆԸ: ԵՒ ԻԲՐ ՀԱՅ ԻՆՔՁԻՆՔԱՅ ԾԱՏ ՀՊԱՐՏ ԶԳԱՅԻ:

Յուլիս 25, 1999, ՅՈՎԻԿ ԷԹԵԱՆ»:

Եւ Յովիկ Էթեան, Ամերիկա վերադառնալէ յետոյ, մեզի ուղարկեց շնորհակալութեան նամակ մը և Ռուբէն Սեւակի տունը այցելած օրը, իր լուսանկարչական գործիքով նկարահանուած պատկերները:

Եւ քանի մը օր ետք, մենք ալ, մեր կողմէ, Յովիկ Էթեանին շնորհակալութիւն յայտնելու համար, Ամերիկա՝ Ֆրեզնօ իր բնակարանը հեռաձայնեցինք: Բայց իր դուստրը խօսեցաւ ընկալուչէն: Եւ ան մեզի հետեւեալ ցաւալի լուրը հաղորդեց.

«Մեր հայրը երէկ հողին յանձնեցինք»:

Մենք կը հաւատանք, որ Յովիկ Էթեան՝ տեսակ մը «ուխտագնացութեան» եկած էր իր շատ սիրած բանաստեղծին՝ Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը:

Եւ պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբ, վերադարձած էր Ամերիկա, իր բնակավայրը: Եւ հոն մահացած:

\*\*\*

Պրն. Սիմոնեան, ձեր փափաքին ընդառաջելով Ռուբէն Սեւակի Յիշատակի Տունը այցելած, երեսելի անձնատրուութիւններէն մէկ մասին անունները տալու ջանանք: Վարդէս Պետրոսեան [Ս.Ը. Գրողներու Միութեան Զարտուղար]: Ծահէն Խաչատուրեան [Ը.Ը. Ազգային թանգարանի տնօրէն]: Վլատիմիր Մովսէսեան [Ս. Հայաստանի Կ.Կ. Զարտուղար, յետոյ՝ Ը.Ը.-ի նախարար]: Վահագն Տատրեան [Պատմագէտ], Երուանդ Ազատեան [Ա. Մանուկեան հիմնարկին նախագահ]: Պերճ Սեդրակեան [Ը.Բ.Ը.Մ.-ի փոխ նախագահ]: Զօրավար Արամ Գարամանուկեան [Ամերիկա]: Յովհաննէս Չեքիճեան [Ը.Ը. choral-ի վարիչ]: Carzou [Գառնիկ Զուլեմեան գեղանկարիչ Ֆրանսա]: Տարօն Եպիս. Ճէրէճեան Առաջնորդ Հարաւային Ֆրանսայի հայրց]: Գնէ Արքեպս. Ճէրէճեան [Առաջնորդ Դամասկոսի]: Գարեգին Արքեպս. Պէքճեան [Առաջնորդ Գերմանիոյ]: Տիրայր Արքեպս. Մարտիկեան [Առաջնորդ Պուլկարիոյ և Ռումանիոյ]: Պարգեւ Արքեպս. Մարտիրոսեան [Առաջնորդ Արցախի]: Թորգոմ Արքեպս. Մանուկեան [Պատրիարք Երուսաղէմի]: Գարեգին Բ. [Վաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ]:

Հ.- Իրրև Հայկական Դատին անխոնջ ծառայող ազգային և հրապարակագիր, ինչպէ՞ս կը գնահատէ հայկական ցեղասպանութեան նանայման ուղղութեամբ ցարդ տարուած աշխատանքները: Այս հանգրուանին ի՞նչ դեր կը վերապահէ հայրենի անկախ պետականութեան և Սփիւռքի քաղաքական հասանքներուն: Համագործակցութիւն մը անհրաժեշտ է հայրենիքի և Սփիւռքի միջեւ:

Պ.Ը Այս մասին, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ, հինգ տարիներէ ի վեր, տեսական կ'արտայայտուինք մեր գրութիւններով:

Այստեղ կ'ուզենք հետեւեալ տողերը աւելցնել.

Սովետական Հայաստանը կործանող Լեւոն Տէր Պետրոսեանը՝ ամերիկացիներուն ճնշումով, գրեթէ ութը տարիներու ընթացքին, իր քաղաքականութեան նպատակը ըրած էր՝ թուրքերուն հետ բարեկամական կապեր հաստատել:

Եւ Թուրք-Հայ բարեկամութեան ստեղծման «արգելք» մը վերցնելու մտքով, Լեւոն Տէր Պետրոսեանը Հայաստանի մէջ, ութը տարիներ շարունակ ջանաց

«Եղեռն»ը մոռցնել տալ հայ ժողովուրդին:

Եւ այս նպատակին հասնելու համար, Հայաստանի դպրոցներուն մէջ, Եղեռնի մասին գրութիւնները և ասոնց դասաւանդումը ուզեց վերցնել իր կրթական նախարարին՝ Աշոտ Բլեեանի մեղսակցութեամբ:

Մենք կը հաւատանք, որ Լեւոն Տէր Պետրոսեանը, [անկախաբար իր գործած բազմաթիւ յանցանքներէն] ուրը տարիներու ընթացքին «Եղեռն» մոռցրնել տալու իր յանցագործութեան համար միայն, իբր «Ազգադաւ» դատուելու արժանի է:

Միայն այս պարագային է, որ կրկին հայ ժողովուրդին մէջ «Եղեռն»ի գիտակցութիւնը կրնանք վերստեղծել: Եւ միայն այն ատեն է, որ «Եղեռն»ի ճանաչման ճամբան կրնայ բացուիլ:

Հ.— Ի՞նչպէս կը պատկերացնէ՞ այսօրուան անկախ Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը իր անմիջական դրացիներուն և մեծապետական երկիրներուն եետ: Այդ շրջագիծէն ներս՝ տնտեսական բարեւաւում և ազգային հարցերու լուծման [հիմնականին մէջ Արցախի կարգադրութիւն] հնարաւորութիւններ կը գտնէ՞ք:

Պ.— Այսօրուան Հայաստանի պետութեան քաղաքականութիւնը ջանանք բացատրել Ռուբէն Սեւակի դեռ 1911-ին գրած մէկ նախադասութեան մէջըրումով:

«...Ու մենք Ուրուական Նախն պէս ԿՐ ԾԱԾԱՆԻՆԷ ԴԵՌ, անխորասուզելի, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող»:

Եւ Հայաստանի պետութիւնը այսօր, Ամերիկային կը քծնի և կ'ընդունի անոր բոլոր պայմանները, անկէ պարտքով դրամ կարենալ առնելու յոյսով: Եւ ութը տարիներու տեսողութեամբ Լեւոն Պետրոսեանին գործադրած երկդիմի և շողորթօր ջաղաքականութիւնը կը շարունակէ, շատ քիչ տարբերութիւններով:

Հայաստան իր այս տարտամ ջաղաքականութիւնը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ-չենք գիտեր:

Բայց գիտենք, թէ թուրքերը իրենց հայատեաց ջաղաքականութենէն մէկ սանդիմեթր չեն շեղած:

Ընդհակառակը, թուրքերը օրէ օր քիչ մ'աւելի կը սաստկացնեն իրենց «փրփականտ»ը, թէ հայերը ջարդած են թուրքերը:

Եւ այս նպատակով վերջերս Իգտիհի մէջ, 60 մեթր բարձրութեամբ Յուշարձան մը կանգնեցին հայերուն թուրք ջարդած ըլլալը խորհրդանշող:

Եւ այս յուշարձանը Հայաստանի սահմանին մօտ, բարձունքի մը վրայ բարձրացուցին, որ Հայաստանի հայերը տեսնեն և հասկնան «ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»:

Այսօր Պոլսոյ մէջ ապրող հայ երիտասարդ սերունդը, տարուելով թրջական քարոզչութենէն, կը հաւատայ, որ հայերն են ջարդարարները:

Եւ շատ հեռու չէ այն օրը, երբ թուրքերը, ամբողջ աշխարհի պիտի հաւատացնեն, թէ հայերն են «ՅԵՂԱՍՊԱՆՆԵՐԸ»:

Մեզի պէս, իր մեծամասնութեամբը՝ «անզգայ» ազգ մը, արժանի է նման անուանարկումի:

Գալով Արցախի հարցին՝ Ամերիկայի Արտաքին գործերու նախարար հրեայ Մատլէն Օլպրայթ, վերջերս թուրքերուն և ազերիներուն միջեւ Պոլսոյ մէջ հանդիպում մը պատրաստելու վրայ է:

Տեսնենք, թէ հրեայ վհուկը ի՞նչ խաղեր, ի՞նչ դաւեր կը պատրաստէ հայ ազգի գլխուն:

*Հ. - Մանօթ է Չեզի, թէ «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ ստորագրած Չեր հերթական կանոնաւորութեամբ յօդուածները, որոնք սրտցաւ հայու և հասարակական գիտակցութեան տէր մտաւորականի մտորումներն ու հայեացքները կ'արտայայտեն, ընթերցողներու դրական և ժխտական հակազդեցութիւններուն կ'արժանանան: Թիրախը՝ Չեր անձնական պրպտումներուն և տպաւորութիւններուն իբր արդիւն՝ Չեր հետեւեցուցած նշմարտութեան հայ ընթերցողը հաղորդակից դարձնելն է: Կը խորհի՞՞ք, յատկապէս ի՞նչ կը վերաբերի ազգային-մշակութային ՆՈՒԻՐԱ ԳՈՐԾՈՒՄ արժէքներու մասին՝ յիշելու համար մի քանիս, [Միտի-թար Արքահայր, Միխայէլ Նալպանտեան, Շնորհի Գատրիարք և այլն] նշմարտութիւնները ըսելը օգտակար է:*

*Ձի՞ վնասեր մեր նոր սերունդի ազգային դաստիարակութեան:*

*Ձեր չափանիշով, վերջին հարիւր տարուան մեր պատմութեան մէջ, որո՞նք կը նկատէք այն մեծ հայերը, որոնք հայ ժողովուրդի պատմութեան իրենց նպաստը բերած են:*

*Պ. - Կը ներքէ՞ք բայց մեզի համար անընդունելի է այս հարցումը՝ երբ կ'ըսէք, թէ Մխիթար Սեբաստացին, Միքայէլ Նալպանդեանը, Շնորհք Պատրիարք Գալուստեանը նուիրագործուած անձնաւորութիւններ են:*

*15՝ տարիներէ ի վեր մեր գրութիւններով այս կարգի անիրաւաբար «նուիրագործուած» անձնաւորութիւններուն իսկական դիմակները վար առնելու և անոնց հայ ազգին պատճառած վնասները բացատրելու կը ջանանք:*

*Աշխարհի վրայ, հայերէն զատ ուրիշ ազգ մը գոյութիւն չունի, որ իր կործանման կամ կրած կորուստներուն պատճառ եղող անձնաւորութիւնները կը փառաբանէ:*

*Այս անիրաւաբար փառաբանող անձնաւորութիւններուն մէջն են նաեւ՝ Ներսէս Վարժապետեան Պատրիարքը, Մաղաքիա Օրմանեան Պատրիարքը և Գրիգոր Զօհրապը:*

*Ինչո՞ւ կը փառաբանուին մեր կարծիքով այս ազգավնաս անձնաւորութիւնները, որոնց բերած օգուտը, համեմատած իրենց հայ ազգին պատճառած վնասներուն՝ ջնջին է:*

*Եւ մենք ինչո՞ւ պիտի փառաբանենք այս անձնաւորութիւնները, որոնք հայ ազգը խեղդամահ ընող, մահասփիւռ շղթային օղակները եղած են:*

*Պիտի խնդրենք, կրկին մտածեցէ՞ք՝*

*«Ծովէ ծով Հայաստան»էն ո՞ւր հասանք:*

«...Ու մենք Ուրուական Նախն պէս ԿՆ ԾԱԾԱՆԻՆԷ ԴԵՌ, անխորասուզելի, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող»:

Եւ Հայաստանի պետութիւնը այսօր, Ամերիկային կը քծնի և կ'ընդունի անոր բոլոր պայմանները, անկէ պարտքով դրամ կարենալ առնելու յոյսով: Եւ ութը տարիներու տեսողութեամբ Լեւոն Պետրոսեանին գործադրած երկդիմի և շողորթօր ջաղաքականութիւնը կը շարունակէ, շատ քիչ տարբերութիւններով:

Հայաստան իր այս տարտամ ջաղաքականութիւնը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ-չենք գիտեր:

Բայց գիտենք, թէ թուրքերը իրենց հայատեաց ջաղաքականութենէն մէկ սանդիմեթը չեն շեղած:

Ընդհակառակը, թուրքերը օրէ օր քիչ մ'աւելի կը սաստկացնեն իրենց «փրփականտ»ը, թէ հայերը ջարդած են թուրքերը:

Եւ այս նպատակով վերջերս Իգտիհի մէջ, 60 մեթր բարձրութեամբ Յուշարձան մը կանգնեցին հայերուն թուրք ջարդած ըլլալը խորհրդանշող:

Եւ այս յուշարձանը Հայաստանի սահմանին մօտ, բարձունքի մը վրայ բարձրացուցին, որ Հայաստանի հայերը տեսնեն և հասկնան «ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ»:

Այսօր Պոլսոյ մէջ ապրող հայ երիտասարդ սերունդը, տարուելով թրջական քարոզչութենէն, կը հաւատայ, որ հայերն են ջարդարարները:

Եւ շատ հեռու չէ այն օրը, երբ թուրքերը, ամբողջ աշխարհի պիտի հաւատացնեն, թէ հայերն են «ՅԵՂԱՍՊԱՆՆԵՐԸ»:

Մեզի պէս, իր մեծամասնութեամբը՝ «անզգայ» ազգ մը, արժանի է նման անուանարկումի:

Գալով Արցախի հարցին՝ Ամերիկայի Արտաքին գործերու նախարար հրեայ Մատլէն Օլպրայթ, վերջերս թուրքերուն և ազերիներուն միջեւ Պոլսոյ մէջ հանդիպում մը պատրաստելու վրայ է:

Տեսնենք, թէ հրեայ վհուկը ի՞նչ խաղեր, ի՞նչ դաւեր կը պատրաստէ հայ ազգի գլխուն:

*Հ. - Մանօթ է Չեզի, թէ «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ ստորագրած Չեր հերթական կանոնաւորութեամբ յօդուածները, որոնք սրտցաւ հայու և հասարակական գիտակցութեան տէր մտաւորականի մտորումներն ու հայեացքները կ'արտայայտեն, ընթերցողներու դրական և ժխտական հակազդեցութիւններուն կ'արժանանան: Թիրախը՝ Չեր անձնական պրպտումներուն և տպաւորութիւններուն իբր արդիւն՝ Չեր հետեւեցուցած նշմարտութեան հայ ընթերցողը հաղորդակից դարձնելն է: Կը խորհի՞՞ք, յատկապէս ի՞նչ կը վերաբերի ազգային-մշակութային ՆՈՒԻՐԱ ԳՈՐԾՈՒՄ արժէքներու մասին՝ յիշելու համար մի քանի, [Միտի-թար Արքահայր, Միխայէլ Նալպանտեան, Շնորհի Գատրիարք և այլն] նշմարտութիւնները ըսելը օգտակար է:*

*Ձի՞ վնասեր մեր նոր սերունդի ազգային դաստիարակութեան:*

*Ձեր չափանիշով, վերջին հարիւր տարուան մեր պատմութեան մէջ, որո՞նք կը նկատէք այն մեծ հայերը, որոնք հայ ժողովուրդի պատմութեան իրենց նպաստը բերած են:*

*Պ. - Կը ներքէ՞՞ բայց մեզի համար անընդունելի է այս հարցումը՝ երբ կ'ըսէք, թէ Մխիթար Սեբաստացին, Միքայէլ Նալպանդեանը, Շնորհք Պատրիարք Գալուստեանը նուիրագործուած անձնաւորութիւններ են:*

*15՝ տարիներէ ի վեր մեր գրութիւններով այս կարգի անիրաւաբար «նուիրագործուած» անձնաւորութիւններուն իսկական դիմակները վար առնելու և անոնց հայ ազգին պատճառած վնասները բացատրելու կը ջանանք:*

*Աշխարհի վրայ, հայերէն զատ ուրիշ ազգ մը գոյութիւն չունի, որ իր կործանման կամ կրած կորուստներուն պատճառ եղող անձնաւորութիւնները կը փառաբանէ:*

*Այս անիրաւաբար փառաբանող անձնաւորութիւններուն մէջն են նաեւ՝ Ներսէս Վարժապետեան Պատրիարքը, Մաղաքիա Օրմանեան Պատրիարքը և Գրիգոր Զօհրապը:*

*Ինչո՞ւ կը փառաբանուին մեր կարծիքով այս ազգավնաս անձնաւորութիւնները, որոնց բերած օգուտը, համեմատած իրենց հայ ազգին պատճառած վնասներուն՝ ջնջին է:*

*Եւ մենք ինչո՞ւ պիտի փառաբանենք այս անձնաւորութիւնները, որոնք հայ ազգը խեղդամահ ընող, մահասփիւռ շղթային օղակները եղած են:*

*Պիտի խնդրենք, կրկին մտածեցէ՞ք՝*

*«Ծովէ ծով Հայաստան»էն ո՞ւր հասանք:*

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ՀԵՏ... (Շար. էջ 3-էն)**

Ամէն ազգ իրեն վնաս հասցնող դաւաճանները կը դատէ և կը պատժէ:  
Հայ ազգը ընդհակառակը, իր կործանման պատճառ եղող դաւաճանները կը փառաբանէ:

\*\*\*

Կը հարցնէք, թէ՛ «մեր չափանիշով վերջին հարիւր տարուան մեր պատմութեան մէջ, որո՞նք կը նկատենք այն մեծ հայերը, որոնք հայ ժողովուրդին պատմութեան իրենց նպաստը բերած են»:

Թոյլատրեցէք, որ այս հարցումին պատասխանենք – Մէկ դարէ քիչ մը աւելի՛ հին շրջաններու մէջ ապրած ազգասէր կարգ մը հայերուն անունները նշելով:

1.– Այստեղ, նախ և առաջ, խոր երախտագիտութեամբ կ'ուզենք յիշել՝ «ՆԵՐՍԷՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ» որ 1800-թ.ներէն սկսեալ Հայաստան մտնող Ռուսական բանակները իբր հայ ազգին և Հայաստանին ազատարար դիմաւորած էր:

2.– ԻՍՐԱՅԷԼ ՕՐԻՆՆ՝ որ տեսնելով Արեւմտեան պետութիւններուն նենգութիւնները, Ռուսաստան երթալով Հայաստանը ազատագրելու ծրագիրներ մշակած էր:

3.– ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԸ՝ որ մեզ համար ամենէն իրատես բանաստեղծ-գրող ու գործիչն է: Արովեանն է՝ իր մէջ մեծ իմաստութիւն պարփակող հետեւեալ խօսքերը ըսողը՝

«ԵՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԵՐՈՒՆ ԿՐԱՅ ՈՌԻՍ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ ՏԵՍՆԵՍ, ԽԱՉԱՎՆԸԷ»

4.– ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ մեր համոզումով՝ ամենէն աւելի քաղաքական հմտութիւն ունեցող անձնատրութիւնն է: Մկրտիչ Փորթուգալեանն է՝ Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ Կանի մէջ առաջին հայկական քաղաքական կազմակերպութիւնը՝ «Արմենական»ը հիմնողը, երբ ուրիշներ ժընել կ'երթային կուսակցութիւն հիմնելու համար:

5.– ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ՝ որ հայ գրողներուն մէջ ամենէն իմաստունն է: Ան է ընդդիմացողը՝ Հնչակեան Կուսակցութեան մէկ թևին Ռուսիոյ մէջ հակա-ճարական պայքար մղելուն: Ան արգելք ըլլալ ուզած է, որ հայ Ազգը, Ռուսերը թշնամացնելով, իր նստած ճիւղը չկտրէր:

Եզրակացնենք՝

Մեզի համար անձի մը «հայկականութեան» չափանիշը՝ զանազան մարզերու մէջ իր կարողութիւնները չեն: Այլ՝ այս անձին հայ Ազգին և Հայաստանին իսկական օգտին համար կատարած ծառայութիւնները:

Այս տեսակետով՝ մենք ամենէն անցան, բայց իսկական հայրենասէր հայը աւելի օգտակար կը նկատենք բարձր կարողութիւններ ունեցող բայց, իսկութեան մէջ, հայ Ազգին վնասակար եղող և մեծ անուն կրող անձնատրութենէ մը:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
{ԿՐԷԺ ՈՌԻՔԷՆԵԱՆ}**

Երեքշաբթի 16 Նոյեմբեր 1999

# ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏ ԿԱԶԳԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ (ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)

ՀԱԶԱՐ ԱՆԳԱՍ ԱՆԷԾԶ ԶԵԶԻ, ԴԱԽԱՃԱՆ ԴԱՀԻՃ ԵՂԲԱՅ-ՐՆԵՐ, ՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԵՐԸ ԽԱՄՏԵԾԻԶ:

ՄԵՆԷ՝ ԱԶԼՈՐ ՄԸ ԶԵՆՔ ԿՐՆԱՐ ՄՈՐԹԵԼ, ԲԱՅՑ ԱՅՍՈՐ, ԱՅՍ ՀՐԷԾ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՄԵՐ ԶԵՌՋԵՐՈՎԸ ԿՐՆԱՆՔ ԽԵՂԴԵԼ: 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՊԱԾՏՕ-ՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԵՂՈՂ՝ «ՈՌՊԷՐ ԵՒ ՄԵՐԺ ՈՒ ԸՆԿԵՐՔ»: ՀԵՌԱԾԷՔ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ:

27 Հոկտեմբեր 1999-ին՝ Հայաստանի Ազգային ժողովին մէջ կատարուած ողբերգութեան օրէն մինչեւ այսօր, գրեթէ երկու ամիսներ անցան:

Եւ դեռ, պաշտօնական տեղեկութիւն մը չէ տրուած՝ հրէշային ոճրագործութեան բուն պատասխանատուներուն ովքե՞ր ըլլալուն մասին:

Բայց, պաշտօնական յայտարարութիւն ըլլայ կամ ոչ, ողբերգութեան հետեւեալ օրը արդէն, Երեւանի մէջ, բնածին տրամաբանութեամբ ժողովուրդը կ'ըսէր, թէ պաշտօնական բարոյական պատասխանատուները՝ Ռ. Զոչարեան-Ս. Սարգիսեան և Ընկերք.ն են:

Ժողովուրդին, իր այս համոզման մէջ, ո՞րչափ իրաւունք ունեցած ըլլալը՝ 20 Նոյեմբեր 1999-ին յստակացաւ:

Հ.Հ. Պաշտպանութեան նախարարութիւնը, ողբերգութեան անմիջապէս յետոյ, իբր այս աղէտին մեծագոյն և պաշտօնական բարոյական պատասխանատուները՝ Ներքին Գործոց և Անվտանգութեան նախարարին ու Ընդհ. Դատախազին հրաժարումը պահանջեց: Ան մերժեց այս պահանջը:

Եւ 15 օրեր տեւողութեամբ, երկար սակարկութիւններէ յետոյ, ան ստիպուեցաւ վաւերացնել նոր կառավարութեան ցանկը:



Կարէ՛ց Դեմիրճեան



Այս ձեռով Ն. Գ. և Անվտանգութեան նախարարները դուրս ձգուած եղան:

Նոյն օրն ալ՝ նոր ընդհանուր դատախազ մը նշանակուեցաւ:

Քոչարեանի՝ Բանակին այս արդար պահանջներուն ընդդիմանալը, արդէն գոյութիւն ունեցող պառակտումն և բաժանման խրամատը աւելի խորացուցած էր:

Բայց ան, իր բուն դէմքը ցոյց տուաւ 16 Նոյեմբեր 1999-ի արարքով:

Այս ողբերգութեան մեծագոյն պաշտօնական պատասխանատուն եղող Սերժը, որ նոր կառավարութենէն դուրս ձգուած էր, Քոչարեան զինք իր նախագահական աշխատակազմին ղեկավար նշանակեց: Այդ չէր քաւեր՝ 20 Նոյեմբեր 1999-ին, ան Սերժին Հայաստանի պետութեան ամենաբարձր ապահովութեան կազմակերպութիւնը եղող՝ «Ապահովութեան Խորհուրդ»-ին քարտուղարութեան պաշտօնն ալ տրուաւ: Նկատի առէք, որ «Ապահովութեան Խորհուրդին» մաս կը կազմեն նաեւ Հ.Հ. Ազգ. ժողովին նախագահը, Հ.Հ. Վարչապետը, Պաշտպանութեան նախարարը, Ն. Գ. նախարարը և Անվտանգութեան նախարարը:

Հանրապետութեան նախագահին առաջին պարտականութիւնը՝ երկրին մէջ միասնականութիւնը ապահովել և պառակտման և բաժանումին արգելք ըլլալ է:

Մինչդեռ, Պետութեան Գլխաւորին Սերժը իր նախագահական աշխատակազմին ղեկավար նշանակելը և յաւելուած՝ Ապահովութեան խորհուրդին քարտուղար կարգելը՝ հանրապետութեան նախագահի մը կողմէ կատարուած ամենէն ձախաւեր ու ջլատիչ և ամենէն «Տօն քիշօղական» արարքն է:

Այս անհեռատես և անգութ կեցուածքը՝ հայկական բանակին դէմ և ձեռով մըն ալ ազգային ժողովին այսօրուան մեծամասնութեան դէմ՝ պատերազմ հռչակելու համազօր է:

Եւ հակառակ բանակին պահանջքին, Սերժը այս աստիճան պաշտպանելը և զինք իր իրաւասութեան մարզի բարձրագոյն պաշտօններու նշանակելը կ'ապացուցանեն, թէ Երեւանի ժողովուրդին մեծամասնութիւնը իր բնածին տրամաբանութեամբ, իրականութիւնները շատ ճիշդ տեսած էր:

Ժողովուրդը շատ լաւ հասկցած էր, թէ նախագահն և իր պաշտպանեալը՝ Վազգէն Սարգիսեանին դէմ նախանձի և ստորակայութեան զգացումներէ մղուած, գիտակցաբար, կամ անուղղակի կերպով, Հայաստանի թշնամիներուն կողմէ ծրագրուած այս ողբերգութեան մէջ, պատասխանատուութեան մեծ բաժին մը ունեցած են:

★ ★ ★

3 և 4 Դեկտեմբեր 1999-ին, Երեւանի Օփերայի մեծ սրահին մէջ, տեղի ունեցաւ Երկրապահ կամաւորականներու միութեան Դ. համագումարը:

Նահատակ Վազգէն Սարգիսեանին ստեղծած «Երկրապահ Կամաւորականներ»ուն Արցախի պատերազմի շրջանին կատարած փրկարար դերը, Վարդանանցի հերոսներու պատմութեան նման, հայ ապագայ սերունդները հպարտութեամբ պիտի յիշատակեն:

«Երկրապահ»ներուն ստեղծման պատմութիւնը շատ յուզիչ, բայց շատ սրտապնդիչ է:

Ազերիներուն դէպի Ստեփանակերտ յառաջացած դժոխային օրերուն Վազգէն Սարգիսեան, Երեւանի մէջ, երիտասարդներուն կոչ կ'ուղղէ և Արցախը պաշտպանելու համար զոհուելու, նահատակուելու պատրաստ երկու հարիւր կամաւոր կ'ուզէ:

200-ի տեղ, 1500 կամաւորներ կ'ընդառաջեն Վազգէն Սարգիսեանի հրաւերին:



Վազգէն Սարգիսեան

Եւ այս կամաւորները կը կոչուին «մահապարտներ»:

Եւ Վազգէն Սարգիսեանին առաջնորդութեամբ, այս «մահապարտ» հերոսները, Արցախի պատերազմին ճակատագիրը կը փոխեն:

Ստեփանակերտը գրաւելու պատրաստուող թշնամին պարտութեան կը մատնուի, և Արցախը կը փրկուի:

Այս հերոսական պատերազմին, «մահապարտներ»էն շատ շատեր, հերոսանալով կը նահատակուին, և անոնց մէկ մասը միայն իբր հերոս, կը վերադառնան հայրենիք:

Եւ Վազգէն Սարգիսեան այս հերոսներով կը հիմնէ՝ Երկրապահ Կամաւորականներու Միութիւնը:

3 և 4 Դեկտեմբեր 1999-ին, Երեւանի Օրերայի մեծ դահլիճին մէջ տեղի ունեցած համագումարը, Վազգէն Սարգիսեանին հիմնած, Արցախի հերոսներու միութեան համագումարն էր:

Եւ այս համագումարին, նահատակ Վազգէն Սարգիսեան, Երկրապահ Կամաւորականներու միութեան «ՅԱԻԵՐԺ ՆԱԽԱԳԱՀ» ընտրուեցաւ:

Փառք և պատիւ Հայոց Սպարապետ Վազգէն Սարգիսեանի անմահ յիշատակին:

★ ★ ★

Շատ անգամ, յայտնած ենք, հետեւեալ տեսակէտը.

Անկախ պետութեան մը մէջ, իշխանութիւնը՝ երեւութապէս և ըստ օրինի, կառավարութեան ձեռքն է - կը կարծուի:

Բայց, վերջին շրջաններուն, շատ մը պետութիւններու մէջ, իսկական իշխանաւորը՝ միջազգային դրամատիրութեան կողմէ ղեկավարուող մամուլն ու հեռատեսիլն են:

Այսօր, նոյնն է պարագան Հայաստանի մէջ:

Ինչպէս որ, մեր վերջին գրութեան մէջ ալ ըսած էինք, Հայաստանի ազգային հեռատեսիլը այսօր վերածուած է՝ Ամերիկացիներուն թմբկահարող ու Ամերիկամէտ թուող Քոչար-



→ չարեանի փառաբանութեան ծառայող կեդրոնի մը:

Եւ մենք, 18 Նոյեմբեր 1999-ին, Պոլսոյ մէջ կայացած վեհաժողովին մասին Հայաստանի ազգային հեռատեսիլին կատարած լրատուութիւնը տեսնելէ յետոյ, համոզուեցանք, որ Հայաստանի պետական հեռատեսիլը այսօր, Ամերիկացի գործակալներու կողմէ կը հակակշռուի: 18-11-1999-ի Հինգշաբթի օրը, մեծ ուրախութեամբ հեռատեսիլէն դիտեցինք, Պոլսոյ վեհաժողովին մէջ, Ռուսիոյ նախագահ Պորիս Ելցինին կատարած բացառիկ ելոյթը:

Պորիս Ելցին՝ պատասխանելով ամերիկացիներուն կամակատարը եղող Ֆրանսայի Նախագահ Ծիրաքին ըսաւ. «*Դուք իրաւունք չունիք միջամտելու մեր ներքին գործերուն:*

*Արեւմուտքը չի կրնար քննադատել Ռուսաստանի ինքնապաշտպանական կեցուածքը: Մեր ըրածը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ պայքարիլ ահաբեկչութեան դէմ:*

*Եւ մենք շատ լաւ գիտենք, թէ ո՞ր պետութիւնները կ'օգնեն և կը գինեն այս ահաբեկիչները»:*

Պորիս Ելցին՝ Չէչէնիոյ ահաբեկիչներուն օգնողներուն արեւմտեան պետութիւնները ըլլալը անոնց երեսին զարնելէ յետոյ, գրեթէ անմիջապէս ձգեց սրահը և մեկնեցաւ Մոսկուա:

Եւ մենք, լսելով Ռուսիոյ Նախագահին այս խիզախ խօսքերը, ուրախութենէ կը խայտայինք:

Վերջապէս՝ Ռուսիան արթնցած էր:

Մեր «Հիւսիսայգ»ը, մեր ազատարար պետութիւնը ինքնագիտակցութեան եկած և իր «Մեծն Ռուսիա»յի կերպարը վերագտած էր:

Եւ իրիկուան ժամերուն սպասեցինք տեսնելու, թէ Հայաստանի հեռատեսիլը ի՞նչ պիտի ըսէր Զրեմլինի Պետին Պոլսոյ մէջ կատարած ելոյթին մասին: Եւ ապշութեամբ և ցաւով դիտեցինք Հայաստանի հեռատեսիլին այս մասին ըսածները՝

*«Պորիս Ելցին այսօր, Իսթանպուլի վեհաժողովին մէջ, կոշտ ելոյթ մը ունեցաւ:*

Բարեբախտաբար Զլինթըն-ին կատարած խոհեմ և հանդարտեցուցիչ յայտարարութեան շնորհիւ, վեհաժողովը կրցաւ շարունակել իր բնականոն ընթացքը»:

Հայաստանի հեռատեսիլին այս լրատուութեան ականատես ու ականջալուր ըլլալէ ետք, արդեօ՞ք իրաւունք չունինք ըսելու, թէ՛ «Հայաստանի հեռատեսիլը այսօր, ամերիկեան գործակալներու կողմէ կը հակակշռուի»:

★ ★ ★

Բայց, ամենէն վտանգաւորը և ամենէն անհաւատալին, Հայաստանի Ազգային հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանին, հեռատեսիլի յայտագիրներուն ընթացքին, հայկական Բանակին դէմ կատարած յարձակումներն են:

Կրնա՞ք երեւակայել. մեր հայրենիքին միակ յենարանը եղող հայկական բանակը, Հայաստանի հեռատեսիլին ճամբով, կը վարկաբեկուի, իբր թէ Զոչարեանի իշխանութիւնը զօրացնելու նպատակաւ:

Անհաւատալի կը թուի մեր ըսածները, բայց դիտողները կրնան վկայել:

28 Նոյեմբեր 1999-ին, Կիրակի օր, իրիկուան ժամերուն, Հայաստանի ազգային հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանը, իր «Օրակարգ» յայտագրին թիրախը ըրած էր, նախկին ներքին գործերու նախարար Վանօ Սիրադեղեանը:

Մենք, Վ. Սիրադեղեանը սիրողը չենք:

27 Փետրուար 1999-ին, «ՆԱՅԻՐԻ»ի մէջ, անոր դէմ, շատ խիստ արտայայտութիւններ ունեցած էինք:

Բայց, Տ. Նաղդալեանին նպատակը ուրիշ էր: Վ. Սիրադեղեանը պատրուակելով, տեւական բանակը քննադատել էր:

Նոյն յայտագրին մէջ Տ. Նաղդալեան, Վ. Սիրադեղեանին տարի մը առաջ Վազգէն Սարգիսեանին գրած մէկ նամակին մասին երկար բարակ խօսելէ յետոյ, այս նամակին մէջ տեղ

գտած մէկ նախադասութեան վրայ ծանրացաւ:

Եւ հեռատեսիլին ամենէն արդիական կարելիութիւններէն օգտուելով, զանազան զօրութեամբ ձայներով, և զանազան մեծութեամբ նկարներով, հետեւեալ նախադասութիւնը կըրկնեց ու կեցաւ՝

«Զանի՞ հոգի մնացինք», «Զանի՞ հոգի մնացինք», «Զանի՞ հոգի մնացինք»:

Այս նախադասութիւնը ոչ մէկ արտակարգ կարելորութիւն ունէր իրականութեան մէջ:

Բայց, Տ. Ն., այս նախադասութիւնը տասը անգամ կրկնելով, անոր խորհրդաւոր իմաստ մը տալ ուզեց: Եւ այս յայտագիրը դիտելէ յետոյ, անկարելի էր չհասկնալ անոր բուն նպատակը:

Վ. Սիրադեղեանը և Վազգէն Սարգիսեանը քով-քովի դնելով, իր հետապնդած նպատակն էր՝

1.— Միտքերը պղտորել, 2.— Վազգէն Սարգիսեանին յիշատակը մրոտել, 3.— Եւ ուշադրութիւնը ուրիշ տեղ կեդրոնացնելով՝ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան տպաւորութիւնը մեղմացնել և հուսկ՝ մոռցնել տալ:

Մեր այս ըսածները անելի հիմնաւորուեցան վերջին օրերուն, Բոջարեանի ըրած սա յայտարարութեամբ՝

«Վանօ Սիրադեղեանի դատաւարութեան յետաձգումները, ժողովուրդին հաւատքը կը խախտեն»:

Բայց ժողովուրդին հաւատքը խախտողը, Վ. Սիրադեղեանին դատաւարութիւնն է, թէ՞ 27 Հոկտեմբեր 1999-ին Հայաստանի հիմքերը ցնցող ողբերգութիւնը, որմէ երկու ամիս յետոյ ալ, մինչեւ այսօր, ոճրին բուն պատասխանատուները դեռ պաշտօնապէս չեն յայտարարուած:

★ ★ ★

Բայց ո՛վ է, իրականութեան մէջ, Հայաստանի ազգային հեռատեսիլին տնօրէն Տիգրան Նաղդալեանը:

Ո՛վ է այս Տիգրանը, որ 27 Հոկտեմբեր 1999-ի դահիճներուն մասին և, մանաւանդ, այս դահիճներուն պարագլուխը եղող Նայիրի Յունանեանի անձնաւորութեան մասին, Հայաստանի ազգային հեռատեսիլէն մանրամասն լրատուութիւն մը չէ կատարած:

Ինչո՞ւ:

Ուրեմն, մեր հաւաքած տեղեկութիւններով, ջանանք բացատրել իր ո՛վ ըլլալը.

1.— Տիգրան Նաղդալեանը 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան պարագլուխ՝ դահիճ Նայիրի Յունանեանին ուսանողական տարիներու ընկերն է:

2.— Ա՛ն է Յունուար 1999-ին, Նայիրի Յունանեանը և իր եղբայրը՝ Կարէն Յունանեանը, իբր Հայաստանի ազգային հեռատեսիլի պաշտօնական ներկայացուցիչներ, թրջական կառավարութեան հետ համաձայնելով Թուրքիա ուղարկողը:

Յունանեան եղբայրները Թուրքիոյ մէջ, իբր Հայաստանի պետութեան հեռատեսիլի ներկայացուցիչներ, ամենաբարձր մակարդակով հիւրասիրուեցան:

3.— Բայց ամենէն խորհրդաւորը և ամենէն ցնցիչը հետեւեալ տուեալն է:

Նայիրի և Կարէն Յունանեաններուն հայրը՝ Հրաչեայ Յունանեան սա վկայութիւնը կատարած է.

«27 Հոկտեմբեր 1999-ի չարաշուք օրը, Նայիրի Յունանեանը և եղբայրը՝ Կարէն Յունանեանը, իրենց տան մէջ, Տիգրան Նաղդալեանին գալուն սպասեր են» [4 Նոյեմբ. 1999-«Ազգ»]:

Այս անհերքելի տուեալները շատ յստակօրէն կը բացայայտեն իր ո՛վ ըլլալը: Բայց մեզի ամենէն շատ ցաւ պատճառողը, հակառակ այս տուեալներուն, Տ. Նաղդալեանին դեռ, մինչեւ այսօր, Հայաստանի Ազգային հեռատեսիլի տնօրէնի պաշտօնին վրայ մնալը և իր տխուր գործունեութիւնը շարունակելն է:

[Շարունակելի]

---

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՈՒՆԿԻՐԵԱՆ**  
**{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}**

---

1 ՅՈՒՆՈՒԱՐ 2000

# ԲԱՐԳԱԻԱՃ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԵՂԾՈՂ ԿԱՐԷՆ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԾ ՈՊԻՔԵՆԵԱՆ]

27-10-1999-ին, դաւանամ դահիճ եղբայրները, Հայկական պետականութեամբ հիմնը խախտեցին:

Բայց մեզի համար ամենէն ցաւալիմ՝ այս դահիճներում դէմ իր ցատունը չյայտնող, այս կատարուած աղէտիմ տարողութիւնը կարծես չհասկցող և անտարբեր մնացող (Հայաստանի և նաև Սփիւռքի) Հայ ժողովուրդիմ մեծամասնութեամբ կեցուածքն է:

Եւ մենք, այս անհատաւորի և գրեթէ կենդանայիմ անտարբերութեամբ դէմ ընդվզելով, պիտի հառաչենք՝ «Հայ» ժողովուրդը, իր մեծամասնութեամբ, «Ազգ» մը չէ. այլ՝ «Ախտ» մը:

Հայաստանի Ազգայիմ ժողովիմ մէջ կատարուած ողբերգութիւնը, իր ապագայ հակազդեցութիւններուն պատճառաւ, 1915-ի եղեռնիմ գրեթէ համազօր աղէտ մըն է:

Հայ ժողովուրդը, իր մեծամասնութեամբ, 1915-ի եղեռնը գրեթէ մոռցաւ: Եւ այսօր, 27-10-1999-իմ կատարուած ողբերգութեամբ դէմ ալ, գրեթէ անտարբեր կը մնայ:

Այս մոռացումը և այս անտարբերութիւնը կ'ապացուցանեն, թէ՛ հայ ժողովուրդը, այսօր, «Ազգ» մը ըլլալու արժանի չէ:

\*\*\*

Հայ Ազգիմ մասիմ մեր յայտնած այս ծանր որակումներուն չհանդուրժող անձներուն, սա բացատրութիւնը տալ կ'ուզենք:

Պիտի խնդրենք, որ իրատեսութեամբ մտաբերելիք վերջիմ շրջաններու հայոց պատմութիւնը:

Երկու հարիւր տարիներէ ի վեր, մեր մէջի երազատեսները և թուլամորթները, անտարբեր պահուեցան, Հայ Ազգիմ ծախուած առաջնորդներուն կողմէ, ամէն տարի քիչ մ'աւելի ճախճախուտի մէջ մխրճուած մնալով:

Այս երազատեսները և թուլամորթները, կապոյտ ակնոցներով դիտեցին կատարուած դաւադրութիւնները:

Փառաբանեցին թուրքիմ ծառաները եղող, Պոլսոյ՝ Ներսէս Վարժապետեան և Մաղաքիա Օրմանեան Պատրիարքները:

Պանծացուցին՝ մեծ տաղանդ, բայց հրեաներուն ծառան եղող, ֆարմասոն դրիգոր Զօհրապը, որ իր թուրքիմ հետ եղբայրութեամբ քաղաքակցութեամբ պատճառաւ, 1915-ի եղեռնիմ առաջնակարգ պատասխանատուներէն մէկն էր:

70 տարիներու տեսողութեամբ, այս երազատես կոյրերը փառաբանեցին Արեւմտեան Հայաստանիմ կորուստիմ մէջ մեծ պատասխանատուութիւն ունեցող 1918-1920 Հայկական կառավարութեան դաշնակցական ղեկավարները:

Կուռքի պէս պաշտեցին Գարեգիմ Նժդեհը, որ Սովետական Հայաստանիմ դէմ 1921-իմ Փետրուարեան ապստամբութեամբ, եղբայրասպան պատերազմի և քսան հազարէ աւելի հայերուն մահուան պատճառ եղաւ:

Այս բարեմիտ կոյրերը, եօթանասուն տարիներու տեսողութեամբ, քաջալերեցին արեւմտեան պետութիւններուն սայլիմ լծուած Հ.Յ.Դ.ի արեւմտամէտ ղեկավարներուն՝ Սովետական Հայաստանը փլցնելու միտող աշխատանքները:

Այս երազատեսները հաւատացին Սի.Այ.Էյ.ի ղեկավարած Միւնիխի Ազատութեան Ռատիոյիմ Սովետական Հայաստանի դէմ կատարած ծարտուքներուն: Եւ Միւնիխի այս «Ազատութեամբ» Ռատիոյի կեդրոնիմ մէջն է, որ ամերիկայէն, եգիպտոսէն, Լիբանանէն եկող ծանօթ կուսակցութեամբ հայանուն ղեկավարները քով քովի կը նստէին՝ Թուրքիայէն եկած թրքական գաղտնի կազմակերպութեամբ՝ «MIT»ի պաշտօնեաները եղող փանթուրքիստներու և նաև Ազերիներու, Չէչէններու և Թաթարներու հետ, և Ամերիկացիներուն ղեկավարութեամբ, միասնաբար ծրագիրներ կը մշակէին Սովետական Միութիւնը և նաև Սովետական Հայաստանը խորտակելու համար:

\*\*\*



Մենք, 1984-էն սկսեալ, այս տեսակէտները կը յայտնենք, մեր սրտին մէջ ունենալով այն մեծ ցաւը, որ Հայ Ազգը մահաւանդ, 1860-ներէն ի վեր, կ'ենթարկուի անվերջանալի ողբերգութիւններու:

Այստեղ, այժմէական կը նկատենք նշել՝ Ապրիլ 1985-ին հրատարակուած «Ռուբէն Սեւակ Եւ Փրցուելիք Ուղեղներ» մեր գրքին յառաջաբանին մէջ գրուած սա տողերը.

«Այս գիրքը կը ծօնենք՝ անունով հայ, այն կեղծ ազգասէր առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը՝ 24 Ապրիլ 1915-ին յանգեցաւ:

Այս գիրքը կը ծօնենք՝ անունով հայ, Սփիւռքի այն կեղծ ազգասէր առաջնորդներուն, որոնց սխալ քաղաքականութիւնը՝ նոր 24 Ապրիլներու կրնայ յանգիլ:

Մաղթենք, որ պատմութիւնը կրկնութիւն է - ըսուած կարգախօսը հայ Ազգին համար չիրականանայ:

Այ կը բաւէ Հայ Ազգին կրած տառապանքը»:

Դժբախտաբար պատմութիւնը կրկնութիւն է ըսուած կարգախօսը իրականացաւ, և ծանօթ կուսակցութեան ղեկավարներուն 70 տարիներ տեսող Սովետական Հայաստանի ժողովուրդը մոլորեցնելու աշխատանքները, իր արդիւնքները տուին, և 1989-էն սկսեալ Լեւոն Տէր Պետրոսեանի առաջնորդութեամբ «Ղարաբաղեան Կոմիտէ» ըսուած խմբակը՝ «ազատութեան» սուտ լրզուներով յաջողեցաւ խաբել Հայաստանի ժողովուրդը:

Հայաստանի մէջ, 1989-ներէն սկսեալ, միլիոնի հասնող հայ զանգուածները, երեսնի մայր հրապարակին վրայ հաւաքուեցան: Նախ, Ղարաբաղի ազատութեան համար կատարուած այս հաւաքոյթները, միջոց մը ետք, Սովետական Միութեան դէմ և Հայաստանի անկախութեան համար ցոյցերու վերածուեցան:

Եւ «Ղարաբաղի Կոմիտէ» ըսուած Տօճ Զիշտները, այս ցուցարարներուն ներկայացուցած ուժէն օգտուելով, ի վերջոյ քանդեցին բարգաւաճ Հայաստանը:

Եւ 1991-ին «Ազատ, Անկախ Հայաստան» հռչակուեցաւ:

Եւ այդ օրէն սկսաւ Հայաստանի ժողովուրդին դժոխային ներկայ կեանքը:

1989-ներէն սկսեալ Ռուսերուն դէմ ցոյցեր ընող հայ ժողովուրդին ապերախտ հատուածները, անկախութենէն միջոց մը ետք, հասկնալ սկսած էին արդէն, Ռուսական ներկայութեան և Ռուսական օգնութեան արժէքը:

Եւ ժողովուրդին մէջ համայնավար շրջանին հանդէպ զգացուած կարօտը, շատ ակներև էր:

Բայց չարիքը ա՛լ կատարուած էր. եւ նախկին վարչաձեւը ետ բերել այլևս անկարելի էր:

Եւ Հայաստանի այս դժբախտութեան մեծ պատասխանատուն՝ Լեւոն Տէր

Պետրոսեանը, Ամերիկացիներուն դրդումով, Ղարաբաղը Ազերիներուն ետ տալով Ամերիկեան օգնութիւնը ապահովել ուզեց:

Բայց Ղարաբաղի պատերազմին հերոսը, Հայաստանի բանակը կերտող պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգիսեանը, արգելք եղաւ այս սադրանքին, և Լեւոն Տէր Պետրոսեանին ստիպեց որ հրաժարի:

Եւ Վազգէն Սարգիսեան, իբր իսկական հայրենասէր ղեկավար, տեսաւ իրականութիւնը, տեսաւ կատարուած սխալները, և մանաւանդ՝ տեսաւ Ռուսական կողմնորոշման կենսական կարեւորութիւնը:

Եւ ան, Հայաստանին ներկայ անելէն դուրս գալուն միակ ճարը՝ Հայ Ազգի միասնականութեան մէջ գտնուելուն համոզուեցաւ: Եւ այդ պատճառաւ ալ, բարգաւաճ Սովետական Հայաստանը կերտող Կարէն Դեմիրճեանին հետ միասին, ստեղծեց Հայ Ազգի փրկարար՝ «Միասնութեան Դաշինքը»:

Եւ մենք անձնապէս կը հաւատանք, որ Վազգէն Սարգիսեանը և Կարէն Տեմիրճեանը՝ Հայ Ազգի մէջ այս միասնութեան ոգին ստեղծած ըլլալուն պատճառաւ, Հայ Ազգի թշնամիներուն սաղրանքներով սպաննուեցան:

\*\*\*

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն ամիս մը յետոյ, մասնագէտ հոգեբան մը, բանտին մէջ կը տեսակցի Նայիրի Յունանեանին հետ:

Դահիճ դաւաճանը; պատասխանելով հոգեբանին հարցումներուն, կ'ըսէ թէ՛ «Զի գղջար իր ըրածին; և ցաւ կը յայտնէ, թէ չէ կրցած ամբողջովին մաքրագործել «արին ծծողներու» վարչակարգը»:

Այս յոխորտանքը՝ արդիւնքն է՝ իր ետեւը գտնուող տեսանելի և անտեսանելի ուժերուն և մանաւանդ՝ նախագահութեան կողմէ անոնց տուած (ոճրագործներու յանձնուելու պահուն) երաշխիքին, թէ իրենց որևէ ձեռով վնաս պիտի չհասցուի:

Այս ամբարտաւան արտայայտութիւնը արդիւնքն է՝ Հայ ժողովուրդին այս դահիճներուն կատարած ողբերգութեան հանդէպ ցուցաբերած անտարբերութեան:

Նայիրի Յունանեանին այս արտայայտութիւնը՝ յար և նման նոյն տրամաբանութիւնն է, նոյն կեցուածքն է ցեղասպան թուրքերուն, որոնք, մինչև հիմա, անպատիժ մնալուն պատճառաւ, կը շարունակեն Հայ Ազգի դէմ ցեղասպանութիւններ կատարել:

Այս «արին ծծողներու» վարչակարգը ամբողջութեամբ մաքրել ուզող դահիճը, իրականութեան մէջ 1991-ին, Հայաստանի համայնավար իշխանութիւնը տապալող, այսօրուան «ազատութեան» վարչակարգին գործի գլուխ գալուն պատճառ եղող պարագլուխներէն մէկն է:

Նայիրի Յունանեանն է Հայաստանի «սկաուտական» շարժման հիմնադիրներէն մէկը:

Ան է՝ իբր համալսարանական, Հայաստանի ուսանողական միութեան հիմնադիր - նախագահներէն մէկը:

Ան է՝ 1989-էն Երեւանի մէջ, հակահամայնավար ուսանողական ցոյցերը կազմակերպողներէն մէկը:

Ան է՝ համալսարանական դասադուլները կազմակերպողը:

Ան է՝ Երեւանի Օբերայի համալիրին առջև ուսանողական հացադուլները կազմակերպողը:

Նայիրի Յունացեանն էր, իր կազմակերպած ուսանողական ցոյցերով, այսօրուան «ազատութեան» վարչակարգին՝ գործի գլուխ գալը ուզողը:

Այսօր, ժողովուրդին անօթի ըլլալէն գանգատող Ն. Յունացեանը, ուսանողական ցոյցերը կազմակերպած ատեն ինչո՞ւ չմտածեց, թէ համայնավար վարչաձեւը տապալելէ և Ռուսերը վճռելէ ետք, ինչպէ՞ս պիտի կարենար ապրիլ Հայաստանի ժողովուրդը:

Նոր կառավարութիւնը ո՞րպէ պիտի գտներ պետութեան ընթացիկ ծախսերուն դրամը:

Այս Յունացեանը չէ՞ր գիտեր, թէ Հայաստանի հողերը՝ իր բնակչութեան միայն հարիւրիկն քսանըհինգը կրնային կշտացնել:

Բայց, 70 տարիներու համայնավար իշխանութեան շրջանին, Ռուսերուն օգնութեան շնորհիւ, Հայ ժողովուրդը երբեք անօթի չէր մնացած:

Այս «Տօն Զիշօդ»-դահիճը շատ լաւ գիտէր այս իրականութիւնները...: Ան՝ հակահամայնավար ցոյցեր կատարող հարիւր հազարաւոր «Ազատութեան» սիրահար հայերուն նման, Հայաստանի ազատ-անկախ ըլլալէն միջոց մը ետք, խոյս կու տայ Հայաստանէն և իր ընտանիքին հետ Խրիմ կը հաստատուի:

Եւ Խրիմի մէջ, ան՝ տասը տոլար ամսականով ուսուցչութիւն ըրած շրջանին, Յիսուսին՝ հացը և ձուկը բազմացնելուն նման հրաշքով մը, այս տասը տոլար ամսականով, երկյարկանի շքեղ տուն մը կառուցանել կը յաջողի:

Եւ ամենէն կարելորդ՝ Խրիմի մէջ շատ ազդեցիկ անձնաւորութիւններու հետ կապեր կը հաստատէ, որոնց շրջանակին մէջ սովորական բաներ էին՝ պատուէրով սպաննութիւնները, կրակոցները, պայթիւնները և ոճրային արարքները...՝

Խրիմի մէջ ամէն տեսակ «փորձառութիւն»ներու տիրացող Յունացեան, 1997-ին Հայաստան կը վերադառնայ:

Եւ ինչո՞ւ և ինչպէ՞ս, չենք գիտեր- թուրքիոյ հետ և թուրք գործի մարդոց հետ կապեր կը հաստատէ:

Եւ վերջապէս՝ Յունուար 1999-ին, Հայաստանի Պետական Հեռատեսիլին կողմէ, իբր պաշտօնական ներկայացուցիչ թուրքիա կը դրկուի:

Եւ այս անգամ յստակօրէն կրնանք ըսել թէ՛ թուրքերը շատ որոշ պատուէրներով և նպատակներով, թուրք նախարարներ և մանաւանդ թուրքիոյ Արտաքին Գործերու Նախարար հրեայ Իսմայիլ Ճեմ՝ Յունացեանին հետ տեսեկցութիւններ կը կատարեն...:

Յունացեանի Հայաստան վերադառնալէն յետոյ, ողբերգութեան «սենարիօ»ն ամենափոքր մանրամասնութիւններով կը պատրաստուի:

Յետոյ, կը սպասեն աշնան ամիսներուն, որ ջերմութիւնը իջնէ:

Միայն պաղ օրերուն կրնան երկար վերարկուներ հագնիլ, որ գնդացիները վերարկուներուն տակը պահելով, առանց ուշադրութիւն գրաւելու, Ազգային Ժողով կարենան մտնել:

Եւ իրենց ունեցած՝ լրագրողներու յատուկ հրաւիրատոմսերով, կը յաջողին Ազգային ժողով մտնել:

Գիտեն, որ նոյն այդ օրը, Վազգէն Սարգիսեանին պաշտպանին արձակուրդի օրն է:

(Ուրիշ շատ յատկանշական պարագայ մը՝ Անվտանգութեան Նախարար Սերժ Սարգիսեանը, այդ օր Ղարաբաղ գացած է: Ի՞նչ կը կարծէք. անոր բացակայութիւնը դիպո՞ւած էր, թէ՞ կանխատեսածուած եղելութիւն):

Իրենց պատուիրուած առաջին պարտականութիւնը՝ Վազգէն Սարգիսեանը սպաննել է: Գնդացիներու հարուածներով կը նահատակեն հայոց սպարապետը:

Յետոյ կը սպաննեն Կարէն Տեմիրճեանը. եւ նաև՝ վեց նախարար և երեսփոխաններ, բոլորն ալ «միասնութեան դաշինք»ին անդամները են:

Վազգէն Սարգիսեանը սպաննելէ ետք, Նայիրի Յունացեանը «սելիւեր» հեռաձայնով իրենց մեծաւորին կը զանգէ՝ «Վօրուսաւոր»ը սպաննեցիճք. բոլորն ալ մեր ձեռքն են. շուտ հասէք»:

(Օտքը տես՝ էջ 11)

ԲԱՐԳԱԻԱՃ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԵՂԾՈՂ ... (Շար. էջ 2-էն)

Եւ ո՞վ է Ն. Յունանեանին հեռաձայնած անձնատրութիւնը՝ ծանօթ կուսակցութեան մը գերագոյն մարմնի անդամ Հ. Մարգարեանը:

Բայց, Նայիրի Յունանեանին սպասած անձնատրութիւններէն ոչ մէկը չի գար: Այս ողբերգութիւնը պատուիրողներուն համար՝ բաւ էր Վազգէն Սարգիսեանին և Կարէն Տեմիրճեանին մէջտեղէն վերանայլ:

Անոնց սպանութիւններէն յետոյ, մէջտեղ եկող «քառս»ով, արդէն ամէն բան՝ այս «Պատուիրողներուն» ուզածին պէս պիտի ընթանայ:

\*\*\*

Այստեղ ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք, բացառիկ նմանութեան մը վրայ:

Պատմութիւնը՝ կրկնութիւն է –կ'ըսուի: Այո, 27-10-1999-ին, պատմութիւնը կրկնուեցաւ:

15 Յուլիս 1983-ին, Ամերիկացի Սոնթ Մելքոնեան՝ Պէյրութի շրջակայքը գործուած դաւադիր յարձակումով մը, Հայկական Գաղտնի Բանակին հիմերը խախտեց: Եւ քանի մը տարիներ վերջ, Աթէնքի մէջ, չարաշուք օր մը, Հայաստանի ազատագրութեան Հայկական Գաղտնի Բանակին հիմնադիրը, անգուգական ղեկավարը՝ Յակոբ Յակոբեանը, կրկին Սոնթ Մելքոնեանին մաս կազմած գործակալութեան կողմէ նահատակուեցաւ:

Եւ 27-10-1999-ին, Երեւանի Ազգային Ժողովին մէջ, դաւաճան դահիճներ Յունանեան եղբայրներուն կողմէ նահատակուեցան՝ Հայոց Սպարապատ Վազգէն Սարգիսեանը, Ազգային Ժողովի նախագահ՝ Կարէն Տեմիրճեանը և վեց նախարար և երեսփոխաններ:

Եւ մենք, խոր համոզումով կը հաւատանք, որ 1983-ին և 1999-ին կատարուած այս երկու դաւադրութիւնները, թէև հայոց ձեռքերով գործադրուեցան, բայց Թուրք-Հրեայ-Ամերիկեան գաղտնի կազմակերպութիւններու կողմէ ծրագրուած էին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}

Երեքշաբթի 11 Յունուար 2000

**«Ո՛Չ, Կ՛ՐԱՍԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ  
ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ»**  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՌՐԷՆԵԱՆ]

Ֆրանսայի ազգայնական Կուսակցութեան «FRONT NATIONAL»-ի նախագահը «JEAN MARIE LE PEN»-ին պաշտօնաթերթը եղող «NATIONAL»-ի 16.12.1999-ի թիվն առաջին էջը, ամբողջութեամբ յատկացուած էր «NON AUX TURCS EN EUROPE» նախադասութեան:

10 Դեկտեմբեր 1999-ին, Հելսինքիի մէջ, թուրքերուն Եւրոպական միութեան իբր թեկնածու ընդունուելուն դէմ, ընդվզումի արտայայտութիւն էր այս գրութիւնը:

Եւրոպական բոլոր հայրենասէր և ազգայնական շրջանակները, թուրքերուն այս թեկնածութեան դէմ բողոքեցին և իրենց մտահոգութիւնը յայտնեցին:

Բայց, թուրքերուն «Եւրոպական միութեան» մէջ ներմուծումի այս առաջին քայլը՝ Սիոնիստներուն հարիւր տարիներ առաջ որոշուած ծրագիրներուն մաս կը կազմէր:

Եւ այս իրականութեան մասին՝ հանրութեան մեծամասնութիւնը բնաւ գաղափար չունէր:

Այս ձեւով «Թուրքիա» ըսուած ցեղասպան աւազակներուն հիմնած այս պետութիւնը, Սիոնիստներու կարգադրութեամբ, «Եւրոպացի» նկատուելու ճամբուն մէջ մտաւ:

Բայց, առանց տատամսելու և խոր համոզումով ըսենք, թէ՛ Թուրքերը այս «յաջողութիւնը» կը պարտին, մեծ մասամբ, հայերուն: Այո՛ հայերուն: Մի՛ զարմանաք:

Թուրքիան՝ 1860-թ.ներուն քայքայուելու դատապարտուած պետութիւն մըն էր: Բայց հայերը նպաստեցին, կամայ-ակամայ՝ անոր ոտքի կանգնելուն:

Եւ Թուրքերը, իբր «Վարձատրութիւն», ցեղասպանութեան ենթարկեցին հայերը:

1914-1918-ի պատերազմի վերջաւորութեան, «Թուրքիա» ըսուած պետութիւն մը գրեթէ չէր մնացած:

Բայց, շնորհիւ 1918-1920 Հայաստանի պետութեան հակա-Սովետական քաղաքականութեան, Զեմալական թուրքերը, Սովետներուն թիկունքով, [խաբելով Մոսկուան որ իբր թէ իրենց կայսերապաշտ Արեւմուտքին դէմ են], կրկին պետութիւն եղան:

Եւ այս Թուրք պետութիւնը մինչեւ 1988-ը, իր գլխուն վրայ ունէր, 1915-ին իրենց կատարած հայկական ցեղասպանութեան պատճառաւ պատժուելու վտանգը:

Բայց, հայերուն ապիկարութեան և անմիաբանութեան պատճառաւ, աշխարհի մէջ նմանը չեղող այս ողբերգութիւնը՝ 1915-ին թուրքերուն, հայերուն դէմ կատարած ցեղասպանութիւնը, անպատիժ մնաց:

Եւ 1988-ին «Հրաշք» մը պատահեցաւ:

*National*

**NON**

**AUX TURCS  
EN EUROPE !**



Եւ Թուրքերը, այդ տարիէն սկսեալ, մասամբ փրկուեցան հայկական ցեղասպանութեան պատճառաւ պատժուելու վտանգէն: Ի՞նչ էր այս հրաշքը:

Ասիկա, հայերուն, օտարներուն ալ ներշնչումով, ստեղծած մէկ հնարքն էր: Հայերը 1988-էն սկսեալ, ստեղծեցին «Ղարաբաղ»ի խնդիրը:

Եւ «Ղարաբաղ»ին պատճառաւ հայերը մոռցան 1915-ի ցեղասպանութիւնը: Մոռցան Արեւմտեան Հայաստանի կորուստը: Եւ մխրճուեցան «Ղարաբաղ»ի ճախճախուտին մէջ:

Եւ 1988-էն սկսեալ, այս ցեղասպան անազակներու պետութիւնը՝ Թուրքիան, ինքզինքին քաղաքակիրթ պետութեան «հովերը» տալով, Սիոնիստներուն թիկունքով, 10 Դեկտեմբեր 1999-ին, յաջողեցաւ «Եւրոպական Միութեան» թեկնածու ըլլալ:

\*\*\*

Հայաստանին, 1988-թ.ներէն սկսեալ մինչեւ այսօր ենթարկուած անվերջաճախի ողբերգութիւններուն, առաջնակարգ պատասխանատուներէն մէկն է Տօն-քիշօտ Զօրի Բալայեանը:

Ան՝ «Ղարաբաղի» անջատումի և անկախութեան անիրագործելի հոսանքը ստեղծողներէն մէկը ըլլալով, ամբողջ Հայաստանին կործանման վտանգին ենթարկուելուն պատճառ եղաւ:

Վերի տողերուն մէջ, «Ղարաբաղի» հարցին համար՝ «Անիրագործելի անջատումի և անկախութեան հոսանքը» ըսինք:

1988-թ.ներէն սկսեալ «Ղարաբաղի» հարցին՝ անիրագործելի և վտանգատր ըլլալուն մասին մեր գրածները այստեղ նշելը՝ այժմէական և օգտակար կը նկատենք: ԱՊՐԻԼ 1998-«ՆԱՅԻՐԻ»...

«...Եւ քանի մը շաբաթներ առաջ, Հայաստանի Հանրապետութեան նախագահը՝ Լեւոն Տէր Պետրոսեանը իր պաշտօնէն հրաժարեցաւ:

Ինչո՞ւ... Ղարաբաղի հարցին պատճառաւ:

Որովհետեւ հանրապետութեան նախագահը այսօր հասկցեր է, թէ Հայաստանին դժոխային վիճակի մատուցելուն պատճառը՝ նոյնինքն իր և իր ընկերներուն ստեղծած «Ղարաբաղի խնդիրն է»:

Ուրեմն, Ղարաբաղի հարցին լուծում մը տալ պէտք է: Այսինքն՝ ամերիկացիներուն և թուրքերուն պարտադրած ձեւով՝ Ղարաբաղը Ազերիներուն ետ տալ, և Ազերիներուն լայն ինքնավարութեան խոստումով ալ գոհանալու է հայութիւնը:

Բնական է, որ նախագահին հարիւր ութսուն աստիճանի դիմաշրջումով փոխուած այս առաջարկին ներկայացման հակազդեցութիւնը, համաժողովրդական ընդվզումը եղաւ և նախագահը, ի տես իր քաղաքականութեան սնանկանալուն՝ ստիպուած հրաժարեցաւ:

Չենք գիտեր, թէ հայկական պատմութեան մէջ, այս նախագահին ստեղծած քաղաքական վերիվայրումին նման ուրիշ դիմաշրջում, ողբալի դէպքեր պատահած են թէ ոչ:

Նախ՝ Ղարաբաղի խնդիրը ստեղծելով, ան քանդեց Ս. Հայաստանը: Յետոյ՝ ուրիշ տարիներ ետք, Հայաստանը անելէն դուրս բերելու համար, Ղարաբաղը ետ տալու ելաւ:

Բայց, մեզի համար, ամէնէն կարեւորը՝ 1988-էն մինչեւ 1998, Հայաստանը և Հայութիւնը Ղարաբաղի խնդրով ան զբաղցուց և մոռցնել տուաւ՝ հարիւրյիսուն տարիներէ ի վեր, մինչեւ 1988 համայն հայութեան մղած պայքարը, Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան դատը: Եւ «Գրիգոր Զօհրապ»եան տխմար քաղաքականութեամբ, թուրքերուն հետ բարեկամական կապեր ստեղծել ուզեց:

Ուրը տարի, Ազատ Անկախ Հայաստանի Նախագահը, ոչ մէկ ձեւով Արեւ-

մըտեան Հայաստանի դատը բերանը առաւ:

Եւ մեր հարիւրյիսուն տարուան պայքարը, միլիոններու արիւնով շաղախուած Հայաստանը, հայուն բուն հայրենիքը ազատագրելու դատը, նախագահին տարած թրքասէր քաղաքականութեան պատճառաւ մոռցուեցաւ:

Եւ այս ողբալի քաղաքականութեան պատճառաւ այսօր, թէ՛ Արցախին և թէ՛ Երևանի Հայաստանին գոյութիւնը վտանգի ենթարկուած է:

Հիմա մենք, ձեզի հարց մը տալ կ'ուզենք- դիպուած էր, որ Ղարաբաղի հարցին ստեղծումով, Արեւմտեան Հայաստանի դատը և 1915-ի Եղեռնը մոռցուեցան:

Ոչ, բացարձակապէս դիպուած չէր:

Տարիներէ ի վեր, Սիոնիստ Արեւմտեան պետութիւնները մեզի՝ Եղեռնը և Արեւմտեան Հայաստանի դատը մոռնալ և Թուրքերուն հետ հաշտուիլ կը յանձնարարէին: Եւ դե՛ռ կ'առաջարկեն այսօր:

Ղարաբաղի հարցին հրահրուելուն պատճառը, մեր համոզումով՝ Եղեռնը և Արեւմտեան Հայաստանի դատը մոռցնել տալու համար էր:

\*\*\*

Մեզմէ շատերուն յիշողութեան մէջ է դեռ...

Երբ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակին հերոսները, 1973-էն մինչեւ 1983 տարիները, աշխարհի չորս ծագերուն, Թուրք դիւանագէտներ կ'ահաբեկէին, Արեւմտեան պետութիւնները շատ դժուար վիճակի մատնուեցան:

Եւ շարժումին արգելք ըլլալու համար, շատ մեծածախս միջոցներ ձեռք առնել սկսան:

Բայց այս վիճակին երկարաձգուիլը, իրենց համար անհանդուրժելի պիտի ըլլար:

Եւ այս «Փորձանք»էն ազատուելու համար, ամէն միջոցի դիմեցին: Արեւմտեան պետութիւններուն մէկ մասը կ'առաջարկէր թուրքերուն, որ հայկական ցեղասպանութիւնը ընդունին իսկ մէկ ուրիշ մասն ալ կը յանձնարարէր հայերուն, որ Թուրքերուն հետ բանակցութեան մտնեն: Նոյնիսկ Վատիկանի Գահակալը՝ «Բոլոնացի» JEAN PAUL II հայերուն խրատ կու տար ըսելով՝ «Քրիստոնէական ոգիով ներել Թուրքերուն, մոռնալ Եղեռնը»:



Տարիներ վերջ, Սիոնիստ Արեւմտեան պետութիւնները յաջողեցան, իրենց «Տրովադայի ծի»-ն՝ Մոնթէ Մելքոնեանը ներմուծել Հայ Գաղտնի Բանակին մէջ:

Եւ այս ձեւով յաջողեցան Հ.Գ.Բ.ը պառակտել, բաժան-բաժան ընել և հուսկ՝ կազմակերպութիւնը խորտակել:

Սիոնիստները Հ.Գ.Բ.ը խորտակելէ միջոց մը ետք, հայկական եղեռնի պատասխանատուութեան միանգամընդմիջտ ազատելու համար, հրահրեցին «Ղարաբաղի հարցը»:

Այսօր, կը յիշենք այն ցաւալի օրերը, երբ 1988-ին, Հայաստանի ժողովուրդը, Երեւանի մայր հրապարակին վրայ, միլիոնի հասնող զանգուածներով ցոյցեր կ'ընէին «Ղարաբաղի անջատման, ազատութեան և Հայաստանի միացման» համար: Եւ այս ցոյցերուն ազդեցութեամբ Փետրուար 1989-ին, Պէյրութի «Արարատ»-ի մէջ, հետեւեալ տողերը հրատարակե-

ցինք. «Մեր տեսակէտը այն է, որ Ղարաբաղի հարցին մէջ, մեր ժողովուրդը սխալ ճամբայ ընտրեց:

Ղարաբաղը համեմատաբար երկրորդական ցաւ է, բուն ցաւը՝ Արեւմտեան Հայաստանի կորուստին ցաւն է. Յաւը այն ժողովուրդին, որ այսօր, «Սփիւռք» կը կոչենք: Ասոր պատկանող Արեւմտեան Հայաստանի կորուստին ցաւն է:

Այսօր, Հայաստանի հայութիւնը, այլեւս չի խօսիր Վանի, Մուշի, Սասունի մասին, չի խօսիր ցեղասպանութեան մասին: Ի մեծ ուրախութիւն թուրքին:

Մոռցուած է թուրքիոյ կողմէ գողցուած Արեւմտեան Հայաստանը և կը խօսւի միայն Ղարաբաղի մասին:

Ղարաբաղի հարցին մէջ, ցաւով կը տեսնենք, որ հայ ժողովուրդը սխալ քաղաքականութեամբ կ'առաջնորդուի և դէպի արկածախնդրութեան կ'երթայ:

Հայաստանի և Սփիւռքի մէջ, Ղարաբաղի ազատագրութեան համար Սովետներուն դէմ կատարուած ցոյցերը, մեզ լաւ տեղ չեն հասցներ:

Ղարաբաղի հարցին լուծումը, միայն և միայն, թուրքին ցեղասպանութեան յանցանքով դատապարտուելովը կարելի կ'ըլլայ:

Ղարաբաղի հարցին լուծումը Մոսկուայէն չ'անցնիր, այլ՝ կ'անցնի Անգարայէն: Անգարան է Ազերիներուն «Ջարդի ուսուցիչ»ը:

Երբ ցեղասպան թուրքերը չեն պատժուած, 1915-ի Հայկական եղեռնի յանցագործութեամբ, թուրքին եղբայրները եղող Ազերիները, առիթ գտնելու առաջին վայրկեանին իսկ, թուրքին ըրածները պիտի ընեն և պիտի ջարդեն հայերը:

Եթէ Ղարաբաղի ազատութիւնը կ'ուզէք, Սովետներուն դէմ ցոյց ընելու տեղ, գացէք թրքական դեսպանատուններուն առջև ցոյց ըրէք, պահանջելով 1915-ի ցեղասպանութեան համար թուրքերուն պատժուիլը և Արեւմտեան Հայաստանին, Ղարաբաղին և Նախիջեւանին հայոց վերադարձուիլը:

Այս է միակ ճամբան մեր յաջողութեան»:

\*\*\*

Մեր վերջին գրութեան մէջ, Ամերիկացի Մոնթէ Մելքոնեանին և Նայիրի Յունանեանին կատարած դաւաճանական արարքներուն նմանութեանը մասին արտայայտուած էինք:

Այս դահիճներէն Մոնթէ Մելքոնեան, Հայ Գաղտնի Բանակը քանդեց, և անոր հիմնադիրը, ղեկավարը եղող Յակոբ Յակոբեանին սպանուելուն պատճառ եղաւ:

Միւս դահիճը՝ Նայիրի Յունանեանը, հայկական պետականութեան հիմերը խախտեց, և հայկական բանակին ստեղծիչը եղող Սպարապետ Վազգէն Սարգիսեանը սպանցեց:

Այս երկու դահիճներն ալ, իրենց կատարած արարքները արդարացնելու համար, ամենէն ծայրայեղ զրպարտութիւնները կատարեցին նահատակներուն դէմ:

Ամերիկացի Մոնթէ Մելքոնեանը, ղեկավար Յակոբ Յակոբեանին համար՝ «Մարդասպան թերորիստ» ըսաւ, և ամենածանր անարգանքը կատարեց հերոս նահատակին դէմ:

Այստեղ պիտի հրապարակենք Մոնթէ Մելքոնեանին՝ Հայ Գաղտնի Բանակին մեծ հերոսներէն՝ Վարուժան Կարապետեանին դէմ կատարած անխիղճ զրպարտութիւնները: Այն հերոս Վարուժան Կարապետեանին դէմ, որ գրեթէ տասնընթեք տարիներէ ի վեր, Ֆրանսայի մէջ բանտարկութեան լուծին ենթարկուած է՝ հերոսաբար իր վրայ առած ըլլալուն պատճառաւ, ORLY-ի օդակայանին մէջ կատարուած ահաբեկչութեան ամբողջ պատասխանատուութիւնը: Այն հերոս Վարուժան Կարապետեանին դէմ, որուն ի նպաստ, Հայաստանի ժողովուրդը, մէկ միլիոնէ աւելի ստորագրութիւն հաւաքեց, զինք բանտէն ազատելու համար: (Մար.ը տես՝ էջ 11)

**«Ո՛Չ, Կ՛ՐԱՍԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ... (Շար. էջ 2-էն)**

Մենք անհերքելի և շօշափելի փաստը ունինք մեր ձեռքը, Մոնթե Մելքոնեանին՝ Կարուժան Կարապետեանին դեմ կատարած հետեւեալ գրպարտութիւններուն... «Կարուժան Կարապետեանը՝ անմեղներ սպանող մարդասպան մըն է» : «Ան՝ անխիղճ ահաբեկիչ մըն է» , «Կարուժան Կարապետեանը՝ կատաղի մէկ թշնամին է, մեր պայքարին դեմ» : «Ան՝ Թուրք EVREN-էն և OZAL-էն շատ անելիւն ըրաւ, մեր պայքարը բնաջնջելու համար» :

Ամերիկացի Մոնթե Մելքոնեանին խօսքերուն մէջ, բացայայտօրէն կը ցուանայ այն ատելութիւնը, որ ունի ան, Հայ Գաղտնի Բանակին դեմ : Ան՝ հայուն թշնամիներէն պաշտօն ստացած էր, այս բանակը խորտակելու :

Մոնթե Մելքոնեանին, իրեն տրուած պարտականութիւնը կատարելէ յետոյ, «Ղարաբաղ» երթալով հոն «Ղարաբաղի» պայքարին որպէս թէ աջակցիլը՝ մեծագոյն ապացոյցներէն մէկն է, որ հայուն թշնամիները՝ Գաղտնի Բանակը խորտակելով, ուզեցին հայերուն Արեւմտեան Հայաստանին համար տարած պայքարին վերջ տալ, և ասոր համար ալ ստեղծեցին «Ղարաբաղի հարցը» և բոլոր հայերուն ուշադրութիւնը Ղարաբաղի վրայ կեդրոնացուցին :

\*\*\*

Նայիրի Յունացեանն ալ, Մոնթե Մելքոնեանին Գաղտնի Բանակին դեմ ունեցած դահճական ատելութեամբ լեցուած է, Հայաստանի այսօրուան բանակը ստեղծող Սպարապետ Վազգէն Սարգիսեանին դեմ :

Եւ Նայիրի Յունացեանը, Վազգէն Սարգիսեանը չսպաննած, անոր հետեւեալ գրպարտութիւնը կ'ընէ՝

*«Բաւական է: Տասը տարի խմել էք ժողովուրդի արիւնը» :*

Այս դահիճը, 1988-էն սկսեալ, Երեւանի մայր հրապարակին վրայ, Սովետական վարչաձեւին դեմ ցոյցեր կազմակերպած ատենը, չէ՞ր գիտեր, թէ իր ուզած «ազատութեան» վարչաձեւը՝ հարուստը շատ հարուստ, աղքատը շատ աղքատի վերածող ու երկիրը Արեւմուտքին ենթարկող ազատ շուկայի վարչաձեւ մըն է :

Եւ բոլոր Արեւմտեան երկիրներուն մէջ, շատ մը պետական անձնատրութիւններու դեմ, սկսելով Զլինթընէ, Շիրաքէ, Զոհլէ, Պերլուսքոնիէ՝ և դեռ շատ շատերու դեմ չարաշահման ամբաստանութիւններ կան : Բայց, ոչ մէկ քաղաքակիրթ երկրի մէջ, այս մեղքին համար սպանութիւն չի կատարուիր :

Այս տեսակ սպանութիւնները Ափրիկեան «Եամ-Եամ»ներու երկիրներուն յատուկ սովորութիւն մըն է : Եւ դահիճ Նայիրի Յունացեանը, իր կատարած հրէշային ոճրագործութեամբ՝ Հայաստանը «Եամ-Եամ»ներու երկրի մը վերածեց :

Եւ քաղաքակիրթ և բարձր մշակոյթի տէր երկիր մը նկատուած Հայաստանը՝ այսօր, բոլոր վտանգաւոր հոսանքներուն դեմ յանդիման գտնուող անպաշտպան թիրախ մըն է :

Ա՛յս է դահիճ, դաւաճա՛ն Նայիրի Յունացեանին կատարած ամենէն մեծ չարիքը, մեր վերջին յոյսը եղող Հայաստանին դեմ : (Շարունակելի)

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
**{ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ}**

Երեքշաբթի 25 Յունուար 2000

**ՄՈՆՔԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ = ՆԱՅԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ**

ԱՅՍ ԴԱՀԻՃԸ՝ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻՆ ՀԻՄԵՐԸ ԽԱՄՏԵՅ ԵՒ ԱՆՈՐ ՀԻՄՆԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐ ՅԱԿՈԲ ՅԱՎՈՐԲԵԱՆԸ ՍԴԱՆՆԵԼ ՏՈՒԱԻ

ԱՅՍ ԴԱՀԻՃԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄԵՐԸ ԽԱՄՏԵՅ ԵՒ ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԴԻՐ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶԳԷՆ ՍԱՐԳԻՍԵԱՆԸ ՍԴԱՆՆԵՑ

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԷԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ)**

Սեզի համար Մոնթե Մելքոնեանը և Նայիրի Յունանեանը՝ Հայ ազգին թշնամի, Աշխարհակալ Արեւմտեան Կազմակերպութեան գործակալներն են:

Այս Արեւմտեան Կազմակերպութիւնը օգտուեցաւ 1983-ին, Պէյրութի մէջ, Մոնթե Մելքոնեանին Հայ Գաղտնի Բանակը կործանելու փորձառութեանը և նոյն թեւով, 27 Հոկտեմբեր 1999-ին, Նայիրի Յունանեանին կատարել տուաւ, Ազգային ժողովին մէջ, անակնկալ գազանային յարձակումը:

Այս երկու դահիճներուն ալ թիրախը՝ հայկական բանակը և այս բանակին հիմնադիր-ղեկավարներն էին:

Այսինքն՝ Ազգի մը «ԳՈՅՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԻԶԸ»-ն էր թիրախը:

Հայ ազգին սիրտը եղող՝ «Հայկական Բանակը խորտակել» էր բուն նպատակը:

Եւ այս էր, հայուն թշնամիներուն, անոնց տուած հրամանը:

Ասոնք, իրենց տրուած հրահանգը գործադրելէ յետոյ, ինքզինքնին արդարաքրնելու համար, ըրին վերագրումներ, որոնք, իրենց բուն նպատակը քօղարկելու ծառայող յերկրածոյ ամբաստանութիւններ են:

Մոնթե Մելքոնեանին, Յակոբ Յակոբեանը «մարդասպան թեռորիստ» որակելը, իսկ Նայիրի Յունանեանին ալ Վազգէն Սարգիսեանին համար «տասը տարի խմել էք ժողովուրդի արիւնը» ըսելը, պարզապէս «թատրոն» են:

Այս ամբաստանութիւնները Արեւմտեան աշխարհակալ ոճրային կազմակերպութեան պատրաստած «սենարիօ»-ին մաս կը կազմեն:

Հայուն թշնամի արեւմտեան այս կազմակերպութիւնը, իր ունեցած անհուն ճիւղական կարելիութիւններով և իր հաղորդակցութեան աշխարհակալ ցանցին շնորհիւ, ամէն տեսակ սուտ լուրերը կը պատրաստէ, կը կադապարէ և մեծագոյն կեղծիքին անգամ իրականութեան պատրանքը տալով, կը խաբէ զանգըւածները:

Այս խաբէութեան մէկ ահաւոր օրինակը, Մոնթե Մելքոնեանի պարագան է:

Աշխարհակալ Արեւմտեան Կազմակերպութիւնը, 1990-թ.ներէն սկսեալ, իր քարոզչութեան ուժովը, դահիճ - դաւաճան՝ Ամերիկացի Մոնթե Մելքոնեանը յաջողեցաւ «հերոս»ի մը վերածել:

Այստեղ կը հրապարակենք, պատմական մեծ կարեւորութիւն ունեցող երկու զեկոյցներ:

Առաջին զեկոյցը ստորագրուած է 24-9-1981-ին, Փարիզի թրքական հիւպատոսարանը գրաւած, Հայկական Գաղտնի Բանակի «Վան» գործողութեան հերոսներէն՝ Վազգէն Սիսլեանի, Գեորգ Կիւզէլեանի և Յակոբ Ճուլֆայեանի կողմէ:

Այս զեկոյցին մէջ, Մոնթե Մելքոնեանը կ'ամբաստանուի՝ «ԴԱԻԱՃԱՆՈՒԹԵԱՄԲ, և «ՀԱՅՎԱԿԱՆ ԶԻՆԵԱՆ ՊԱՅԶԱՐԸ ՉԷԶՈՔԱՅՆԵԼՈՒ ՅԱՆՑԱՆՔՈՎ»:

Երկրորդ զեկոյցը՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահի հրամանագիրըն է: Եւ ստորագրուած է 20 Սեպտ. 1996-ին, Երեւանի մէջ, այն ատենուան Հայաստանի հանրապետութեան նախագահ՝ Լեւոն Տէր Պետրոսեանի կողմէ:

Այս զեկոյցին մէջ, նախագահը Ամերիկացի Մոնթե Չարլզի Մելքոնեանին «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ» կոչում կը շնորհէ:

**«Վան» գործողութեան հերոսներուն  
գեկոյցը**

**ԲԱՅ ՆԱՄԱԿ «ԱԶԳ» ԿՈՉԵՑԵԱԼ  
ՉԱՅՆԱՍՓԻՒՌԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Մենք՝ «Վան» գործողութիւնը կատարող բան-տարկեալներս և Ֆրանսահայ ունկնդիրները՝ կշտա-ցած ենք «չէզոք» կոչուած և «Ազգ» անունը կրող ձեր ծայնասփիւռէն:

Ան կը ներկայացնէ Թորանեան - Դաշնակ գոր-ծակցութիւնը. որուն առջեւ լուր կը մնայ նաեւ Ֆրանսահայ մամուլը... Կ'ուզենք, որ հետեւեալ կէ-տերը նկատի առնէք և ըստ այնմ տաք ձեր լուրերը. որոնք կը վերաբերին Հ.Ա.Հ.Գ.Բ.ի բանտարկեալ մար-տիկներուն:

1. Կը նախընտրենք Հ.Ա.Հ.Գ.Բ.ի «ծայրայեղ» բեւիւն մաս կազմել, քան միանալ դաւաճաններուն:

...Մէկ խօսնով՝ կ'ուզենք ձեզի հասկցնել թէ՛ Հ.Ա.Հ.Գ.Բ.ի մէջ պառակտում գոյութիւն չունի, այլ՝ ձախորդ դաւաճանութիւն մը պատճառ դարձաւ մեր երկու թանկագին ընկերներու՝ Խաչիկ Հաւարեանի և Վիգէն Այվազեանի սպանութեանց. դաւաճաններ՝ Մոնթէ Մելոնեանի և Դաւիթ Դաւիթեանի ձեռքերով: Զախորդ դաւաճանութիւն կ'ըսենք, քանի որ դաւաճա-նութիւնը, որպէս գլխաւոր նպատակ ունէր՝ չէզոքա-

**Հայաստանի Հանրապետութեան  
Նախագահի հրամանագիրը**

**Մ.Չ. Մելոնեանին «Հայաստանի ազգային  
հերոս» Հայաստանի Հանրապետութեան  
բարձրագոյն կոչում շնորհելու մասին**

Հայաստանի Հանրապետութեան պաշտպանու-թեան գործում մատուցած համազգային նշանակու-թեան բացառիկ ծառայութիւնների համար, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Մարտունու շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար. փոխ-գնդապետ ՄՈՆԹԷ ՉԱՐԼՋԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ-ին, յետ մահու շնորհել «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն կոչում՝ յանձնելով Հայրենիքի շքանշան:

*Երևան, 20 Սեպտեմբերի 1996 թ.*

**Հայաստանի Հանրապետութեան նախագահ՝  
Լ. ՏԷՐ ԳԵՏՐՈՍԵԱՆ**

ցընել հայկական զինեալ պայտարը:

Կեցցէ՛ Հ.Ա.Հ.Գ. Բանակը. մահ դաւաճաններուն:

*Դեկտ. 1986-Մերոժիսի բանտ, Ֆրանսա*

**ՎԱԶԳԷՆ ՍԻՍԼԵԱՆ, ԳԷՈՐԳ ԿԻՒԶԷԼԵԱՆ,  
ՅԱԿՈՒ ԶՈՒԼՖԱՅԵԱՆ**

Այս երկու գեկոյցները կարդալէ յետոյ, մենք խորապէս համոզուած ենք, թէ հայ ազգին յատուկ ձիրք մըն է՝ դաւաճանները հերոսներու վերածելու կարողու-թիւնը:

Եւ վախը ունինք, որ դահիճ դաւաճան Նայիրի Յունացեանը, աշխարհակալ Արեւմտեան Կազմակերպութեան կողմէ, Մոնթէ Մելքոնեանին նման, միջոց մը տաք, «հերոս»ի վերածուի:

\*\*\*

Մեր վերջին գրութեան մէջ, Ղարաբաղի Զօրի Բալայեանին համար՝ «Ղա-րաբաղի անիրագործելի անջատումի և անկախութեան հոսանքը» ստեղծող Տօն Զիշօտ մըն է ըսած էինք:

Կը ցաւինք, որ այս Զ. Բալայեանը, հակառակ որ բժիշկ մըն է, այսինքն՝ գի-տութիւն ուսանած, բայց գիտական մարդու մը յատուկ տրամաբանութեան նշոյլ մ'անգամ չունի, իր կեցուածքին մէջ:

*Ո՛վ չէր ուզեր, Ղարաբաղին ազատ և անկախ ըլլալը և Հայաստանին միանալը:*

Բայց այս՝ իբր թե գիտութեան մարդը, քժ. Զ. Բալայեանը, երբ դեռ, Սովետական շրջանին, Սերո Խանգատեանին հետ Ղարաբաղի անկախութեան հարցը ստեղծեց, չմտածե՞ց, թե Սովետական Միութեան մէջ, մեծ թիւով ինքնավար շրջաններ կային Ղարաբաղի նման, և Ղարաբաղին անկախութիւն տրուելու պարագային, այդ բոլոր ինքնավար շրջանները, մանաւանդ թրքական ծագում ունեցող ինքնավար շրջաններն ալ, անկախութիւն պիտի ուզէին, և այս անկախական հոսանքի յարատեւումը, Ս. Միութեան, նոյնիսկ Ռուսական Ֆետերասիոնին փլուզումը ըսել էր: Եւ այս պատճառաւ Սովետ ղեկավարները չէին կըրնար, այդ պայմաններու մէջ, ընդունիլ Ղարաբաղի անջատման և անկախութեան պահանջները: Մասնակի ու հանգրուանային կարգադրութիւններով ուզեցին գոհացնել արցախահայութեան արդար պահանջը:

Հակառակ այս տրամաբանական իրականութեան, Զ. Բալայեանը շարունակեց իր ծայրայեղական Ղարաբաղեան «անջատումի և անկախութեան» աշխատանքները:

Բոլորիս ծանօթ է, թէ 1988թ.ներուն սկսած Ղարաբաղեան «անկախութեան» ցոյցերը, ո՛ր հասցուցած են այսօր Հայաստանը և Հայաստանի ժողովուրդը:

Եւ դեռ մինչեւ ո՛ր կրնայ երթալ Ղարաբաղով սկսած Հայաստանի այսօրուան քառսային վիճակը՝ չենք գիտեր:

Բայց, շատ յստակ իրականութիւն մը կայ այսօր: 27-10-1999-ին Նայիրի Յունանեանին կատարած հրէշային ոճրագործութիւնը, ոչ միայն Հայաստանին պետականութեան հիմերը-խախտեց, այլ՝ ամենէն կարելորն և ամենէն վտանգաւորը՝ հայ ժողովուրդին իր ապագայի մասին ունեցած հաւատքը և յոյսը խորտակեց:

Հայ ժողովուրդը ինչպէ՞ս վստահի իր պետութեան, երբ այս պետութիւնը նոյնիսկ իր ղեկավարները չկրցաւ պաշտպանել, և հայոց ժամանակակից մեծագոյն ղեկավարները, քանի մը վայրկեանի մէջ, սպաննուեցան:

Եւ այսօր, ո՞վ պիտի պաշտպանէ հայ ժողովուրդը ապագայ վտանգներուն դէմ, աւազակներուն դէմ, խուլիկաններուն դէմ և, մանաւանդ՝ ցեղասպան թուրքերուն դէմ:

Ժողովուրդը ինչպէ՞ս վստահի իր պետութեան, երբ այս պետութեան նախագահը, 27-10-1999-ի ողբերգութեան առաջնակարգ բարոյական պատասխանատուն՝ անվտանգութեան նախարարը իր անձնակազմին ղեկավար կարգեց և յաւելուած՝ ապահովութեան խորհուրդին քարտուղար նշանակեց:

Ժողովուրդը ինչպէ՞ս վստահի իր պետութեան, երբ այս պետութեան հեռատեսիլը, հայկական բանակին դէմ ելոյթներ կ'ունենայ:

Մեր գրութիւններուն հետեւողները նկատած են թերեւ: 27-10-1999-ի ոճրագործութեան օրերէն սկսեալ, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ հրատարակուած մեր գրութիւններով, այս ողբերգութեան առաջնակարգ բարոյական պատասխանատուները մատնանշած էինք:

Եւ նաեւ՝ Հայաստանի ազգային հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանին՝ հայ բանակին դէմ կատարած քանդիչ ելոյթներուն մասին արտայայտուած էինք:

Իսկ 15 Դեկտեմբեր 1999-ին ձերբակալուեցաւ հանրապետութեան նախագահի խորհրդականը՝ Ալեքսանտր Յարութիւնեանը, 27 Հոկտեմբեր 1999-ի «ողբերգութիւն»ը դրդած ըլլալու մեղադրանքով:

5 Յունուար 2000-ին ձերբակալուեցաւ Հայաստանի պետական հեռատեսիլ-ին փոխ տնօրէն՝ Յարութիւն Յարութիւնեանը, Ա.Ժ.ի վրայ կատարուած յարձակման մէջ դեր ունեցած ըլլալու մեղադրանքով:

Ինչպէս որ կը տեսնէք՝ Հոկտեմբերի ողբերգութեան հանգոյցը քակուիլ սկսած է արդէն:

Ասկէ յետոյ, կարգը պիտի գայ, բուն պատասխանատուներուն:

Կը կարծենք, թէ բուն պատասխանատուներուն ով ըլլալը գուշակելը, մարգարէութիւն մը չէ այլեւս:

\*\*\*

Վերջերս, շատերուն ուշադրութիւնը գրաւած է անպայման, որ շարունակ լուրեր կը տարածուին, որ Թուրքերը հայկական սահմանը պիտի բանան եղեր: Նոյնիսկ թուական ճշդողներ կան՝ «սահմանը, Փետրուարի վերջը, պիտի բացւի»: Եւ այս լուրերը, իբր բարեբաստիկ լուր տարածողները՝ հայկական ՀՀ-ի պաշտօնակաւ աղբիւրներն են:

Այս ի՞նչ բարոյական անկում է հայոց պետականութեան:

Հայաստանը, իբր պետութիւն, 1920-էն մինչեւ 1991-թ.ը, Թուրքիոյ հետ առեւտրական ի՞նչ կապեր ունեցեր է, որ այսօր, այդ գոցուած սահմանին բացուելու հաւանականութիւնը, ուրախութիւն կը պատճառէ:

1920-էն մինչեւ 1991-թ.ը, Հայաստանի պետութեան ամէն տեսակի ապրուստի պահանջները ո՞վքեր ապահովեցին՝ «Միայն և միայն Ռուսերը»: Այս ի՞նչ ապերախութիւն է:

Եւ մանաւանդ՝ ազգային զգացումներու բացայայտ սնանկացումն է՝ հայ ազգին ցեղասպանը եղող Թուրքիոյ հետ առեւտրական և բարեկամական կապեր հաստատելու մարմաջը:

Եթէ Հայաստանի ժողովուրդը չի գիտեր և կամ մոռցած է Թուրքին «ով» ըլլալը՝ թող բարձրանայ Ծիծեռնակաբերդ և հոն վերյիշէ՝ թուրքերուն կողմէ նահատակուած միլիոնաւոր իր նախնիքները և թուրքերուն գողցած իր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը:

«Փորձուածը կրկին փորձելը՝ խելագարութիւն է»-կ'ըսէ ժողովրդական առածը:

Արեւմտեան Հայաստանի հայերը, Մինչեւ 1915-թ.ը, թուրքերուն բարեկամութեան հաւատացող, իրենց տխմար առաջնորդներուն քաղաքականութեամբ, փորձեցին թուրքերուն հետ համերաշխ ապրիլ:

Եւ ապերախ թուրքերը, 24 Ապրիլ 1915-ին, վերջին հարուածը տուին հայութեան և ամբողջովին բնաջնջեցին Արեւմտեան Հայաստանի հայութիւնը և «Թուրքիա»ի վերածեցին հայուն երեք հազար տարուան հայրենիքը:

Հայաստանի ներկայ ժողովուրդը և մանաւանդ Հայաստանի պետութիւնը ինչպէ՞ս կը մոռնայ այս ցեղասպանութիւնը և կրկին, Թուրքին հետ բարեկամաբար ապրելու փորձեր կ'ընէ:

\*\*\*

27 Հոկտեմբեր 1999-ի չարաշուք օրը՝ նահատակուեցան Հայաստանի անզուգական ղեկավարները՝ Կարէն Դեմիրճեանը և Վազգէն Սարգիսեանը: Այդ զարհուրելի թուականէն ի վեր, գրեթէ չորս ամիսներ անցան: Եւ այսօր ի՞նչ կը տեսնենք-ոճրագործութեան բուն պատասխանատուները, դեռ մինչեւ հիմա, չեն հրապարակուած:

Բայց ամենէն ցաւալին այն է, որ Կարէն Դեմիրճեանին և Վազգէն Սարգիսեանին յիշատակը մրոտելու համար, ամէն տեսակի զրպարտիչ լուրեր տարածել սկսան:

Իբր թէ, Կարէն Դեմիրճեանը և Վազգէն Սարգիսեանը, Ղարաբաղը Ազերիներուն ետ պիտի տան եղեր: Իբր թէ, անոնք, արեւմտամէտ

ՄՈՆԹԷ ՄԵԼՔՈՆԵԱՆ = ՆԱՅԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ... (Շար. էջ 2-էն)

քաղաքականութեան կողմնակիցներ են եղեր: Եւ այս պատճառաւ է, որ Ռուսերը, սպաննել տուեր են Կարէն Դեմիրճեանը և Վազգէն Սարգիսեանը: Եւ այս լուրերը կը հրատարակուին միջազգային մամուլին մէջ ալ:

Այս տեսակի անհաւատալի լուրերը յօրինելու և զանոնք ամբողջ աշխարհին տարածելու կարողութիւնը, միայն աշխարհակալ Սիոնիստ կազմակերպութեան յատուկ է:

Ամբողջ աշխարհը գիտէ, թէ Կ. Դեմիրճեանը և Վ. Սարգիսեանը իսկական հայրենասէրներ էին, և այդ պատճառաւ ալ, Հայաստանի փրկութիւնը և գոյատեւումը, միայն Ռուսական կողմնորոշման մէջ կը տեսնէին:

Վազգէն Սարգիսեանը, Ղարաբաղի պատերազմին, Ազերիներէն ազատագրուած հողերուն ետ տրուելուն մասին իրեն ուղղուած մէկ հարցումին՝ սա անմոռանալի պատասխանը տուած էր՝ «ՊԱՔՈՒՆ ԻՐԵՆՅ ԿՐ ՉԳԵՆԶ»:

Վերջին շրջաններուն Կարէն Դեմիրճեանը և Վազգէն Սարգիսեանը, Հայաստանին Ռուսիա-Պիէլոուսիա միութեան մէջ մտնելու «ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ»ը ստորագրելու կը պատրաստուէին:

Եւ մենք կը հաւատանք, որ զանոնք սպաննել ուզելուն քուն պատճառը, Հայաստանին՝ Ռուսիոյ հետ միանալուն արգելք ըլլալ էր:

\*\*\*

Հայաստանցի հայեր և հայ դեկավարներ՝

Մենք կը հաւատանք, որ հակառակ այսօրուան Հայաստանի մէջ ապրելու շատ դժուար և անտանելի պայմաններուն, դուք ձեր հոգւոյն մէջ դեռ ունիք անանդական «Հայ»ուն յատուկ հայրենասիրական կորովը: Ուստի, մի՛ տարուիք, սուտ և շլացուցիչ լուրերէ:

Մի՛ հաւատաք և մի մոռնաք, որ Թուրքը, միշտ նոյն Թուրքն է, և ձեր նախնիներուն և պապերուն իրենց կեանքի՝ գնով փորձած թուրքը՝ դուք ալ կրկին մի՛ փորձէք:

Եթէ Թուրքին ո՞վ ըլլալը լաւ հասկնալ կ'ուզէք, գացէք Լեւինականի շրջակայքը և այնտեղէն դիտեցէք թրջական սահմաններէն ներս, Իգտիթի բարձունքներուն վրայ թուրքերուն կանգնած 60 մեթր բարձրութեամբ յուշարձանը, որ, իբր թէ, խորհրդանիշն է հայերուն կողմէ ջարդուած թուրքերուն:

Ա՛յս է Թուրքը և միշտ ա՛յս պիտի մնայ՝ «ստախօս և ջարդարար»:

Մենք կը հաւատանք, որ Հայաստանի այսօրուան շատ ծանր պայմաններուն մէջ, «Հայ»ուն միակ փրկութիւնը՝ Հայաստանի պետութեան ամենակարճ ժամանակի մէջ Ռուսաստանի և Պիէլոուսիոյ միութեան միանալն է:

Միայն այս ձեւով է, որ յուսալքուած հայ ժողովուրդը, Հայաստանի պետութեան հանդէպ իր հաւատքը, վստահութիւնն և իր յոյսը կը վերագտնէ, և կրկին, իր հայրենի հողին կը փարի:

Եւ մենք վստահ ենք, որ եթէ Ռուսիոյ հետ միացումը իրականանայ, օտար երկիրներու մէջ ապրող և արտասահմանին այլեւս ինչ ըլլալը հասկցած հայերն ալ, միջոց մը ետք, պիտի վերադառնան Մայր Հայրենիք՝ Հայաստան:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉՈՒՆԿԻՐԵԱՆ**  
**{ՎՐԷԺ ՌՈՒՔԵՆԵԱՆ}**

Երեքշաբթի 8 Փետրուար 2000

« ԴՐԱՄ = ԱՍՏՈՒԱԾ »



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՌՈՒԲԵՆԵԱՆ)

1995-էն սկսեալ «ՆԱՅԻՐԻ»-ի մեր գրութիւններուն հետետողները նկատած են թերեւս, որ մենք, տեւական, այս գրութիւններուն մէջ, կը պնդենք թէ՛ Սիոնիստներուն «Աստուած»ը դրամն է:

Եւ անոնք՝ դրամին «Աստուած»ային ուժին շնորհիւ, յաջողած են այսօր, ամբողջ աշխարհին տիրապետել:

Բայց, արդեօք, մեր մէջէն քանի՞ հոգի նկատած են, որ այս «Դրամ=Աստուած»ին խորհրդանիշը եղող Ամերիկեան տոլարին վրայ, սիոնիստական աշխարհակալ կայսրութեան գաղափարականը արձանագրուած է:

Շատ յստակ և որոշ են, Ամերիկեան տոլարին վրայի արձանագրութիւնները, որոնք սիոնիստական գաղափարականը կը բացայայտեն:

Կրնա՞ք երեւակայել, որ ամէն օր ու ամէն վայրկեան ժողովուրդին ձեռքը եղող ամերիկեան տոլարին վրայ, ամէն բան, արեւուն լոյսին պէս, տեսանելի ըլլայ: Ուրեմն, պիտի խնդրենք, որ նայիք վերը հրատարակուած տոլարի նկարին: Ճի՛շդ մէջտեղը արձանագրուած է՝ "IN GOD WE TRUST".

Այս նախադասութիւնը կրնանք թարգմանել հետեւեալ ձեւով, քանի որ, Աստուծոյ խօսքը, դրամին վրայ արձանագրուած է՝ «Մենք կ'ապաւիճինք» [այս դրամին ներկայացուցած] «Աստուծոյն»:

Տոլարին աջ և ձախ կողմերը, շրջանակի մէջ, երկու նկարներ կը տեսնենք, որոնց վրայ գրուած է, թէ այս նկարները՝ "THE GREAT SEAL OF THE UNITED STATES" [Միացեալ Նահանգներու մեծ կնիքը] կը ներկայացնեն: Չախ կողմի նկարին մէջ կը տեսնուի ֆարմասոնական խորհրդանիշ եղող եգիպտական բուրգ մը, որուն վրայի կողմը կը փայլի «Աստուծոյ արեւը». եւ «Արեւ»ին ճիշդ մէջտեղը, եռանկիւնի մը մէջ կը տեսնենք՝ «Աստուծոյ աչքը»:

Եւ բուրգին վարի մասին վրայ, հետեւեալ արձանագրութիւնը կը նշմարենք լատիներէնով՝ "MDCCLXXVI" [կը նշանակէ 1776- որ Ամերիկայի անկախութեան հռչակման թուականն է] և նաեւ՝ "NOVUS ORDO SECLORUM" որ կը նշանակէ՝ «Բոլոր դարերու նոր կարգը»:

Աջ կողմի շրջանակին մէջ ալ կը տեսնենք Ամերիկեան արծիւը, իր մէկ թաթին մէջ ձիթեցիի ճիւղ մը բռնած, իսկ աջ թաթին մէջ ալ՝ 13 նետեր:

Եւ ամենէն յատկանշականը՝ արծիւին գլխուն վրայ 13 աստղեր կան, որոնք կը ներկայացնեն միութեան, սկզբնական շրջանի [1776-թ.] 13 Նահանգները, որոնք կազմեցին Ամերիկայի Միացեալ Նահանգները:

Եւ այս 13 աստղերը քով քովի այնպէս մը դասաւորուած են, որ եթէ քիչ մը ուշադրութեամբ նայինք, կը տեսնենք հրեականութեան խորհրդանիշը եղող՝ «Դաւիթեան Աստղը»:

Արդեօք գիտէ՞ք, թէ հրեական ազգային դրօշակին վրայ ալ գտնուող այս «Դաւիթեան Աստղը», ի՞նչ կը խորհրդանշէ:

Երկու եռանկիւններուն իրարու մէջ մտնելով կազմած այս Դաւիթեան աստղին առաջին եռանկիւնը կը ներկայացնէ՝ Երկրային Աշխարհի տիրապետութիւնը: Իսկ երկրորդ եռանկիւնը կը ներկայացնէ՝ Յաւիտենական աշխարհի Տիրապետութիւնը:



Մասոնական բոլոր յատկանիշները իր մէջ պարփակող “DOLLAR” ին վրայի Ա.Մ.Ն.ի պաշտօնական մեծ կնիքը, 1776-թ. ներէն, ըսել է՝ հանրապետութեան Նախագահ GEORGE WASHINGTON-ի պաշտօնավարած շրջանէն ի վեր գոյութիւն ունի:

Այսինքն Ճորճ Ուաշինկթընն [1732-1799] էր, այս մասոնական կնիքը, իբր՝ «Ամերիկային Խորհրդանիշ» ընտրողը:

Որովհետեւ, Ճ. Ուաշինկթըն, առաջնակարգ մասոն մըն էր՝ ամենաբարձր “GRAND MAITRE”ի տիտղոսով:

Բայց՝ ուշադրութիւն. այդ ժամանակներուն, մասոնութեան իսկութեան մէջ ի՞նչ և հրեական թակարդ մը ըլլալը ծանօթ չէր:

Այդ ժամանակաշրջանին կը հաւատացուէր, որ մասոնականութիւնը կը ներկայացնէր մարդկութեան ամենաբարձր «իտէալները»:

Մանաւանդ յառաջդիմասէր, ազատամիտ գաղափարներով համակուած մտաւորականներ, գիտնականներ և նաեւ զինուորականներ, յարած էին մասոնականութեան:

Ֆրանսայի այն ատենուան հանրածանօթ, ազատամիտ մտաւորականներէն՝ Ռուսսօ, Մոնթէսքուէ, Վոլթեր, Տիտէրօ և Գմանները, իրենց յառաջդիմական գաղափարներով, մեծ ազդեցութիւն կը գործէին բոլոր շրջանակներու մէջ, ըլլա՛յ Եւրոպայի և ըլլա՛յ Ամերիկայի մէջ:

Եւ այս ազատամիտ մտաւորականներուն ստեղծած նոր աշխարհահայեացքէն ամենէն շատ կ’օգտուէր մասոնականութիւնը, մանաւանդ՝ Ամերիկեան մասոնականութիւնը:

Եւ Ամերիկայի մէջ, ազատամիտ մտաւորականներուն՝ Վոլթերին և Գմաններուն քարեկամը եղող մեծ գիտուն և առաջնակարգ մասոն՝ BENJAMIN FRANKLIN միացաւ, իրեն պէս մեծ մասոն մը եղող Ճորճ Ուաշինկթընին, անգլիացիներուն դէմ մղած անկախութեան պայքարին:

Եւ Պ. Ֆրանքլին, 4-7-1776-ին, իր պայքարի ընկերներուն հետ հրատարակեց հռչակաւոր «ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՆԿԱՄՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ»:

Եւ այս «Անկախութեան յայտարարութիւն»ը կնքուած էր՝ վերի Տոլար-ին վրայ տեսնուող մասոնականութեան խորհրդանիշը եղող «Կնիք»ով: Այն կնիքով՝ որ մեզի կ’աւետէր “NOVUS ORDO SECLORUM” [բոլոր դարերու նոր կարգը]:

Եւ ամերիկացիները, ամէն տարուան 4 Յուլիսը կը տօնեն իբր իրենց «Ազգային տօնը», ի յիշատակ 4-7-1776-ին հրատարակուած «Անկախութեան Յայ-

տարարութեան»:

Բայց մենք կը հաւատանք, որ մասոնական կնիքով կնքուած այս անկախութեան յայտարարութիւնը, նոյն ատեն աշխարհի ժողովուրդները դէպի «Բացարձակ ստրկութեան» առաջնորդող սիոնիստ աշխարհակալ կայսրութեան «մուցետիկ»ը եղած է:

★ ★ ★

1999-ի գարնան ամիսներուն, Եուկոսլաւիոյ դէմ տարած իր «մեծ» յաղթանակէն շլացած, ամերիկայի Նախագահ՝ Սեքսի-Մանըքեն Պիլ Զլինթըն կը յայտարարէր, թէ «Աշխարհի մէջ նոր շրջան մը կ'սկսի. «Նոր Կարգ» մը, եւ մենք վճռած ենք, այս կարգը կիրարկելու»:

Աշխարհի միահեծան տէրը եղող նոր օրերու բռնակալը, ասկէ աւելի բաց չէր կրնար խօսիլ: Ան, ըսել կ'ուզէր, թէ՛ «Եթէ մեր ուզածը չընէք և մեր գծած ճամբայէն չերթաք, Եուկոսլաւիոյ նման կը պատժենք ձեզ»:

Այս է «Սեքսի Մանըքեն»ին կողմէ արտայայտուած Սիոնիստներուն ազատութեան, արդարութեան և մարդկային իրաւունքներու ըմբռնումը:

Բայց, ինչո՞ւ կը զարմանանք: Հակառակ մեր «ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴ» մը ըլլալու մեծամիտ յաւակնութեան, իրականութիւնը այն է, որ մենք ալ, բնութեան մաս կազմող իսկական կենդանիներ ենք: Մեր բոլոր կարողութիւններով և տկարութիւններով: Եւ այսօր, «ՀԱՐՈՒՍՏ ԱՒԱԶԱԿՆԵՐՈՒՆ» ձեռքը մնացած այս աշխարհի մէջ՝ տկարը միշտ զօրաւորին զոհն է, ստրուկն է:

Սիոնիստները, երկար տարիներ տելող աշխատանքներէ ետք, այսօր յաջողեցան ստեղծել աշխարհ մը, ուր ամէն բան դրամի ուժէն կախեալ է: Եւ այսօր, այս աշխարհին ամբողջ դրամական ուժը՝ ամբողջովին սիոնիստ-հրեաներուն ձեռքը անցած է:

Անոնց ստեղծած «Ծուկայի Տնտեսութեան» հետեւանքով, այսօր այլեւս «Դրամ»ը սահման չունի:

Եւ տնտեսութեան համաշխարհայնացման [MONDIALISATION] պատճառաւ այսօր, Սիոնիստներուն «Աջքը», Բուրգին վրայի աչքին նման, կը հսկէ աշխարհի ամենէն հեռաւոր անկիւններուն վրայ:

Եւ աշխարհի կարելոր բոլոր տնտեսական կառոյցները, անոնց հակակշռին ենթարկուած են՝ Ամերիկայէն մինչեւ Ռուսիա, Աւստրալիայէն մինչեւ Չինաստան: Եւ աշխարհի բոլոր տնտեսական շարժումները մէկ կեդրոնէն կը կառավարուին:

Այս կեդրոնը, Ամերիկայի մէջ է և կը կոչուի՝ F.E.D. [RESERVE FEDERAL AMERICAIN], որուն պատասխանատու-տնօրէնը, 1987-էն ի վեր, "ALAN GREENSPAN" անունով հրեայ մըն է:

Եւ այս Կրիստիան-ին տուած որոշումներէն կախեալ են աշխարհի բոլոր դրամատուները, գործարանները և գործատեղիները:

Այստեղ աւելորդ կը նկատենք շեշտելը, թէ՛ հրեայ Ալեն Կրիստիան սիոնիստական կեդրոնական կազմակերպութեան հրահանգները գործադրող առաջնակարգ ղեկավարներէն մէկն է:

★ ★ ★

1991-ին, Սիոնիստ Արեւմտեան Պետութիւնները, իրենց հրամանին չենթարկըող Իրաքը պատժեցին, և ռմբակոծեցին և քանդեցին Իրաքը, և մինչեւ այսօր ալ կը շարունակեն պատժել, պատճառ ըլլալով միլիոնաւոր իրաքցիներու վատառողջութեան ու մահուան:

1999-ին, Սիոնիստ Արեւմտեան պետութիւնները, իրենց հայրենիքը "KOSOVO"ն թշնամիին յանձնել չուզող Եուկոսլաւները, նոյն ձեւով պատժեցին: Ամիսներով ռմբակոծեցին ու քանդեցին Եուկոսլաւիան, և ի վերջոյ զայն "U.C.K" ըսած անազակ ալպանացիներուն յանձնեցին, հազարամեակներէ ի վեր Սերպերու հայրենիքը եղող Զոսովօ-ն:

Եւ վերջերս, նոյն վայրագութիւնը կատարեցին, Լիբանանի մէջ:

Սիոնիստներուն կողմէ գրաւուած հարաւային Լիբանանի մէջ, իրենց հայրենիքը պաշտպանողներուն դէմ իբր վրէժխնդրութիւն՝ հրեաները կրկին ռմբակոծեցին Լիբանանի ելեքտրական կայանները: Եւ խաւարի մէջ մխրճեցին միլիոնաւոր լիբանանցի ժողովուրդ: «Մէկի դէմ հազարով վրէժ լուծել»:

Այս ի՞նչ վայրագութիւն է հրեաներուն կատարածը: Հիթլերն անգամ այս աստիճան վայրագութիւն չէր գործած:

Այս ողբերգութեան մէջ, մեզի համար ամենէն ցաւալից, քաղաքակիրթ կոչուած Արեւմտեան պետութիւններուն ցուցաբերած անտարբերութիւնն է:

Բայց ի՞նչ ըսենք այն հարիւր միլիոնէ աւելի Արաբներուն որոնք, արեւմտեան երկիրներուն նման, անտարբեր կը մնան, իրենց եղբայրներուն դէմ կատարուած ոճրագործութեան հանդէպ:

★ ★ ★

Անպայման, ձեր ալ ուշադրութիւնը գրաւած է, որ Փետրուարի առաջին օրերէն սկսեալ, արեւմտեան երկիրներու մամուլը, հեռատեսիլի կայանները, բոլոր ձախակողմեան կազմակերպութիւնները և նաեւ արեւմտեան երկիրներու կառավարութիւնները, բոլորն ալ միայն մէկ հարցով զբաղեցան՝ Աւստրիոյ մէջ, ծայրայեղ աջակողմեան կուսակցութեան, [որուն նախագահը "JÖRG HAIDER"ն է] նոր կառավարութեան մէջ մտնելուն հարցով:

Այս ի՞նչ փոթորիկ, ի՞նչ ընդվզում, այս ի՞նչ պոռչտուք էր:

Մեր աչքերն ու ականջներն ա՛լ յոգնեցան ավստրիացիներուն դէմ եղած վայնասուններով:

Իրաքի, Եուկուպիոյ, Լիբանանի դէմ կատարուած ոճրագործութիւններու օրերուն, լուր և անտարբեր մնացած արեւմտեան պետութիւնները, անոնց մամուլն և հեռատեսիլները ինչո՞ւ այսօր, Աւստրիոյ դէմ, ա՛յս աստիճան կատաղի յարձակումներ կը գործէին: Ի՞նչ էր Աւստրիոյ մէջ կատարուած անկարգութիւնը:

Իրականութեան մէջ, եթէ տրամաբանութեամբ դատենք, կը տեսնենք, թէ Աւստրիոյ մէջ, որեւէ անկարգութիւն և անօրէնութիւն չէր կատարուած:

Աւստրիոյ վերջին ընտրութիւններուն ծայրայեղ աջակողմեան այս կուսակցութիւնը, ժողովուրդին քուէներուն հարիւրին քսանըեօթը առնելով, Աւստրիոյ երկրորդ կուսակցութիւնը դարձած էր և իբր այդ, ըստ ժողովրդավարական օրէնքներուն, շատ բնական է, որ ավստրիական նոր կառավարութեան մաս կազմէր:

Եւ ճիշդ հո՛ս էր հարցը:

Այս Արեւմտեան պետութիւնները, երկար տարիներէ ի վեր, ինքզինքնին ժողովրդավարութեան ջահակիրներ կը համարէին, և իբր այդ, համայնավար երկիրները կը դատապարտէին և անոնց դէմ պայքար կը տանէին, այդ երկիրներուն մէջ իբր թէ ժողովրդավարութիւն հաստատելու համար: Մինչդեռ այսօր, Աւստրիոյ ժողովուրդին քուէներով ընտրուած ծայրայեղ-աջակողմեան կուսակցութեան կառավարութեան մէջ մտնելուն, ամէն գնով արգելք ըլլալ կ'ուզէին:

Ուրեմն, արեւմտեան պետութիւններուն ժողովրդավարութիւնը, ձեւակերպութիւն մըն է միայն:

(Օտար.ը տես՝ էջ 12)

**« ԴՐԱՄ = ԱՍՏՈՒԱԾ » ... (Շար. էջ 2-էն)**

Զսանդհինգ տարիներէ ի վեր, Եւրոպա ապրող հայ մը ըլլալով: այս մասին մեր տպաւորութիւնները բացատրելու ջանանք:

Արեւմտեան պետութիւններուն այսօրուան ժողովրդավարութիւնը, իսկական « ձեւակերպութեան » վերածուած է: Սիոնիստներուն երկար տարիներէ ի վեր կիրարկած ծրագիրներուն գործադրութեան պատճառաւ:

Արեւմտեան Եւրոպայի մէջ, Բ. Աշխարհամարտին աւարտէն սկսեալ, սիոնիստներուն ընդունիլ տուած հակա-ազգայնական օրէնքներուն պատճառաւ, այլեւս այս երկիրներուն մէջ ժողովրդավարութիւնը, իսկական « թատրոն » ի մը վերածուած է:

Թատրոն մը՝ որուն անունը « Ընտրութիւն » կը կոչուի, և այս ընտրութիւններուն ստիպուած էք, սիոնիստներուն ներկայացուցած և անոնց տեսակէտները հլու հնազանդ պաշտպանող թեկնածուները ընտրել:

Այստեղ նշել կ'ուզենք, այս մասին, հետեւեալ ապացոյցը:

Վերջին տասնամեակներուն Ֆրանսայի մէջ ընտրուած հանրապետութեան նախագահներուն և վարչապետներուն մեծ մասը, հրեայ միլիառատէր "ROTH-SCHILD"ներուն հաստատութիւններուն մէջ պաշտօնավարող անձնաւորութիւններ եղած են՝ GEORGES POMPIDOU - Հանրապետութեան Նախագահ, V. GISCARD D'ESTAING - Հանրապետութեան Նախագահ, JACQUES CHIRAC - Հանրապետութեան Նախագահ, EDOUARD BALLADUR - Վարչապետ:

★ ★ ★

Իրականութեան մէջ ի՞նչ է, սիոնիստներուն դրդումով, Արեւմտեան պետութիւններուն Աւստրիոյ ծայրայեղ աջակողմեան կուսակցութեան նախագահ JÖRG HAIDER-ին դէմ շղթայազերծած համազարկին պատճառը:

1.- JÖRG HAIDER-ին իսկական ազգասէր մը ըլլալը:

2.- Եւ իր կուսակցութեան հարիւրին քսանեօթը համեմատութեամբ քուէ առած ըլլալն է:

Սիոնիստները Եւրոպայի մէջ, ծայրայեղ աջակողմեան կուսակցութիւններուն դէմ են:

Բայց, այս կուսակցութիւնները, եթէ միայն հարիւրին տասի շուրջ քուէ առնեն, սիոնիստները անոնց շատ վնաս չեն պատճառեր:

Որովհետեւ, այս հարիւրին տասը քուէներով, անոնք միւս աջակողմեան կուսակցութիւններուն առած քուէները բաժնած կ'ըլլան:

Եւ նկատելով, որ Եւրոպայի մէջ, աջակողմեան կուսակցութիւններուն ծայրայեղ աջ կուսակցութիւններուն հետ որեւէ գործակցութիւն ունենալը սիոնիստներուն կողմէ արգիլուած է, այս պատճառով աջակողմեանները, շատ անգամ, ընտրութիւնները կը կորսնցնեն:

Եւ այս վիճակէն կ'օգտուին ձախակողմեան կուսակցութիւնները և իշխանութիւնը, հակառակ որ վերջինները փոքրամասնութիւն են, իրենց ձեռքը կ'անցնի:

Այս է վիճակը այսօր Ֆրանսայի մէջ: Սոցիալիստները, քուէներու տեսակէտով ընտրութիւնը չեն շահած, բայց ծայրայեղ աջ կուսակցութիւնը աջակողմեաններուն քուէները բաժնած ըլլալուն պատճառաւ, Սոցիալիստները իրականութեան մէջ անօրէն ձեւով իշխանութեան եկած են:

Եւ այսօր, բոլոր եւրոպական երկիրներուն մէջ [ի բացառեալ Սպանիայէն], Սոցիալիստները իշխանութեան գլուխը անցած են՝ ծայրայեղ աջակողմեան կուսակցութիւններուն հետ գործակցելու սիոնական արգելքին պատճառաւ:

Եւ Աւստրիոյ դէմ, մանաւանդ Սոցիալիստ ֆրանսական կառավարութեան կատարած շատ բուռն յայտարարութիւններուն իսկական պատճառը, ֆրանսական աջակողմեան կուսակցութիւններուն անստրիական օրինակին հետեւելու վախն է:

Սիոնիստները, բոլոր երկիրներուն մէջ, մանաւանդ եւրոպայի մէջ «ՍՈՑԻԱԼ-ԻՍՏ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ» կը նախընտրեն:

Որովհետեւ, սոցիալիստներուն իշխանութեան շրջանին է, որ սիոնիստները իրենց ծրագիրները, շատ անելի ազատօրէն կրնան գործադրել:

Չէ՞ որ սոցիալիստները, իբր գաղափարաբանութիւն՝ կրօնքին և ազգայնականութեան դէմ են:

Այս պատճառաւ սիոնիստները, ամենէն ազատամիտ և ամենէն մարդասէր անձնատրութիւններու կը վերածուին, և սոցիալիստներուն հետ կը գործակցին, որ ժողովուրդներուն կրօնական և ազգայնական շեշտուած համոզումները շատ անելի դիւրութեամբ խորտակեն:

---

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԻՆԻՆԿԻՐԵԱՆ**  
**{ԿՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}**

---

| Երեքշաբթի 22 Փետրուար 2000

ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ՀԵՐՈՍ-ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ  
ԱՆՄԱՀ ՑԻԾԱՏԱԿԻՆ

**ՀԱՅՐԵՆԱԴԱԻԵՐՈՒՆ**  
**ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ**

ԶՕՆ՝ ՎԱՐԴԱՆԱՆՑԻ «ՈԳԻ»Ն ՄՈՌՑՈՂ ՀԱՅԵՐՈՒՆ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

Նախկին Հ.Հ. Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեան, 20-9-1996-ին հրատարակած հրամանագրով, Հայկական Գաղտնի Բանակը խորտակող ամերիկացի Մենթէ Զարլզի Մելքոնեանը՝ «Հայաստանի ազգային հերոս» հռչակած էր:

Այս անարգ հրամանագրին պատճառած խոր ընդվզումով, Յ Փետրուար 2000-ին, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ, սապէս արտայայտուած էինք.

«Հայ Ազգին յատուկ ծիրք մըն է՝ դաւանանքը հերոսներու վերածելու կառողութիւնը»:

Անմիջապէս աւելցնենք, որ Հայ Ազգին այս անհաւատալի և աններելի ընթացքը, վերջին դարերուն յատուկ երեւոյթ մըն է: Եւ անմիջականօրէն կապ ունի 13-րդ դարէն սկսեալ, արեւմտեան պետութիւններուն Հայաստանը ձեռք անցընելու համար տարած պառակտիչ և բաժանարար քաղաքականութեան հետ:

Մինչեւ 18-րդ դարու կէսերը, հակառակ Օսմանեան բարբարոսութիւններուն, Հայ Ազգը ընդհանրապէս կրցած էր պահել իր ազգային և կրօնական միութիւնը:

Հայ Ազգին ցեղային առաւելութիւնը եղող առաքինի և զոհաբերող նկարագրին ջնորհիւ, հայերը կրցան դիմադրել Բիւզանդացիներուն, և մանաւանդ՝ Պարսիկներուն երկար դարեր տեսող դաւանափոխիչ ճնշումներուն: Ասոր ամենէն կարկառուն ապացոյցը՝ 451-թ.ին տեղի ունեցած «Վարդանանց» պատերազմն է:

449-թ.ին Արտաշատի մէջ կայացած ժողովին, հայ ղեկավարները կը մերժեն Պարսիկներուն դաւանափոխ ըլլալու առաջարկները: Եւ Զօր. Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ, պարսիկներուն դէմ ապստամբելու որոշում կ'առնեն:

Այս պայքարի որոշումին կը հակառակի Հայաստանի մարզպան Վասակ Սիւնիին, այն պատճառաբանութեամբ, թէ առանց Բիւզանդական օգնութեան, հայկական տկար ուժերը չեն կրնար յաղթել պարսկական մեծ բանակին:

Բայց, ազատատենչ հայ ղեկավարները, չեն ընդունիր Վասակ Սիւնիին պարսիկներուն հպատակելու առաջարկը:

Եւ 451-թ.ին, Աւարայրի դաշտին վրայ, կը պատերազմին Պարսիկներուն դէմ:

Այս պատերազմին, Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ կռուող 1036 ճարտիկներ կը նահատակուին՝ «Վասն հաւատոյ և վասն Հայրենեաց»:

Աւարայրի պատերազմին ընթացքին, Վասակ Սիւնիի դաւանադարար կը միաճայ Պարսիկներուն և կը կոտի հայկական ուժերուն դէմ:

Պարտուող հայկական ուժերը կը նահանջեն, բայց պայքարը կը շարունակեն լճներուն մէջ, մեծ թիւով կորուստներ պատճառելով Պարսիկներուն:

Ի վերջոյ, Պարսիկներու արքան՝ Յազկերտ Բ. տեսնելով հայոց պայքարելու վճռականութիւնը, ստիպուած կ'ըլլայ ետ կանչելու իր զօրքերը: Եւ կը հրաժարի հայերը կրօնափոխ ընելու իր որոշումէն, և զիրենք ազատ կը ձգէ իրենց դաւանութեան մէջ: Եւ կը ճանչնայ Հայաստանի ինքնավարութիւնը:

Վասակ Սիւնիին ալ, որ Վարդանանց պատերազմին Պարսիկներուն միացած էր, Յազկերտ Բ. վերջ կու տայ անոր մարզպանի պաշտօնին:

Միջոց մը ետք, Վասակ Սիւնի կը ձերբակալուի և կը սպաննուի պարսկական բանտին մէջ: Այս ձեռով, դաւաճանը իր արժանի պատիժը գտած կ'ըլլայ:

Վարդանանցի ճակատամարտին 1036 հերոս-նահատակներուն զոհողութեան ջնորհիւ, Հայ Ազգը կրցաւ պահել իր հաւատքը և իր հայրենիքը:

Եւ «Վարդանանց»ը Հայ Ազգին բարոյական ուղեցոյցը եղաւ:

Վարդանանցի նահատակները, հայ ազգին համար, Ազատութեան և զոհողութեան խորհրդանիշը եղան: Վասակ Սիւնի ակ' դաւաճանութեան խորհրդանիշը: Եւ մինչեւ այսօր, «Վասակ» անունը հայկական բառարաններուն մէջ կը նշանակէ՝ «ՉԱՐ», «ՀԱՅՐԵՆԱԴԱԻ», եւ «ԴԱԻԱՃԱՆ»:

\*\*\*

Հայաստանեայց եկեղեցին, միասնաբար սրբացուց Վարդանանցի 1036 նահատակները:

Եւ Վարդանանցի պատերազմին թուականը, հայկական կրօնական ամենէն կարեւոր «Տօն»երէն մէկը ըլլալով, նուիրագործուեցաւ ու հռչակուեցաւ:

Եւ հայ ժողովուրդը 1550 տարիներէ ի վեր, ամէն տարի հայկական վերածընունդի օրը եղող Վարդանանցի տօնը կը յիշատակէ, Զրիստոնէական տօներէն շատ տարբեր խորք ունեցող Ազգային ջերմեռանդութեամբ:

Եւ մենք կը հաւատանք, որ 11-րդ դարուն, Թուրանական ցեղերուն կողմէ հայկական պետականութեան քանդումէն յետոյ, Օսմանեան ստրկութեան ենթարկուող հայ ժողովուրդին մինչեւ 19-րդ դար միաձոյլ մնալուն պատճառը, մեծ մասամբ Վարդանանցի զոհողութեան գաղափարականին ստեղծած «Միասնութեան» ոգին է:

Բայց, այս միասնութեան «Ոգի»ին մէջ, առաջին ճաթրտուքը ստեղծեց՝ Մխիթար Սեբաստացիին հիմնած Վաթողիկէ այլադաւան շարժումը:

Անհերքելի իրականութիւն մըն է, թէ Մխիթար Սեբաստացի մեծ ծառայութիւն մատուցած է հայ մշակոյթի զարգացման:

Բայց նոյնքան անհերքելի իրողութիւն մըն է՝ անոր կատարած պառակտիչ դերը՝ «Վարդանանցի հայկական միասնութեան ոգի»ի ջլատման մէջ:

Արեւմտեան պետութիւնները անով ու իր նմաններով յաջողեցան բաժանել հայ ժողովուրդը: Յետոյ ծաւալեցաւ աւելի լայն չափով՝ այլադաւանութեան «համաճարակ»ը հայութեան մէջ:

Անոր յաջորդեց, «Բողոքական» հոսանքը, որ իր սկիզբին մանաւանդ, հայութիւնը իր արմատներէն բոլորովին հեռացնող օտար վարդապետութիւն մըն էր:

Հայ ժողովուրդը պառակտելու աշխատանքներուն մէջ, արեւմտեան պետութիւններուն մեծագոյն յաջողութիւնը՝ հայ երիտասարդ մտաւորականներուն մէջ, այսպէս կոչուած՝ «Նոր ազատամիտ» գաղափարներուն տարածումը եղած է:

Եւ դժբախտաբար, այս մտաւորական երիտասարդներուն «կը պարտինք», հայութեան մէջ քանդիչ մեծագոյն դերը կատարող՝ «Պոլսոյ Ազգային Սահմանադրութիւնը»:

Այս սահմանադրութիւնն էր, որ «Հայութիւնը» հեռացուց Արեւմտեան Հայաստանի իր արմատներէն և կեդրոնացուց Պոլսոյ մէջ, Օսմանեան Սուլթաններուն հովանիին ներքեւ:

Բայց արեւմտեան պետութիւնները, մեր համոզումով, հայութեան մահացու հարուածը տուին՝ զանազան կուսակցութիւններու և միութիւններու ստեղծումով, որոնցմէ մէկ քանին, հայկականութեան ծառայելու դիմակին տակ, ընդ-

հանրապետ գործակալության էին Արեւմտեան պետութիւններուն:

Այստեղ կը հրատարակենք փաստաթուղթ մը, որ շատ բացայայտօրէն կը հաստատէ մեր վարկածը՝

«Հայերը՝ արեւմտեան պետութիւններուն և սպասակներուն ծառայող և ածանց գնուած գործակալներ են»:

Այս փաստաթուղթը առնուած է՝ Արթիւր Պէլլէրեանի 1983-ին Փարիզ հրատարակուած և հետեւեալ վերտառութիւնը կրող գիրքէն:

“LES GRANDS PUISSANCES- L'EMPIRE OTTOMAN ET LES ARMÉNIENS DANS LES ARCHIVES FRANÇAISES [1914 - 1918 ]”

Note du Sous-Directeur d'Asie-Océanie<sup>3</sup>

N. 4

Paris, le 4 décembre 1917.

Je ne crois pas à la possibilité de créer un Kurdistan autonome. Le Kurdistan est une vaste région habitée par les Kurdes, les Arméniens, les Nestoriens, des Turcs, des Circassiens, des Géorgiens, etc. Mais je crois très possible, si on veut y mettre le prix, de gagner les tribus kurdes. C'est une question d'argent et de doigté. Peut-être le colonel Chardigny, qui est sur place, pourra-t-il trouver les intermédiaires capables de faire ces marchés.

Il faut prendre garde de ne pas apparaître comme favorisant trop les Kurdes, nous nous aliénerions Arméniens et Géorgiens qui passeraient aux bolcheviks. Or, nous pouvons avoir et garder avec nous les chrétiens à peu de frais tandis que les Kurdes coûteront très cher et nous quitteront dès qu'on leur offrira davantage.

(A.M.A.E., Guerre 1914-1918, Turquie, tome 894, ff. 37-37 v).

432 թիւ փաստաթուղթին մէջ ցաւով կը տեսնենք, թէ հայերը վճարուած են, որ “BOLCHEVIK”ներուն կողմը չանցնին:

Այս փաստաթուղթը, իր մէջ կը պարփակէ, հետեւեալ ահռելի իրականութիւնը. «1918-1920-ի հայկական պետութեան ղեկավարները՝ Արեւմտեան պետութիւններուն ծախուած ըլլալուն պատճառաւ, կիրարկեցին, մինչեւ վերջ, այն ետպապաշտիկեան, սենսկեայի և տիմոր ֆազմակտեւիւնը, որուն եետեանով հայ ազգը կորսնցուց իր եայրենիին մեծ մասը՝ Արեւմտեան Հայաստանը տիրապետեալ»:

Երբ 1920-ին թրքական զօրքերը, Ջազըմ Ջարապեգիրի հրամանատարութեամբ, կը յարձակին կրկին Հայաստանի վրայ, բնաջնջելու համար Եղեռնէն փրկուած հայերու բեկորները, 1918-1920-ի կառավարութեան վերջին վարչապետը՝ Դրօն, մետասաներորդ թուական ու ստիպողաբար, կը հրաւիրէ Կարմիր Բանակը, որ ազատէ հայերը:

Մինչ այդ, թրքական ուժերը յառաջացած էին մինչեւ Երեւանի մօտերը, և Հայաստանին մնացած էր միայն լեռնային շրջան մը, հազիւ 10,000 քառ. քմ. տարածութեամբ:

Եւ Կարմիր Բանակը ետ կը մղէ թրքական զօրքերը և կը վերագրաւ մաս մը հայկական հողերէն:

Այսօրուան շուրջ 30,000 քմ.-ոց Հայաստանը, 1920-ին հայերուն օգնութեան հասած Կարմիր Բանակին կը պարտինք:

1918-1920 հայկական կառավարութեան հակապաշտիկ ղեկավարները, Հայաստանի Խորհրդայնացումէն յետոյ, Ջանգեզուր կը քաշուին:

Փետրուար 1921-ին անոնք, Նժդեհի առաջնորդութեամբ, վերջին աղէտի մըն



ալ կ'ենթարկեն Հայաստանը Փետրուար 1921-ի ապստամբութեամբ, և հազարաւոր հայերու սպանութեան պատճառ կ'ըլլան:

1921-ի Փետրուարեան ապստամբութեան ծախողութենէն յետոյ, այս «վճարած» հակապոլշեիկները, Հայաստանէն կը փախչին և նախ Պարսկաստան (Թաւրիզ) կ'ապաստանին և հոն կը շարունակեն իրենց հայրենավնաս աշխատանքները:

Եւ ամենէն ցաւալին՝ այս նախկին հայ պետական ղեկավարները, Թաւրիզի մէջ կը գործակցին Վրաստանի Մենշեիկ կուսակցութեան և Ազերպայճանի Մուսավաթ կուսակցութեան ղեկավարներուն հետ: Եւ կը կազմեն միութիւն մը՝ «Պրոմթէի Ուխտ» անունով, որուն առաջնակարգ նպատակն էր՝ Կովկասի մէջ Խորհրդային կառավարութիւնները խորտակել:

Այստեղ անելորդ կը նկատենք անելցնել, թէ այս հակասովետական «Պրոմթէի Ուխտը» հովանաւորողները [այսինքն այս ղեկավարները ծախու առնողները] անգլիացիներուն առաջնորդութեամբ գործող արեւմտեան պետութիւններն էին:

Եւ այս Հայերուն՝ Ազերիներուն և Վրացիներուն հետ կազմած հակա-սովետ «Պրոմթէի Ուխտ»ը, վաւերացուեցաւ 1926-ին՝ Հ.Յ.Դաշնակցութեան կողմէ:

\*\*\*

Բոլոր հայրենասէր հայերը գիտեն, թէ 1920-էն յետոյ, այս «Պրոմթէի Ուխտ»ին ղեկավարները, ծանօթ կուսակցութեան աթոռի հիւանդ շարքայիները և այդ կուսակցութեան կոյր հետեւորդները և միամիտ համակիրները որքա՛ն աշխատեցան, ինչե՛ր ըրին, որ «Պրոմթէի Ուխտ»ը յաջողի և Սովետական Հայաստանը կործանի:

Եւ վերջապէս 1991-ին, ներսի և դուրսի դաւաճաններուն շնորհիւ, «Պրոմթէի Ուխտ»ը յաջողեցաւ Հայաստանի մէջ Սովետական կարգերը տապալել, և Հայաստանը այսպէս ըսուած՝ «Ազատ և Անկախ» Պետութիւն հռչակուեցաւ:

Եւ այսօր, Հայաստանի անկախութենէն յետոյ, գրեթէ տասը տարիներ անցան:

Եւ 70 տարիներ շարունակ «Անկախութիւն, Անկախութիւն» գոռացող այդ մեծ «Ազգասէրներ»ը, տեսնելով այս օրուան Հայաստանի քառսային վիճակը՝ շշմած և շուարած են:

Այս ինչի՞ կը նմանի, գիտե՞ք: Կը նմանի այն տխմարին, որ իր նստած ճիւղը կտրելէ ետք, վար կ'իյնայ և ոտքերը կը կոտրէ: Եւ կը զարմանայ, թէ Ինչո՞ւ վար ինկած է:

Վերջերս հայրենի շատ մեծապատիւ մտաւորական մը, սապէս կ'արտայայտուէր. «Երկիր ենք կորցնում, հերի՞ք է: Պէտք է վերջապէս բռունցքը խփել սեղանին, յետոյ ուշ կը լինի»:

Ա՛յ տխմար մտաւորակա՛ն, դուն, այդ բռունցքդ, պիտի խփէիր դեռ 1988-ին, այդ թուականներէն սկսեալ Երեւանի մէջ, «Ղարաբաղի և Ազատութեան համար» հարիւր հազարներով խելագար հայերուն կատարած ցոյցերուն դէմ:

Այս կարգի մտաւորականներուն ըսենք. Դուք, շփացած և շատախօս հայաստանցի մտաւորականներ՝ դուք Սովետ. Հայաստանի շրջանին ձեր ապրած բարօր կեանքին արժէքը չգիտցաք: Ապերախտ մտաւորականներ, Հայաստանի դժոխային վիճակի մատնուելուն պատասխանատուներէն մէկն ալ դուք էք:

Դուք, [բացառութիւնները յարգելի են] ձեր ճղճիմ և "VODKA"էն խաթարուած ուղեղներով, քաջալերեցիք հայուն թշնամիներուն կազմակերպած «Ղարաբաղի» և «Ազատութեան» ցոյցերը և Ղարաբաղի դատը սխալ ուղղութեամբ տարիք:

Ռուբէն Սեւակի ըսածին պէս՝ «Փրցնել նետել պէտք է ձեզ պէս անպէտ մտաւորականներուն ուղեղները»:

## ՀԱՅՐԵՆԱԴԱԻԵՐՈՒՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ... (Շար. էջ 2-էն)

Բայց դուք, Ռուբէն Սեւակին ով ըլլալն ալ չէք գիտեր:

Այո դուք, առանց գաղափար մ'ունենալու թէ ո՞վ էր նահատակ հերոս քան-աստեղծ Ռուբէն Սեւակը, թուրքերէն յետոյ, անգամ մըն ալ զինք խաչեցիք և գողցաք անոր անունը և անով ստեղծեցիք նոր Սեւակ մը, որ Ռուբէն Սեւակին բոլորովին հակապատկերն է՝ «տխեղծ» և «անգիտակից»:

\*\*\*

Վերջերս, մեզի շատ ցաւ պատճառած գրութիւն մը- Փարիզեան հայկական թերթի մը մէջ լոյս տեսած խմբագրական մըն է, որուն մէջ այսպէս գրուած էր՝ «Սփիւռքի արմատախիլ բազմութիւնները, աւելի քան եօթանասուն տարի, անկախութիւն երազեցին իրենց հեռաւոր և խորթ- քանի որ ԽՈՐՀՐԴԱԾԻՆ- հայրենիքին համար...»

Մենք ալ պատասխանենք.— Սփիւռքի մէջ Սովետական Հայաստանը «ԽՈՐՀ» նկատողները՝ փոքրամասնութիւն մըն էին: «Պրոմթէի Ուխտ»ին բաթրոններուն կողմէ վճարուած գործակալները այս փոքրամասնութեան ուղեղները կը լուային, ազգասիրական ու ազատութեան կեղծ լոզունքներով, որ զիրենք հանեն Խորհ. Հայաստանին դէմ: Մինչդեռ հայրենասէր մեծամասնութեան համար, Սովետական Հայաստանը՝ հարազատ և բարգաւաճ հայրենիքն էր հայերուն:

«Պրոմթէի Ուխտ»ին ջահակիրները, 70 տարուան աշխատանքներէ յետոյ, վերջապէս յաջողեցան, մեզի համար անփոխարինելի հայրենիքը՝ Սովետ. Հայաստանը խորտակել: Ո՞վ միամիտ ազգասէրներ, այսօր ինչո՞ւ կը զարմանաք, որ ազատ անկախ Հայաստանը՝ աղքատ, անտէր և անյոյս(դուք էք խոստովանողը) երկրի մը վերածուած է:

Եւ ինչո՞ւ կը զարմանաք, որ Հայաստանի ժողովուրդին կէսէն աւելին այսօր լքած է իր հայրենիքը:

Եւ միջոց մը ետք, արեւմտեան Հայաստանին նման բոլորովին պարպուելով, հասուն պտուղի մը պէս, թուրքերուն ձեռքը կրնայ իյնալ:

Ա՛յս էր ուզածը «Պրոմթէի Ուխտ»ին ղեկավարներուն:

Հայուն թշնամիները յաջողեցան, երկար տարիներէ ի վեր իրենց պատրաստած ծրագիրը, ի վերջոյ գործադրել:

Միթէ իսկական հայրենասէր դաշնակցականները, այս ողբերգութեան ի տես, ինքնագիտակցութեան եկա՞ն, պիտի գա՞ն, և իրականութիւնները տեսնելու կարողութիւնը պիտի ունենա՞ն արդեօք:

Յուսանք և սպասենք:

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
**[ՎՐԷԾ ՌՈՒՔԵՆԵԱՆ]**

Երեքշաբթի 7 Մարտ 2000

ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԱԶՍԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՓՐՕՖ.  
ՏՕՐԹ. ՆԻԶԱՍԻ ՍԻՒԼԷՅՄԱՆՈՎ ԿԸ ՊԵՂԷ ԹԷ՝

**Հ.Հ. ՆԱԽԱԳԱՀԸ**  
**«ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՉՈՒՆԻ»**

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՌՈՒԲԵՆԵԱՆ]

Մենք բացարձակապես պիտի չուզեինք դոյզն կարեւորութիւն ընծայել թրջա-  
կան սա պնդումին, Հ.Հ.ի նախագահին թրջական ծագում վերագրող, եթէ Պե-  
տութեան Գլխաւորը, 11-6-1998-ին, Երեւանի մէջ, թրջական «Միլիոնէր» թերթի  
խմբագրապետին յայտարարած չըլլար, թէ՛ «Թուրքերուն հետ դաշնակից ան-  
գամ կրնանք ըլլալ»:

Մենք թրջական ճարտուր պիտի համարէինք Ռ. Զոչարեանին թրջական  
ծագում վերագրող խօսքը [թրջական թերթէ կատարուած մէջբերումին ամփո-  
փումը կարդալ յօդուածի վերջին], եթէ Նախագահը 19-11-1999-ին, Պոլսոյ մէջ  
գումարուած վեհաժողովին, «Մենք չենք կրնար առաջնորդուիլ ցեղասպանու-  
թեան յիշողութիւններով, քանի որ պէտք է մտածենք մեր երկիրներու շահերուն  
մասին» ըսած չըլլար, և կամ 27 Հոկտեմբերի բարոյական պատասխանատուն՝  
Սերժ Սարգիսեանը իր անձնակազմին ղեկավար և նաև Ապահովութեան Խոր-  
հուրդին քարտուղար նշանակած չըլլար, 27-10-1999-ի ողբերգութենէն ետք,  
Ազգային հեռատեսիլը անձնական «փրփականտի խողովակ»ի չվերածուէր ու  
վերջապէս՝ անձնական քարոզչութեան բանքերի վերածուած Ազգային հեռա-  
տեսիլը տեւական հայկական Բանակին ու Պետութեան Ընդհանուր և Զին. դա-  
տախազութեան դէմ անընդունելի յարձակումներ չկատարէր:

22-8-1998-ի «Նայիրի»ին մէջ, ընդվզելով Ռոպերթ Զոչարեանին «թուրքե-  
րուն հետ դաշնակից անգամ կրնանք ըլլալ» ըսելուն դէմ, սապէս արտայայտը-  
ւած էինք:

«Թուրքերուն ով ըլլալը չգիտցող նախագահ մը»:

Այդ օրերուն, մեր միտքէն չէր անցած, թէ Հայաստանի ներկայ Նախագահին  
դէմ կրնային նման վերագրումներ կատարուիլ:

Բայց քանի մը օր առաջ (14 Մարտ 2000-ին) լսելով Հայկական Բանակին  
վնասելու բնոյթ ունեցող «նշանակումներու հրամանագիրները», որոնք զին.  
շնչկավարութեան ներքին միասնութեան կրնան վնասել, այլևս ստիպուած կ'ըլ-  
լայնք մտածելու, թէ արդեօ՞ք Ազերի թշնամին գոր ըլլալու պատճառ չունի եղած-  
Ընդէն, կամ ճիշդ է ինչ որ կը վերագրուի:

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅԵՐՈՒՆ ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ**  
**ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ**

Ծատ անգամ ըսած ենք, թէ երկար տարիներ ապրեցանք թրջական լուծին  
ուակ: Եւ այդ տեսակէտով կրնանք իրաւունք ունենալ ըսելու, որ թուրքերը լաւ կը  
ճանչնանք:

Մեր պատանութեան տարիներուն ապրեցանք, Պոլսոյ շրջակայքը գտնուող  
Շախկին փիւզանդական գիւղ մը եղող Մաքրի գիւղի մէջ (ներկայիս, թրջացուած  
ունունով՝ BAKIRKÖY- 3 միլիոն բնակչութիւնով):

Այդ տարիներուն (1930-1940) Մաքրի գիւղի մէջ, յոյները և հայերը մեծա-  
ճասնութիւն էին, և թուրքերը մատի վրայ կը համրուէին: Անոնց բնակած տե-  
ղէրը, ընդհանրապէս քաղաքին շրջակայքը գտնուող թաղերն էին: Եւ այդ տա-  
րիներուն, իբր պատանի մեզ շատ տպաւորած էր, թուրքերուն հետեւեալ յատ-  
կանիշը:

Թուրք երիտասարդները, ատեն-ատեն, 30-40 հոգից խումբերով, կը խուժէին քրիստոնեայ թաղերը, և իրենց վայրագութեամբ սարսափ կ'ազդէին մեր վրայ:

Անոնք, գայլերու վոհմակներու նման, միշտ միասին կու գային և հաւաքաբար կը յարձակէին մեր վրայ, և մէկ հոգիի դէմ տասը հոգիով կը կռուէին:

Այս՝ «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ» տուած ուժն էր, որ իրենց համարձակութիւն կու տար:

Թուրքերուն այդ միասնական կեցուածքն է՝ իրենց յաջողութեան գաղտնիքը: Կենդանային բնագոյով կը հպատակին իրենց ղեկավարին հրամանին, տուած ատարկելու:

Թուրքը երէկ այսպէս էր: Այսօր ալ նոյնն է: Ամէն ազգ իր ցեղային նկարագիրը ունի:

Այստեղ՝ թուրքերուն ցեղային յատկանիշը բացատրելու ջանացինք:

Գալով հայերուն, ի՞նչ է անոնց ցեղային յատկանիշը:

Հայերը թուրքերուն բոլորովին հակապատկերն են [քիչ բացառութեամբ] - «ԻՆՋՆԱԳԼՈՒԽ» և «ԱՆՀՊԱՏԱԿ»: Եւ ամենէն կարեւորը՝ ամէն հարցի մէջ կը հակաճառեն և ընդհանրապէս հրամանի ենթարկուիլ չեն ուզեր:

Թերեւս մեր այս «թերութիւնները», երկար դարեր Բիւզանդական, Պարսկական և մանաւանդ թրքական լուծին տակ ապրած ըլլալնու հետեւանքներն են: Թանի որ այդ հանգրուաններուն, ամէն «Հայ - անձ», իր գլխուն «ճարը» նայեալ ստիպուած էր:

Այս տեսակէտով, ինչպէս որ նախապէս ալ ըսած էինք՝ «Մէկ հայ աշխարհ կ'արժէ» «Երկու հայ՝ ոչինչ կ'արժէ»:

\*\*\*

Հայոց վերջին Սպարապետ-ճահատակ Վազգէն Սարգիսեանին մէջ, իբր իսկական առաջնորդ - ղեկավար, մեր գնահատած ամենէն կարեւոր յատկանիշը, անոր միացնելու և ոգեւորելու կարողութիւնն էր:

Ան ուզեց հայուն նկարագրին ամենէն տկար գիծը եղող, ինքնագլուխ և անհպատակ կեցուածքը փոխել և հայուն մէջ ստեղծել «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ» ոգին:

Վազգէն Սարգիսեան 1991-թ.ներուն, Արցախի պատերազմին ամենէն դժնդակ տրերուն, միայն բացառիկ ղեկավարներու յատուկ իր ոգեւորող ձիրքին շնորհիւ, կրցաւ «Մահապարտներ»ու բանակ մը ստեղծել:

Վազգէն Սարգիսեան սկզբնական շրջանին, Սովետական Հայաստանի բոլոր երիտասարդներուն նման իրազեկ չէր Հայոց պատմութեան, հայ կուսակցութիւններու և Սփիւռքի մասին: Չէր գիտեր, թէ իսկութեան մէջ ո՞վ էր Դրօն և ո՞վ էր Նժդեհը: Եւ մանաւանդ չէր գիտեր, թէ ո՞վ էր և ի՞նչ ըրած էր Սոնթէ Մելքոնեանը: Բայց Վազգէն Սարգիսեան իսկական հայրենասէր մըն էր:

Եւ ան, քիչ ժամանակ ետք հասկցաւ, թէ ո՞վ ծառայած է ամենէն շատ իր հայրենիքին:

Ան գիտակցեցաւ, թէ Կարէն Տեմիրճեանը ինչե՛ր ըրած է Հայաստանին և հայութեան համար:

Եւ Վազգէն Սարգիսեան, իբր իսկական հայրենասէր հայ, չմտածեց, որ Կ. Տեմիրճեանը համայնավար մըն էր:

Իրեն համար ամենէն կարեւորը՝ Կ. Տեմիրճեան ծառայած էր հայրենիքին:

Այս մտածումներով է, որ ստեղծուեցաւ «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԴԱՇՈՆՔԸ»:

Վազգէն Սարգիսեան, Կարէն Տեմիրճեանին հետ միասին, կրցաւ սրտապնդել հայ ժողովուրդը:

Անոնք յոյս ներշնչեցին Հայաստանի ժողովուրդին՝ միասնաբար աշխատելու և միասնաբար յաղթահարելու համար դժուարութիւնները:

«ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ» էր կենսականը հայուն համար, ո՛վ որ ալ եղած ըլլար այդ հայը՝ Համայնավար, Դաշնակցական, Հնչակեան կամ Ռամկավար, և ինչ պիտակ ալ կրած ըլլար այդ հայը՝ Հայաստանի, Արցախի կամ Սփիւռքի հայը:

Այս «Ոգի»ով է, որ ստեղծուեցաւ «Հայաստան-Սփիւռք» համաժողովը:

Եւ այս համաժողովին, Վազգէն Սարգիսեան յայտարարեց, թէ՛ «21-ՐԴ ԴԱՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԴԱՐԸ. ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ԴԱՐԸ»:

\*\*\*

Դահիճ Նայիրի Յունացեան, 27-10 1999-ին, Հայաստանի Ազգային ժողովին մէջ սպաննեց Վազգէն Սարգիսեանը, Կարէն Տեմիրճեանը և վեց հայ ղեկավարներ:

Բայց ամենէն սարսափելին, այդ օր այս դաւաճանը, հայ ազգին մէջ սպաննեց նաեւ՝ հայութեան միասնութեան ոգին, և հայ ազգին վերածնունդի յոյսը:

Այս տեսակէտով, Նայիրի Յունացեանը պատմութեան պիտի անցնի՝ իբր հայութեան բոլոր ժամանակներուն ամենէն վայրագ դաւաճանը: Եւ իր սատանայական դիմագիծով, իբր ամենէն գարշելի հրէշը՝ պիտի անիծուի յաւիտեան:

\*\*\*

27-10-1999-ի ողբերգութենէն յետոյ, նախագահութիւնը փոխանակ հայութեան մէջ ծանր հարուած կրող միասնութեան ոգին դարմանել աշխատելու, նոյն այդ ոգիին վնասող կարգադրութիւններ կ'ընէ:

Առաջին օրէն, բնածին տրամաբանութեամբ հայ ժողովուրդը համոզուած էր, որ այս ողբերգութեան առաջնակարգ բարոյական պատասխանատուները նախագահութեան մօտիկ խմբակներու մէջ կը գտնուին: Եւ 27-10-1999-էն մինչեւ ներկայի զարգացումները կ'ապացուցանեն, որ ժողովուրդին բնազդը զինք չի խաբեր:

Այդ խմբակները, 27-10-99-ի օրերէն սկսեալ, ազգային հեռատեսիլի ճամբով բանակին դէմ անհրաւ յարձակումներ սկսան կատարել:

Բացայայտ էր, որ այս յարձակումները, ողբերգութեան քննութիւնը խափանելու կը միտէին: Վախը ունէին կարծես, որ որոշ մեղսակցութիւններ մէջտեղ կ'ելլեն: Մասամբ ալ եղաւ: Թէեւ վերջին խօսքը դեռ չէ ըսուած: Ծատ բան կը մնայ մութին մէջ:

15-12-1999-ին ձերբակալուեցաւ նախագահութեան խորհրդականը՝ Ալեքսանտր Յարութիւնեանը, 27 Հոկտեմբերի ողբերգութիւնը դրդած ըլլալու մեղադրանքով:

Եթե ուրիշ երկրի մը մէջ պատահէր այս ձերբակալութիւնը, նախագահը կը ստիպուէր հրաժարիլ: Բայց չեղաւ, ընդհակառակը՝ Բանակին և մանաւանդ Վազգէն Սարգիսեանին ընկերներուն դէմ, հեռատեսիլի ճամբով սկսած յարձակումները աւելի սաստկացան և 5 Յունուար 2000-ին ձերբակալուեցաւ Ազգային հեռատեսիլի փոխ-տնօրէն՝ Յարութիւն Յարութիւնեանը, ողբերգութեան մէջ դեր ունեցած ըլլալու մեղադրանքով:

Անոնք, Հայաստանի ազգային հեռատեսիլի խողովակով, այս ձերբակալութեան դէմ շատ աղմուկ բարձրացուցին, «Գող՝ սիրտը դող»ի հոգեվիճակով:

Եւ դժբախտաբար, հակառակ մեղսակցութեան ծանրակշիռ բոլոր կասկածներուն, նախագահութեան ալ անուղղակի թիկունքով, «Ազգային հեռատեսիլը» շարունակեց անիրաւ կողմը գովաբանել և անոր ամբարտաւան բանբերն ըլլալ:

Մենք, այս ցիւֆին վերաբերեալ, դեռ 16 Նոյեմբեր 1999-ին «ՆԱՅԻՐԻ»ի մէջ, Ազգային հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանին կատարած վնասակար ելոյթներուն մասին արտայայտուած էինք:

1999-ի ամրան ամիսներուն շատ ուրախ էինք, որ Հայաստանի հեռատեսիլը դիտելու կարելիութիւնը կ'ունենանք:

Բայց, 27-10-99-ի ողբերգութենէն յետոյ, երբ նոյն հեռատեսիլը, կողմնակցութիւն ցուցաբերելով, իշխանութեան մէկ բեւեռը գովաբանող խողովակի մը վերածուեցաւ, չկրցանք հանդուրժել այս ընթացքը և հրաժարեցանք դիտելէ այլեւ «Ազգային» որեւէ գիծէ գրեթէ զուրկ այս հեռատեսիլը:

Եւ Հայաստանի կառավարութիւնը, ամիսներ շարունակ հանդուրժելէ ետք այս հեռատեսիլին հակա-ազգային ելոյթները, 3 Մարտ 2000-ին կատարուած յայտարարութեամբ մը պահանջեց Նախագահին աշխատակազմի ղեկավար Սերժ Սարգիսեանին և Ազգային հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանին պաշտօնազրկումը: Անոնք ամբաստանուեցան Հոկտ. 27-ի ողբերգութեան դատական քննութեան վրայ ազդել ուզելու մեղադրանքով:

Հայաստանի կառավարութեան Վարչապետ Արամ Սարգիսեանին, «Միասնութիւն» դաշինքին նախագահներուն և ընդհանուր Դատախազին և զինուորական Դատախազին ներկայացուցած այս արդար պահանջքին դէմ, նախագահութիւնը տուաւ խիստ պատասխան և զայն մերժեց:

Մենք կը հաւատանք, թէ Հայաստանի Վարչապետին, Ազգային ժողովի մեծամասնութեան նախագահներուն, ընդհանուր Դատախազին և զինուորական Դատախազին դէմ ցուցաբերուած մերժողական այս կեցուածքն ալ կ'ապացուցանէ, որ 27-Հոկտ.ի ողբերգութեան մասին եղած որոշ կասկածները անհիմն չէին:

Գաղտնիք չէ, որ ժամանակէ մը ասդին, նախագահական և խորհրդարանական նոր ընտրութիւններու մասին ծայներ կը բարձրանան Հայաստանի մէջ: Բայց մենք կը կարծենք որ Ռ. Զոչարեան, իր որդեգրած ներկայ դիրքորոշումով, պիտի աշխատի աթոռի վրայ մնալ մինչեւ Յունիս 2000: Եւ անհաւանական չէ, որ այդ թուականին, Սահմանադրութեան իրեն տուած իրաւասութեամբ, Նախագահը իրաւունք ունենայ երեսփոխաններուն ընտրուելէն տարի մը վերջ, Ազգային ժողովը լուծելու և նոր ընտրութիւններու թուական որոշելու: Նկատելով, որ «Միասնութեան Դաշինքին» մեծամասնութիւն կազմած Հայաստանի Ա.Ժ.ի Ա. Գիստը 10 Յունիս 1999-ին գումարուած էր, 10 Յունիս 2000-էն սկսեալ, ան իրաւունք պիտի ունենայ Ազգային ժողովը լուծելու:

Հայաստանի ներքաղաքական վիճակը մենք շատ մտահոգիչ կը գտնենք: Ներկայ որոշ գործընթացները կը միտին կազմալուծելու Վազգէն Սարգիսեանին

ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ... (Շար. էջ 2-էն)

և Կարէն Տեմիրճեանցից ստեղծած «ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔԸ»: Հայրենի իշխանութեան մէկ բեւեռից որոշ դիրքորոշումները, մեք կը հաւատանք, որ ազգավնաս են, շատ վտանգաւոր, ուստի և՛ ո՛չ հայաբարոյ:

«ԹԻԻՐՔԻՅԷ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ԱՆՀԵԹԵԹ ՊՆԴՈՒՄ ՄԸ

... ԲՈԶԱՐԵԱՆ ԹՐՔԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԻ

Այսօրուան «Թիւրքիյէ» թերթին մէջ (նոյնը գրած էր նաեւ «Ազամ» թերթը) Միւշֆիք Նատիր, արձագանգելով Ատրպէյճանի Ազատական Կուսակցութեան ղեկավարի պնդումին, կ'ընէ անհեթեթ յայտարարութիւն մը, թէ Հայաստանի Նախագահը՝ Ռ. Քոչարեան թրքական ծագում ունի:

Կուսակցապետ Փրօֆ. Տօքթ. Նիզամի Սիւլէյմանով պնդեց, թէ Հայաստանի Նախագահը ունի Ռամիզ անունով եղբայր մը և վստահեցուց, որ ինք երկու եղբայրները «քով քովի բերելու համար ամէն ջանք պիտի վատնեմ»:

«Մարմարա» - Պոլիս, 24-11-1999

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
{ԿՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}

Երեքշաբթի 21 Մարտ 2000

Ա՛Լ ԿԸ ԲԱ՛ՒԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ  
 ԱՅՍՔԱՆ ՉԱՐԻՔԸ ՀԱՅ ԱԶԳԻՆ  
 ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
 [ԿՐԵԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

27-10-1999-էս թ վեր, ռայուս ռայրօսրքրս աստրօասարար դէպր անդունդ դիմելուն առաջնակարգ պատասխանատուն կը կարծենք, որ պետական քաղաքականութիւնն է, զոր կը սեպենք անպատասխանատու և պառակտիչ:

Այլապէս, ինչպէ՞ս մեկնաբանենք, 27-Հոկտեմբերի աղէտէն ասդին, հայ ազգը, մանաւանդ հայրենի սահմաններէն ներս, հայութիւնը վատէն վատագոյնի տանող և բաժանողական կեցուածքները, որոնք համազօր են կրակի վրայ իտ թափելուն, գրգռիչ ու բաժանարար:

Մեր կարծիքով՝ հայ ազգին միասնութեան խորհրդանիշը եղող նախագահ մը, Բանակին ղեկավարները և միասնութեան Դաշինքին առաջնորդները քով քովի բերելով զանոնք պիտի հանդարտեցնէր, պիտի համոզէր և խրախուսէր:

Եւ այս ձեւով բոլոր կասկածներուն և բաժանումներուն առաջը պիտի առնուէր: Պիտի փարատէին նախագահութեան և իր շրջապատին շուրջ ստեղծուած կասկածները:

Բայց, ի՞նչ տեղի ունեցաւ:

Առաջին օրէն, բանակին հրամանատարութեան կողմէ ներկայացուած պահանջները, ողբերգութեան մէջ պատասխանատուութեան ակնյայտ բաժին ունեցածներուն հրաժարումը ուզող, մերժուեցան բիրտ պատասխանով մը:

Ինչո՞ւ, ի՞նչ էր պատճառը:

Եթէ անոնք ընդունուէին, մենք կը հաւատանք, որ բանակին և պետութեան միասնութիւնը անով վերստեղծուած պիտի ըլլար:

Եւ այս էր, Պետութեան մը վերին իշխանութեան առաջին պարտականութիւնը՝ «միացնել և ոչ թէ բաժանել»:

Բայց, մենք, հակառակը տեսանք.

Տասըհինգ օր տեւողութեամբ, ընդդիմութիւն ցոյց տրուեցաւ նոր կառավարութեան կազմուելուն: Երկար ու յամառ սակարկութիւններով ջանքեր եղան, որ ուզուած անձեր կառավարութեան մէջ մտնեն, որ ապագային կարելի ըլլար, անոնց միջոցաւ, հայկական պետութիւնը ուզուած ուղղութեամբ առաջնորդել:

Եւ ո՞ր կ'առաջնորդուի հայ ազգը ներկայ ընթացքով:

11-6-1998-ին Հ.Հ.ի Նախագահին կողմէ թրջական «Միլիլէթ» թերթին խըմբագրապետին տրուած յայտարարութեան ուղղութեամբ. «Թուրքերուն հետ ռաշնակից անգամ կրնանք ըլլալ»:

\*\*\*

Մենք կը կասկածիմք, որ Թուրքն անգամ կրնայ մաղթել նման սերտակցութիւն:

Մեր գնահատութեամբ՝ ներ-պետական միասնութիւնը տկարացնելու համազօր որոշում էր, Սերժ Սարգիսեանը նախագահական անձնակազմին ղեկավար և նաեւ ապահովութեան խորհուրդին քարտուղար կարգելը:



Նոյնքան ցաւալի էր, որ 27-10-1999-էն սկսեալ, Հայկական Ազգային Հեռատեսիլէն, տխրահռչակ Վազգէն Մանուկեան, Պարոյր Հայրիկեան ու իրենց նմանները, «վերին իշխանութեան» կարգադրութեամբ, սկսան իրենց մաղձը թափել հայկական բանակին դէմ, ազատարարի և մարդկային իրաւունքներու ռահվիրայի հովեր տալով ինքզինքնուն:

Մենք, առաջին օրէն նկատեցինք, վերնախաւին հաշտոյն մանկլաւիկի դեր կատարող հեռատեսիլի տնօրէն Տիգրան Նաղդալեանին կատարած վնասաբեր դերը հեռատեսիլէն:

Ան՝ Ազգային հեռատեսիլը վերածեց, հայ ազգին դէմ սադրիչ գործարքներու կեդրոնի մը:

Երեւանի հեռատեսիլէն կատարուած պառակտիչ ելոյթները դիտելով մենք, հեռաւոր Ֆրանսայի մէջ, կ'ընդվզէինք հայկական պետութիւնը տկարացնող ազգավնաս, անգամ թրջավայել սա քարոզչութեան դէմ:

Չէինք ուզեր հաւատալ, որ հայկական պետական հեռատեսիլը կրնար այս աստիճան զրպարտիչ ու բաժանող դեր մը կատարել:

Եւ մանաւանդ, տեսապէս շարունակուող այս հիմքէ զուրկ վերագրումներուն դէմ, ոչ մէկ անձի, ոչ մէկ կազմակերպութեան պատասխանատուի առիթ չէր տրուեր, մանաւանդ սկիզբները, որ հակազդեմ ու պաշտպանեմ իրականութիւնը:

Հեռատեսիլէն կատարուած այս հայավնաս չարախօսութիւններուն նպատակը հասկնալը, շատ դժուար չէր:

Նախագահութեան խօսափողի վերածուած այս կայանի նպատակակէտը, Ազգային ժողովին մէջ մեծամասնութիւն կազմող «Միասնութեան Դաշինքը» նման զրպարտութիւններով տկարացնել և հաշուեյարդարի ենթարկել էր:

Չէ՞, որ դաւանան դահիճ Ն. Յունանեան ըսած էր, թէ՛ «Կը ցաւիմ, որ Ազգային ժողովին պատգամաւորներուն «մեծամասնութիւնը» չկարողացայ սպաննել»:

Նայիրի Յունանեանին կէս ձգած աշխատանքը, իր երբեմնի ընկերը եղող Տ. Ն.ը կը կատարէր, այսինքն՝ պառակտել «Միասնութեան Դաշինքը»:

\*\*\*

Միջոց մը ետք մենք, իբր սրտցաւ ու նախանձախնդիր հայ, չկրցանք հանդուրժել «ազգային» կոչուած այս հեռատեսիլին...ապազգային կեցուածքը և այլևս չդարձուցինք կոճակը Հայաստանի Դ. Վ.ին վրայ:

Եւ կը զարմանայինք, թէ Հայաստանի կառավարութիւնը ինչպէ՞ս կը հանդուրժէր և արգելք չէր ըլլար «Հայկական» ըսուած այս հեռատեսիլին չարախօսութիւններուն:

Եւ վերջապէս, հինգ ամիսներ տեսող հանդուրժողութեմէ յետոյ, 3 Մարտ 2000-ին, միասնութեան դաշինքը Վարչապետին, ընդհանուր Դատախազին և գինուորական Դատախազին ալ համամտութեամբ զեկոյց մը հրատարակելով, Նախ. Զոչարեանէն պահանջեցին Տիգրան Նաղդալեանի և Սերժ Սարգիսեանին պաշտօնազրկուիլը:

Բայց, մեր համոզումով, անոնք շատ ուշ էին մնացած: Կառավարութիւնը պէտք էր, առանց վարանելու, առաջին օրէն դէմ ելլեր հեռատեսիլին չարախօսութիւններուն: Եւ սակայն, տարօրինակ չէ՞, որ Նախագահը, այս պահանջը «անհեթեթ» որակելով, զայն մերժեց:

Բայց, անկեղծ ըլլանք ըսելու, որ մեզ շատ ալ չզարմացուց ազգային նախանձախնդրութեան պակաս մատնող այս վերաբերումը:

Եւ նախագահութիւնը, Միասնութեան Դաշինքին և Վարչապետին պահանջը մերժելէ ետք, միասնութեան դաշինքին իբր հակահարուած՝ հրամանագիր մը

ստորագրեց, որով Բանակին և Պաշտպանութեան նախարարութեանն ենք, մեծաթիւ պաշտօնի փոփոխութիւններ կատարեց: Մեր գնահատութեամբ՝ այս քայլը կը վնասէր Բանակի միասնութեան պահպանումին և կը քողարկէր հրամանատարութեան անդամները իրար հակադրելու ծածուկ նպատակ մը:

\*\*\*

Կատարուած նշանակումներուն մէջ ամենէն զարմանալին՝ Ջօր. Մանուէլ Գրիգորեանին բանակի հրամանատարի պաշտօնէն հեռացուելով Պաշտպանութեան նախարարութեան տեղակալի պաշտօնին կարգուիլն է:

Ո՞վ է Մանուէլ Գրիգորեան: Ան, Վազգէն Սարգիսեանին «մահապարտներու բանակ»ին մաս կազմած է, Արցախի մէջ հերոսաբար կռուած և մեծ ծառայութիւններ մատուցած: Եւ այս ծառայութիւններուն համար ալ, «Զօրավար»ի տիտղոսին արժանացած:

Շատերուն ծանօթ է, որ Մանուէլ Գրիգորեան, 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան օրերուն, իր սիրելի ընկերոջ՝ Վազգէն Սարգիսեանին նահատակման պատասխանատու նկատած «ղարաբաղցիներ»ը և անոնց խմբակը «քշելու համար», իր բանակով Երեւան մտնել ուզած էր:

Բայց, քանի մը ղեկավարներ, օրինապահութեան մէջ մնալու մտահոգութեամբ, յաջողած էին տարհամոզել զինք:

Մենք կը հաւատանք, որ այս շատ օրինապահ անձնաւորութիւնները եթէ արգելք չըլլային Մանուէլ Գրիգորեանին, Հայաստան իր ներկայի քաղաքական անհանդուրժելի և վտանգաւոր վիճակին պիտի չմատնուէր:

Արդէն 1995-ին, նոյն ձեւով, Վազգէն Սարգիսեան, բանակը Երեւան իջեցնելով, Հայաստանը ազատած էր Ազգային ժողովին վրայ յարձակող Վազգէն Մանուկեանին և անոր գրգռած խուժանին ձեռքէն:

27-Հոկտեմբեր 1999-ին, այս շատ օրինապահ անձնաւորութիւններուն արգելք ըլլալը Մանուէլ Գրիգորեանին, որ իր բանակով Երեւան մտնէ, կը կարծենք, թէ շատ սուղ սկսած է արժել Հայաստանին:

Նախագահութեան կողմէ Մանուէլ Գրիգորեանի Պաշտպանութեան նախարարութեան տեղակալ նշանակուիլը, մեր գնահատութեամբ, բարի դիտաւորութեան արդիւնք չէ:

Նախ և առաջ, Մանուէլ Գրիգորեանը իր հողին վրայ կռուած մարտիկ զինուոր մըն էր: Ինքը, արհեստով վարորդ եղած էր: Ո՛չ շատ մեծ ուսում ունէր և ոչ ալ զինուորական վարժարան ակադեմիա: Այս տեսակէտով՝ անոր Պաշտպանութեան նախարարութեան տեղակալի պէս զինուորական բարձրագոյն ուսում պահանջող պաշտօնի մը նշանակուիլը, կը տարուի մտածելու, որ Բանակէն ենք հակասութիւններ զարգացնելու միտող ծրագրի մը մէկ մասն է:

Կը տարուիս հարցնելու .

1.- Զինք հրամանատարի կոչումէն հեռացնելով Պաշտպանութեան նախարարութեան մէջ ներմուծելը, արդեօ՞ք «շատ համարձակ ու տաքարիւն» զինուորականը ապագային «պետական յեղաշրջում» մը փորձելու «վտանգէն» ետ կեցնելու համար էր:

2.- Եւ մանաւանդ՝ արդեօ՞ք, այս անպէտ նշանակումով, բանակի ղեկավարութեան միջև նախանձի ու թշնամութեան սերմեր ներմուծուած չեն ըլլար:

Բայց մենք կը հաւատանք, որ Մանուէլ Գրիգորեանի պէս հայրենասէր և հերոս զինուոր մը՝ չի կրնար «խամաճիկի վերածուիլ»:

Այս տեսակէտով, Մանուէլ Գրիգորեանը, նոյնիսկ բանակէն հեռու՝ Պաշտպանութեան նախարարութեան մէջ ալ գտնուի, գլխու վրայ «Դամկլեան Սուր» մը ըլլալէ պիտի չդադրի:

\*\*\*

Հայաստանի ներկայ դժնդակ օրերէն բնական է, որ պիտի օգտուէին տխրահրոջակ Պարոյր Հայրիկեանը և Վազգէն Մանուկեանը: Առաջինը՝ մանաւանդ: Ազգային հեռատեսիլէն անոնք, դեռ մինչեւ այսօր, ուժգնօրէն կը շարունակեն իրենց մահագոյժ քարոզները:

Պարոյր Հայրիկեան՝ միասնութեան Դաշինքին և Վարչապետին զեկոյցով մը Տիգրան Նաղդալեանի և Սերժ Սարգսեանի պաշտօնագրկումը պահանջելը, «Խօսքի ազատութեան դէմ» հարուած նկատեց:

Պ. Հայրիկեանը Սովետական Հայաստանի շրջանին, իր հակասովետ և անջատողական արարքներուն համար բանտարկուած անձ է: Ինքն էր ատենին ըսողը. «ՀՈԳ ՉԷ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ, ԹՈՂ ՄԵՎ ՀԱՏ ՀԱՅ ՄԼԱՅ, ԲԱՅՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՋԱՏ ԵՒ ԱՆԿԱՄ ԸԼԼԱՅ»:

Արեւմուտքի գործակալ մը եղող Պարոյր Հայրիկեանին կնոջը հրեայ ըլլալը եթէ յիշեցնենք, կը կարծենք, թէ շատ բան բացատրած կ'ըլլանք:

30 Մարտ 2000-ին Երեւանի մէջ, Վ. Մանուկեանին իր կուսակցութեան ժողովին ընթացքին կատարած յայտարարութիւնը շատ ցնցիչ է՝ «Այսօրուան իշխանութիւնը, քաղաքական կացութեան անել հանգամանքը գիտակցելով, ժամ առաջ որոշումներ առնելու է: Եթէ ոչ՝ ժողովուրդը նախաձեռնութիւնը առնելով պէտք եղածը կ'ընէ»:

Ժողովուրդը ուղի հանելու սպառնալիք ընող Վազգէն Մանուկեանը, նախկին Ղարաբաղի Կոմիտէ-ին անդամ, Լեւոն Պետրոսեանի շրջանին վարչապետ և յետոյ՝ 1995-ին նախագահական ընտրութիւններուն թեկնածու եղած նոյն անձնակազմինն է:

Այս Վազգէնն էր, որ 1995-ի նախագահական ընտրութիւններուն արդիւնքները չընդունելով, ժողովուրդը բողոքի ցոյցի մղեց: Ժուցարարները, խուժանի մը վերածուելով, Վ.Մ.ի առաջնորդութեամբ յարձակեցան Հայաստանի Ազգային ժողովին շէնքին վրայ, զայն գրաւեցին և վիրաւորեցին Ա. Ժ.ի նախագահը և ուրիշ պատասխանատուներ:

Բարեբախտաբար, այն ատենուան Պաշտպանութեան նախարար Վազգէն Սարգսեան, Բանակը Երեւան իջեցուց, և եղբայրասպան կոիւին և ապստամբութեան արգելք եղաւ:

27 Հոկտեմբեր 1999-ին, Ն. Թունանեանին Ա.Ժ.ի մէջ գործած՝ (Ծար.ը տես՝ էջ 12)

### ԹՈՒՐԻ ՄԱՄՈՒԼ

## ԹՐԹԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԵՐԵՒԱՆԻՆ

Թրթական «Աշխատ» օրաթերթին մէջ բուրբ լրագրող ձօշուէն Գրքեա գրած է.

«...Երեւանի ղեկավարները պէտք է գիտնան, որ հայկական Սփիւնֆին եակաթուրք ամէն մէկ քայլին փոխարէն Հայաստան Թուրքիոյ կողմէ պիտի պատժուի: Սակայն, եթէ Երեւան ռզմտութեամբ շարժի, Թուրքիա պատրաստ պիտի ըլլայ ամենալայն գործակցութեան մը»:

«...Հայաստան, որ Խորհրդային գաղթաւորութեան շրջանէն Ռուսերու միակ վստահելի ոչ ուս ազգակի հանգամանքով փոքր բանակ մը կազմելու հարկաւոր տարրերը ունեցաւ, այդ առաւելութիւնը գործածեց ադրբեջանական հողերու վրայ յարձակելով: Հայաստանը եղբայր Ադրբեջանի առաջին դուրս բերելու համար, Թուրքիա կրնայ հարկը զգալ համազէններու ջոկաւոր գործածելու, որոնց թիւը մէկ ձեռքի մտանքներու թիւէն նուազ է: Այս նպատակով, նոյնիսկ մեզի անհրաժեշտ չըլլար հայկական տարածք մտնել»:

**ԱՆ ԿՐ ԲԱԴԷ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՅՍՔԱՆ ՉԱՐԻՔԸ ՀԱՅ... (Շար. էջ 2-էն)**

ողբերգութիւնը, 1995-ին Վ. Մանուկեանի Ազգային ժողովը գրաւելու նախափորձէն օրինակ առնելով կատարուած է: Եւ այսօր, նոյն Վազգէն Մանուկեանը, աթոռի մարմաջէն տարուած, 1995-ին ըրածին նման, ժողովուրդը ոտքի հանելու պատգամ կու տայ:

\*\*\*

1988-թէն սկսեալ Ղարաբաղի և Հայաստանի «ազատութեան» համար սկսուած շարժումը, կրկին ու կրկին պիտի ըսենք, որ թէ՛ ռազմավարական, թէ՛ մարտավարական տեսակէտէ սխալ առնուած քայլ էր: Հայաստանին այսօր, Ղարաբաղի հարցին մէջ մխրճուած ըլլալուն պատճառաւ է, որ Թուրքիան ինքզինք ձերբազատուած կը զգայ հայկական Եղեռնի մէջ ունեցած պատասխանատուութիւնէն: Սխալ չհասկցուի՞նք: Մենք Ղարաբաղի ազատագրութեան դէմ չենք:

Եւ նոյն Ղարաբաղի հարցին պատճառաւ ալ, թուրքերուն կողմէ գրաւուած Արեւմտեան Հայաստանի հարցը, գրեթէ բոլորովին մոռցուած է:

Եւ այսօր Թուրքիան, Սիոնիստ արեւմտեան պետութիւններուն թիկունքով, Երոպական պետութիւն ըլլալ կ'որոճայ:

Եւ իբր Միջերկրականի մէջ մեծագոյն և զօրաւորագոյն պետութիւն, Հայաստանի դէմ, այս օրերուս, նոր սպառնալիքներ սկսած է կատարել:

28 Մարտ 2000-ին, թրքական «Ազաւմ» թերթին մէջ, Ճօշքուն Գըրճա հետեւեալ տողերով կը սպառնայ Հայաստանին. «Երեւանի դեկավարները պետք է գիտնան, որ Հայկական Սփիւռքին հակաթուրք ամէն մէկ քայլին փոխարէն, Հայաստան Թուրքիոյ կողմէ պիտի պատժուի»:

Ասիկա թուրքերուն կողմէ կատարուած բոլորովին նորածե սպառնալիք մըն է: Եւ այս սպառնալիքը, հրեաներուն Լիբանանի վրայ կատարած յարձակումներուն շունչով կատարուած է:

1992-թ.ներուն, Թուրքիոյ Նախագահ Թուրկուք Էօզալ, Արցախի պատերազմին պատճառաւ, Հայաստանի դէմ հետեւեալ սպառնալիքը կատարած էր՝

«ՀԱՅԵՐՈՒՆ ԴԱՍ ՄԸ ՏԱԼ ՊԷՏՔ Է: ԱՆՈՆՔ, 1915-Ի ԴԱՍԸ ՄՈՌԾԵՐ ԵՆ»:

Բարեբախտաբար, այդ օրերուն, Ռուսիոյ պաշտպանութեան նախարարը, Թուրկուք Էօզալին սա պատասխանը տուած էր.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԵԼԻՔ ՈՐԵՒԷ ԹԱՐՉԱԿՈՒՄ, ՀԱՄԱՇԽԱՐ-ՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌ Կ'ԸԼԼԱՅ»:

Այսօր թուրքերը՝ Հայաստանի դէմ բոլորովին նոր սպառնական լեզու մը գործածել սկսած են:

Եւ Ամերիկեան զօրավարները Ադրբեյճանի մէջ, խարխիսներ կառուցանելու համար, աշխատանքներ կը կատարեն:

Հիմա, այս բոլոր սարսափագրու պարագաները, մանաւանդ այսօրուան Հայաստանի տնտեսական սնանկացած վիճակը ու նաեւ Հայաստանի քաղաքական վտանգաւոր կացութիւնը նկատի առնելով, իբր սրտցաւ հայ մը, Հայաստանի դեկավարներուն աղերսանք կը ներկայացնենք ըսելով.

«Արեւմտեան պետութիւններուն սադրանքներուն և անոնց գործակալներուն պատճառաւ քառսի մատնուած Հայաստանը, իր այսօրուան վիճակէն ազատելու համար, առանց ժամանակ կորսնցնելու, միացեք Ռուսաստան-Պիէլլոուսիա միութեան:

Ռուսաստանի հետ միանալն է՝ հայ ազգին փրկութիւնը: Պատմութեան մէջ և տեւական, միայն Ռուս Ազգը օգնած է հայերուն:

Արեւմտեան պետութիւնները՝ պատմութեան մէջ, երէկ և այսօր, միշտ, հայ ազգին գերեզմանափորները եղած են: Ա՛լ կը բաւէ: Ասկէ յետոյ, կրկին արեւմըտեան պետութիւններուն զոհը մի ըլլաք»:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՈՒԼՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]**

**ՀԱՅԵՐԸ, 18-ՐԴ ԴԱՐԷՆ ՍԿՍԵԱԼ ԻՆՉՈ՞Ւ  
ՄՈՌՑԱՆ «ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ՈԳԻ»Ը**

...ԵՒ 100 ՏԱՐԻՆԵՐԷ Ի ԿԵՐ ԿԸ ՓԱՌԱԲԱՆԵՆ, ԵՒ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ  
ԱԼ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԵՆ ՓԱՌԱԲԱՆԵԼ ՆՈՐ ԵՐՋԱՆՆԵՐՈՒ  
«ՎԱՍԱԿ»ՆԵՐԸ՝ ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ «ԳՈՅՆ»Ի ՄՏՆՈՂ ՀԱՅՐԵՆԱԴԱԽԵՐԸ

20Ն՝ 24 Ապրիլի ճանառակներուն և ի մասնաւորի Ռուբէն Սեւակի որ գիտակցարար  
ճանառակուեցաւ մերժելով հրաժարիլ իր ազգային ինքնութենէն և  
Վարդանանց ճանառակներուն պէս նախընտրեց մեռելի վասն եւաւոտի և հայրենեաց  
**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
(ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ)

Սրաչաւ Վարդասասց պատերազմը՝ 451 թուականը, «Վասակ» անունը շատ ընդհանրացած հայկական անձնանուն մըն էր: Բայց Վարդանանց պատերազմին, Վասակը, Պարսիկներուն միանալով Հայ Ազգին դաւաճանած ըլլալուն պատճառաւ հայերը, այդ թուականէն յետոյ, Ազգիւցին «Վասակ» անունը և չգործածեցին իբր անուն: Եւ այն ատենուան հայերը, բացառիկ յստակատեսութեամբ, «Վասակ» անունը վերածեցին՝ «Չար» «Հայրենադաւ» «Դաւաճան»ի փոխարժէք իմաստ ունեցող հոմանիշի մը:

Այս ձեւով, բացայայտօրէն վճիռը տրուած էր Վասակին կեցուածքին, որ թըշնամիին միանալով անոնց ծառայած էր: Այսինքն՝ դաւաճանած էր Հայ Ազգին:

Հայաստանեայց Եկեղեցին, մինչև այսօր, Վարդանանցի պատերազմը, իբր Ազգային և Կրօնական Տօն կը յիշատակէ: Բայց մենք կը հաւատանք, որ Հայ Եկեղեցիներուն մէջ կատարուած Վարդանանցի պատերազմին յիշատակութիւնները, Վարդանանց պատերազմին իսկական զոհողութեան և հայրենասիրութեան «ոգի»ն ներկայացնելէ շատ հեռու են, և վերածուած են հասարակ ձեւական արարողութիւններու:

Բայց, ի՞նչ կ'ուզէիք որ ըլլային:

Նայե՛ցէք մեր այսօրուան հայ կրօնական առաջնորդներուն վարմունքին: Նայե՛ցէք հայ անուն կրող ղեկավարներուն իբր «հայ» անոնց կեցուածքին: Այսօրուան հայ կրօնական առաջնորդներուն և հայու անուն կրող ղեկավարներուն [բացառութիւնները յարգելի են] 451 թուականին Վարդանանց զոհաբերութեան պատերազմը մղած Հայ Ազգին շառափղները եղած ըլլալուն հաւատալը, իսկապէս անկարելի է: Եւ մենք համոզուած ենք, որ այսօրուան հայ ղեկավարներուն մեծ մասը, Վարդանանց պատերազմէն յետոյ «Վասակ» անունը դաւաճանի հոմանիշ հռչակած Հայ Ազգին հետ, բարոյական և հայրենասիրական նկարագրի տեսակէտով, որևէ կապ չունին:

\*\*\*

Մենք կը հաւատանք, որ Հայ Ազգին այսօրուան քառսային վիճակին մատնելուն առաջնակարգ պատճառներէն մէկը, «դաւաճան» և՛ «հայրենասէր» բառերուն իմաստին՝ վերջին տարիներուն ընթացքին, Հայ Ազգին թշնամիներուն ազդեցութեան ենթարկուած հայ կազմակերպութիւններու կողմէ բոլորովին տարրեր ձեւով մեկնաբանուած ըլլալն է:

Բոլորին ծանօթ է, որ Սփիւռքի մէջ ինքզինք «ազգասէր» դաւանող Դաշնակցական կազմակերպութիւնը, Սովետական հայաստանը իր հիմնուած օրէն սկսեալ «Պոլշեփկ» և «Թշնամի» նկատեց և 70 տարիներ տեսողութեամբ պայքարեցաւ անոր դէմ:

Եւ այս կազմակերպութեան շարքայիներուն համար, Ս. Հայաստանին համայնավար ղեկավարները՝ «դաւաճան»ներ էին, որոնք վնասած էին հայ դատին:

Բայց նոյն Սփիւռքին մէջ, ինքզինք «հայրենասէր» դաւանող հայ ժողովուրդին մեծամասնութեան համար ալ, Ս. Հայաստանը՝ Հայ Ազգին վերածնած հայրենիքն էր, և անոր ղեկավարները՝ իսկական հայրենասէրներ:

Ս. Հայաստանի դեմ ցուցաբերուած մտայնութեան ամէնէն կարկառուն արտայայտութիւններէն մէկուն, մենք ականատես եղանք Լոզանի մէջ, մեզի հանելի եղող եղելութեան մը առթիւ: 1983-ին էր:

Տեղւոյն պանդոկներէն մէկուն մէջ կատարուած ընդունելութեան կերկայ եղաւ նաև, այն ատենուան Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Գարեգին Բ.: Այդ օր, առաջին անգամ ըլլալով, ծանօթացանք Վեհ.ին, որ շատ հմուտ, պերճախօս և շնորհալի անձնատրութիւն էր:

Ընդունելութեան վերջաւորութեան, Կաթողիկոսը խրատական արտայայտութիւն մը ունեցաւ: Իր բացառիկ պերճախօսութեամբ կատարած յորդորներէն ետք, մեզ համար անմոռանալի եղող հետեւեալ խօսքերը ըսաւ՝

«Մի մոռնա՛ք ձեր հոգեւոր հայրենիքը. եւ ձեր սրտերուն մէջ միշտ վառ պահեցէք հայրենիքին գաղափարը»:

★ ★ ★

Բայց, ի՞նչ էր իրականութեան մէջ, այս «հոգեւոր հայրենիքը», եթէ ոչ Հ.Յ.Դ.ին ուզած «Ազատ և անկախ Հայաստանը»:

Եւ այս պերճախօս մտաւորական, Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ին համար, Սովետ. Հայաստանը հայրենիքը չէր, հայերուն հայրենիքը չէր: Այդ Հայաստանը «Պոլշէվիկներուն» հայրենիքն էր, թշնամիներուն հայրենիքը, դաւաճաններուն հայրենիքը:

Եւ Կաթողիկոս Գարեգին Բ., ծանօթ կողմին նման, պայքարեցաւ այդ Հայաստանին դէմ, մինչև վերջ, մինչև անոր կործանումը, հայուն վերջին յոյսը եղող բարգաւաճ Սովետ. Հայաստանին, որ ստեղծուի իրենց սրտին մէջ եղող «հոգեւոր» Հայաստանը՝ իբր թէ «Ազատ և անկախ հայաստանը»:

Եւ 21 Սեպտեմբեր 1991-ին ստեղծուեցաւ՝ Ազատ Անկախ Հայաստանը, որ քանի մը տարի վերջ վերածուեցաւ կերկայի «հոգեվարք Հայաստանի»:

Եւ ճամբան բացուեցաւ, այս անգամ իսկական «հոգեկան հայրենիք» մը ըլլալու՝ այսինքն ոչ-նիւթական, երեսակայական հայրենիքի մը ստեղծման առջեւ: Պարզ խօսքով՝ թշուառացած, կործանումի դիմող հայրենիք մը դառնալու ճամբուն մէջ մտաւ:

Բայց ինչպէ՞ս կարելի է բացատրել Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ի նման հմուտ և իմաստուն անձնատրութեան մը, այս աստիճան հայկական իրականութիւններուն դէմ դիրքորոշումը և իր հայրենավնաս կեցուածքը: Մեզի համար միակ բացատրութիւնը հետեւեալն է՝

Սփիւռքի մէջ, այս կարգի բարձր կարողութեան տէր հայ առաջնորդներ, ղեկավարներ, ժամանակի ընթացքին, արեւմտեան պետութիւններուն զանազան կազմակերպութիւններուն կողմէ կը հրապուրուին և անոնց ծիրին մէջ կը մտնեն:

Հայ Ազգին թշնամի այս արեւմտեան կազմակերպութիւններուն տուած նիւթական և հոգեկան առաւելութիւնները՝ անոնց աչքերը կը շլացնեն և ուղեղները կը խաթարեն:

Եւ այս ձեռով անոնք՝ արեւմտեան կազմակերպութիւններուն սպասարկող տեսակ մը աղանդաւորներու կը վերածուին:

Ստաբերեցէք Կլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ին վերջին տարիներու վարձագիծը:

Կաթողիկէ Լեւոն Տէր Պետրոսեանին թիկունքով 1995-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելէն յետոյ Ան, այս անգամ ալ Հայաստանի մէջ, շարունակեց համայնավարութեան դէմ պայքարը:

Եւ ամէնէն ցաւալին՝ Գարեգին Ա., իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս, Վատիկանի Բոլոնացի Պապին սաղարաններով, 1500 տարիներէ ի վեր անկախ կարգավիճակով գոյատեւող Հայաստանեայց Եկեղեցին, Հռոմի մէջ իր ստորագրած համաձայնագիրով, կամայ-ակամայ, Վատիկանի հովանաւորութեան կ'ենթարկէր:

Եւ այսօր, «Վասականման»ին գրեթէ համազօր արարքներու մէջ գտնուած Ա.Ն. Գարեգին Ա. Կաթողիկոսը հայոց կողմէ կը փառաբանուի:

Ո՛ր է հայ ժողովուրդին նախահայրերը եղած «Վարդանանց» հայերուն «Վասակ»ը հայրենուրաց հռչակող յստակատեսութիւնը:

\*\*\*

1999-ի ամարուան ամիսներուն Երեւանի մէջ կայացող Հայաստան-Սփիւռք համաժողովին, Վարչապետ Վազգէն Սարգիսեան հայ ժողովուրդին նոր շունչ մը, նոր յոյս մը տալ ուզեց՝ «մոռնալ անցեալը, և ապագային նայիլ, ստեղծելու համար բարգաւաճ Հայաստան մը»: «Զով-քովի» բերել բոլոր հայերը՝ Հայաստանն և Սփիւռքը. բոլոր հայկական ուժերը, ինչ գաղափարի ալ ծառայած ըլլան անոնք»: Ասոր համար ալ մոռնալ պէտք էր Հայ որոշ կազմակերպութիւններուն կողմէ, հայրենիքին դէմ, հայութեան դէմ կատարուած վնասները, ի շահ ապագայ բարգաւաճ Հայաստանին:

Իրապէս ալ սքանչելի գաղափար մըն էր Վազգէն Սարգիսեանին պատրաստած ծրագիրը, և միակ ճամբան՝ Հայ Ազգին փրկութեան:

Եւ հայ ժողովուրդը, կարծես պատրաստ էր մոռնալու ամէն բան, ի շահ հայրենիքին:

1999-ին ամրան ամիսներուն, Երեւանի մարզա-համերգային պալատին մէջ կատարուած Հայաստան -Սփիւռք համաժողովին, եղբայրութեան այս նոր հոգեվիճակը ստեղծուեցաւ:

Եւ Վազգէն Սարգիսեանին ըսածին պէս՝ «21-րդ դարը՝ հայութեան դարը պիտի ըլլայ, հայութեան վերածնունդի դարը» կարգախօսը ողջունուեցաւ:

Եւ այդ նոյն օրերուն, Հայաստանի կառավարութիւնը՝ ամենէն իմաստուն և ամենէն օգտակար որոշումը առնելու կը պատրաստուէր: Վարչապետ Վազգէն Սարգիսեանը, Կարէն Տեմիրճեանին հետ միախորհուրդ, պիտի ստորագրէր Ռուսիա-Պիեյրոուսիա միութեան անդամակցելու համաձայնութիւնը:

Բայց Հայ Ազգին դարաւոր թշնամիները՝ սիոնիստ արեւմտեան պետութիւնները քնացած չէին: Անոնք կը պատրաստուէին խափանելու և խորտակելու Հայ Ազգին ապագան երաշխատրող այս բարեբաստիկ աշխատանքները:

Հայուն թշնամիները նախ սկսան, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրութենէն ամիսներ առաջ, իրենց խամահիկներուն միջոցաւ խանգարել ընտրական մթնոլորտը:

Նախ՝ իրենց անցեալով շատերուն ծանօթ երկու կրօնականներ առաջին քայլը նետեցին և շատ անպատշաճ ձեռով Հայաստանի կառավարութիւնը ամբաստանեցին «ընտրութեան կը միջամտէ» ըսելով: Յետոյ, Յ կրօնականներ, նոյն ամբաստանութեամբ, Հայաստանի և Սփիւռքի մէջ զեկոյց մը հրատարակեցին:

Անոնց միացան, Արեւմտեան պետութիւններուն մանկաւիկները եղող Պարոյր Հայրիկեան և Վազգէն Մանուկեան, և կաթողիկոսական ընտրութեան յետաձգուիլը պահանջեցին: Եւ այս պղտոր ձայներուն մասնակցեցաւ Լ.Յ.Դ.Գ. և առաջիններուն պէս կաթողիկոսական ընտրութիւններուն յետաձգուիլը պահանջեց: Եւ ամենէն ողբերգականը՝ 27 Հոկտեմբեր 1999-ին, Արեւմտեան պետութիւնները, իրենց հայ գործակալ - դահիճներուն միջոցաւ, յաջողեցան հայկական պետականութեան մահու համազօր հարուած մը տալ:

Եւ այսօր, 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն 6 ամիսներ վերջ, դուք ձեզի հարց տուէք,

1999-ի Հայաստան-Սփիւռք համաժողովին արթնցուցած յոյսերէն, եղբայրութեան ոգիէն, հայկական վերածնունդի ծրագիրներէն այսօր ի՞նչ մնացած է:

Այս բոլոր բարի յոյսերը, ապագայի լուսաւոր ծրագիրները և եղբայրութեան «ոգին»՝ 27 Հոկտեմբեր 1999-ին, Վազգէն Սարգիսեանի և Կարէն Տեմիրճեանի հետ միասին «նահատակուեցան»:

★ ★ ★

Այսօր, այլևս կրնան ուրախանալ, «մութ» հոգիները, որոնք Վազգէն Սարգիսեանի կառավարութեան միջամտութենէն կը գանգատէին:

Այսօր Հայաստանի մէջ, դժբախտաբար ո՛չ Վազգէն Սարգիսեան կայ, ո՛չ ալ իսկական միաձոյլ ու հեղինակաւոր կառավարութիւն:

Յիշեցնենք, որ ծանօթ վեց կրօնականներուն մաս կը կազմէին նաեւ Թորգոմ Մանուկեան - Երուսաղէմի Պատրիարք, Խաժակ Պարսամեան - Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ, Պարգեւ Մարտիրոսեան - Արցախի Առաջնորդ:

Այս կրօնականները, որոնք իրենց հրատարակած գեկոյցով փոթորիկ էին ստեղծած, անոնք ալ կրնան ուրախանալ՝ իրենց գեկոյցին թիրախը եղած հայկական կառավարութեան 27 Հոկտեմբեր 1999-ին հայ դահիճներու կողմէ սպաննուիլը տեսնելով:

Նոյնպէս կրնան հրճուիլ՝ գաճաճ հոգիներ՝ Պարոյր Հայրիկեան և Վազգէն Մանուկեան, որովհետեւ ապագայ դաւադրութիւններուն համար Հայաստանը բոլորովին բաց է այսօր, դատարկուած՝ «մարմնով» և «հոգի»ով:

Բայց մենք կը կարծենք, որ ամենէն աւելի գործ կրնայ Լ.Յ.Դ.Գ. եղած ըլլալ:

Այս կազմակերպութեան ղեկավարներուն անցեալ տասնամեակներուն տրուած պարտականութիւնը, իրենց Արեւմուտքի «տէր»երուն կողմէ, Ս. Հայաստանը քանդել էր:

1.- Մինչև 1915, դաշնակցականներուն իթթիհատականներուն հետ ունեցած գործակցութիւնը [իրենք են խոստովանողը], կամայ-ակամայ մեծագոյն օգուտը մատուցեց սիոնիստներուն, Հայ Ազգը բնաջնջելու ծրագիրներուն յաջողութեան մէջ:

2.- Անոնք, 1918-1920-ի կառավարութեան օրերուն, իրենց սխալ քաղաքականութեամբ ամէն բան ըրին, որ Հայաստանի «անկախ» պետութիւնը կազմալուծուի:

3.- 1920-էն մինչև 1991, անոնց Խ. Հայաստանի դէմ կատարած վնասը միայն թուրքն ու իր տէրերը կ'ուրախացներ:

4.- 27 Հոկտեմբեր 1999-ին կատարուած ողբերգութենէն ետք մանաւանդ, բոլոր դաւաճիւրներն ու իրենց մեղսակիցները, այլևս իրենց պարտականութիւնը կատարած ըլլալու գոհունակութեամբ, գերեզմանոցի վերածուող Հայաստանին վրայ «Աստ Հանգչի Հայաստան» վերտառութեամբ խաչ մը կրնան գետեղել:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻԿԻՐԵԱՆ  
{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}

Երեքշաբթի 18 Ապրիլ 2000



## ՀԵՌՈՒ ՄԵՆԷ ԱԽՏԱԳԻՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ ...

...ԴՈՒՔ ՑԵՂԻՆ ՈՒՂԵՂՆ ԷՔ: ԲԱՅՑ ԵՐՔ ԱՅԴ ՈՒՂԵՂԸ  
ՈՒՐԻՇ ԿԵՐՊ ՉԻ ԿՐՆԱՐ ԽՈՐՀԻԼ ԶԱՆ ՅՈՒՍԱՀԱՏԵՑԸ-  
ՆԵԼՈՎ ՄԵՐ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ՄԵՆՔ ՊԻՏԻ ՓՐՑԸ-  
ՆԵՆՔ ՈՒ ՆԵՑԵՆՔ ԱՅԴ ՈՒՂԵՂԸ:

ԼՈՋԱՆ 1911 - ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ  
ՉՕՆ՝ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի ԱՆՄԱՀ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷՇ ՌՈՒԲԵՆԵԱՆ]

Բայց Ռուբէն Սեւակ չկրցաւ փրցնել այդ ախտագիւց մտաւորականներուն ուղեղները:

Որովհետեւ թուրքերը տեսան հայկական վերածնունդին իրենց համար ներկայացուցած վտանգը:

Եւ թուրքերը աւելի շուտ շարժեցան: Եւ Սիոնիստ Իթթիհատականները 24 Ապրիլ 1915-ին փրցուցին Ռուբէն Սեւակի գլուխը և «Ճահատակեցին» Հայ Ազգին Վերածնունդի յոյսերը: Եւ Հայ Ազգին ճակատագիրը մնաց, մեծ մասամբ, այդ ախտագիւց մտաւորականներուն ձեռքը:

Մինչեւ 24 Ապրիլ 1915 և անկէ մինչեւ մեր օրերը, Ռուբէն Սեւակին մատնանըջած այս նեխած ուղեղներով մտաւորականներուն՝ հայ ազգին որքա՞ն չարիք պատճառած ըլլալը հասկնալու համար, մեծ հմտութիւն ունենալու պէտք չկայ:

Իր սրտին մէջ քիչ մը հայկական «ջիղ» ունեցող մէկը գիտէ, թէ ուրկէ ո՛րք հասած է այսօր հայութիւնը:

\*\*\*

Եղեռնէն յետոյ, Արեւմտեան Հայաստանի խլեակներով կազմուած հայկական Սփիւռքը, դժբախտաբար բաւական մեծ չափով ենթարկուեցաւ Դաշնակ կուսակցութեան գաղափարականին մաս կազմող այս ախտագիւց մտաւորականներուն ազդեցութեան:

Մեզի համար, այս ախտագիւց մտաւորականներուն մէջ, իբր ազդեցիկ «գրիչ», առաջնակարգ տեղը կը գրաւէ Թակոբ Օշական:

Վերլուծելու և քննադատելու տաղանդ ունեցող, բայց մեծամոլութեան և ինքնահաւանութեան ախտով վարակուած այս քննադատը՝ Սփիւռքի և ճաշկանջի մտաւորականներուն վրայ շատ քանդիչ և վարակիչ ազդեցութիւն գործած է:

Եւ մինչեւ այսօր, մանաւանդ Հայաստանի մտաւորականները, որոնք Սովետական շրջանին, արտասահմանի մտածողութեան մասին իսկական գաղափար մը չունէին, «Հետուի մտաւոր է» կարգախօսին մտայնութեամբ, Թակոբ Օշականի վերլուծելու և քննադատելու կարողութեան ազդեցութեան ենթարկուելով, անոր գրածներուն իբր «Աւետարան» հաւատացին և մինչեւ հիմա ալ կը շարունակեն հաւատալ: Բայց, իրականութեան մէջ, ո՞վ էր Թակոբ Օշական:

“NARCISSISME”ի հիւանդութենէ վարակուած այս մտաւորականը՝ ինքզինքը այնքան մեծ կը տեսներ, որ կ’ուզէր Սուրբ Մեսրոպ Մաշտոցի քովը, Օշականի մէջ, իր դամբարանը ունենալ:

Նայեցէք իր գրութիւններուն: Հայ ժողովուրդին ենթարկուած մեծ աղէտին մասին քանի՞ տող պիտի գտնէք:

24 Ապրիլ 1915-ը, հայ մտաւորականութեան ճահատակման խորհրդանշանն է: Բայց ինչո՞ւ Թակոբ Օշականը իր վերլուծելու կարողութիւնը չէ գործածած՝ որ մտաւորական ճահատակներուն իսկական և ամբողջական ողբերգութեան պատմութիւնը գրէ:

Ռուբէն Սեւակ, այս ախտագին մտաւորականներուն մասին, սպալէս ըսած է. «Ռրբուկի պէս անտէր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտքովս բարբառի մըն է ծարաւ, իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային խաւարակուր բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չիճարէն տաղեր կը գրեն որպէսզի «Մտոս հասննաւ...»:

Եւ Յակոբ Օշական, իր «վաւերական գրող»ի լոզունքով, շատ մը գրողներ հեռացուց հայութեան Ազգային ցաւերով և նպատակներով զբաղելէ: Եւ զիրենք դարձուց դէպի իրենց ներքին աշխարհը, և հեռացուց իրականութիւններէ. և մանաւանդ՝ հեռացուց հայկականութենէ:

Նայեցէք Յ. Օշականին ձեռով մը «հոգեզաւակ»ը եղող բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանի գրութիւններուն [1902-1972]: Այս բանաստեղծը իսկական ներկայացուցիչն է «ԱՐՈՒԵՍՏ ԱՐՈՒԵՍԻՆ ՀԱՄԱՐ» Յ. Օշականեան մտայնութեան:

Միջոց մը մեծ համբաւ շահած [չենք գիտեր ինչո՞ւ] Նիկողոս Սարաֆեանին գրութիւնները, այսօր ո՞վ կարդալու համբերութիւնը ունի, որ վելուծումն է իրականութենէ հեռու՝ երեւակայական աշխարհի մը:

Թերեւս զանոնք «մեծատաղանդ» Գրիգոր Պըլտեանը կը կարդայ, որ Նիկողոս Սարաֆեանին մտերիմը և հետեւողը եղած էր:

Յակոբ Օշականին և իր հետեւորդներուն գրականութեան ըմբռնումին քանդիչ ազդեցութիւններուն պատճառաւ, հայկականութեան և հայկական պահանջատիրութեան կրած վնասները, մեր համոզումով, անհամար և անդարմանելի են:

Հայ ազգը այս «եսասէր» մտաւորականներուն պատճառաւ 1920-էն մինչեւ այսօր, 80 տարիներու տեւողութեամբ, շատ բան կորսնցուց և ասկէ ետք ալ պիտի շարունակէ կորսնցնել:

Հայրենի մտաւորականութիւնը, Համայնավար վարչաձեւի շրջանին, ըսփիւռքի մասին, Սփիւռքի մտայնութեան

# Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

## Ռ . Ս Ե Ի Ա Կ Ի Վ Ե Ր Զ Ի Ն Օ Ր Ե Ր Է Ն

«Փոսթալի օր» - այսպես սիրած էին կոչել շաբթուան այն օրերը, ուր մենք՝ Չանդրըրը-ի աստուականներս, տարբեր տրամադրութիւններով արթնցած, արշալոյսին իսկ նամակատուն կը վազէինք, Գուլէն հեծ նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր տեսնել այդ վայրկեանը, ամենքս ալ նայն բոլորտարով երկտող մը. յուսադրիչ բառ մը պարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, բառեր որոնք կրնային անգուրբ գրախօսելին այժէն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսախաբութիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ հազիւ 10 նամակ կը տեսնէինք: Նամակները ստանալէ վերջ, գունդագունդ կ'երթայինք Հանի Գալայի գետեզրեայ և ծառախիտ սրճարանը՝ աստուակներու փոսթի օրուան մեծ ժամադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

Փոսթալի օր մըն էր. ըստ սովորութեան գետեզրը հաւաքուած էինք: Ոմանք թերթ կը կարդային, ուրիշներ նարտով զբաղած էին, իսկ մենք, Վարուժանին շուրջը հաւաքուած, բարձր բանաստեղծութեան մասին իր էննադատութիւններուն կ'ունկնդրէինք. յանկարծ աստուականներու մէջ ուրախութեան նիւ մը փոքաւ «Սեւա'կը, Սեւա'կը» կը պոռային: Ընդ առաջ վազեցինք, դէմքերը կը ճառագայթէին, ինքն ալ զուարթ էր: Շատ տարօրինակ բան էր մեր ուրախութիւնը, որովհետեւ յուրջ պատճառ մը չունէինք երեսելու: Բայց ներքին քննող մը մեզ զուարթ ըլլալու կը մղէր, թերեւս Սեւա'կէն բարի լուրեր առնելու մեծ յայտն էր իրապէս այդ պատճառը:

Հարցումներու տեղատարափը ատոր ապացոյցն էր: Ու Սեւա'կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ձերբակալման ուշանալուն պատճառը, մտնութեամբ միայն ձեռք առնուիլը, Միտիթիյէ-ի մէջ բաշտները, զինուորական հագուստներուն քզտուելու պարագան և այլն: Ամենէն տխուր դէպքերն իսկ անվարձօրէն և զուարթութեամբ կը նկարագրէր. ասիկա Չիլիկիտեանին բնատուր յատկութիւնն էր: Իր համոզումը այն էր, որ մինչև պատերազմի վերջաւորութիւնը մեզ համար Գուլիս դառնալ անկարելի էր, բայց կեանքներնս վտանգի տակ չէր կրնար ըլլալ, քանի որ գործին մէջ Գերմանները կային:

Սեւա'կի շէնչող և ընկերակցան զգնիլ բնաւարութիւնը պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալուէինք, որով իր իսկ թելադրութեամբ գետեզրեայ պարտէզներու մէջ փոքր պոռայտներ կը կազմակերպէինք. հոն հեփաբներու մրցումը կը սկսէր և բնականաբար առաջնութիւնը ինքը կը խլէր միշտ: Գալով Չանդրըրցի բուրձներուն, ինչ առ ինչ սկսած էին Սեւա'կը աստուածացնել, այնտեղ շատցած էին երաշխները, իր թշկական բարձր կարողութիւնները ի սպաս դրած, անդուլ անդադար կ'աշխատէր. դրամը կարծւորութիւն չունէր. «Պէտք է այս մարդիկը երախտապարտ բողոքեն, քապէսի չկարեւոր մեզի չարիք հասցնել» կ'ըսէր, թերեւս իրաւունք ունէր:

Գուլիս վերադարձողներու կծիկը տակուիլ սկսած էր, և տոկոս բարեբար նշան մըն էր թէ՛ մեր կեանքներուն պիտի խնայուէին. առաջին խումբին բաժանումը մեր յայտնը ցնդեցուցած էր, այդ բաժանումը ամենէն յուզիչը և յուսահատեցուցիչը եղաւ. յիսուն երկու ընկերները դէպի Տիարպէֆի և Տէր Զօր դրկուելու համար մեզմէ կը բաժնէին և այս բնականաբար լաւ նշան մը չէր, մնացեալներս սկսած էինք ահաբեկիլ: Զանազան մեկնութիւններ կու տայինք Տէր Զօր դրկուողներու մասին, որոնք պարզ ենթադրութիւններ էին, քանի որ երամանը ուղղակի կեդրոնէն կու գար: Այդ միջոցներուն Սեւա'կ սկսած էր տխուր և մտածկոտ ըլլալ, իր զգայուն հոգին ննչող գաղտնիք մը կորցած էր. իր շէնչող բնաւարութիւնը մեկամաղձառ ըրած էր զինքը, գաղտնապահ էր, որով չէինք կրնար հոգիին բափանցել:

(Օտարը տես՝ էջ 5)

« Եւստիս »

և կեանքին մասին իսկական գաղափար մը չունէին: Եւ մանաւանդ՝ ճշգրիտ տեղեկութիւն չունէին հայկական պատմութեան մասին, 1915-ի Եղեռնին շուրջ: Եւ 1991-ին՝ այդ վարչաձեւի քանդուելէ ետք, շատ մը տկար հոգիներ, թերեւս ալ նիւթական դժուարութիւններու պատճառաւ, վարակուեցան Դաշնակցական գաղափարականէն, առանց գիտնալու, թէ իրականութեան մէջ ի՞նչ է այս կուսակցութիւնը և ինչ ըրած է հայութեան համար:

Հ.Յ.Դ.ի գաղափարականին յարած այս մտաւորականներէն մեզի համար ամե-

նէն կարելոր անձնաւորութիւններէն մէկը՝ Երեւանի համալսարանի Հայ Գրականութեան ամպիոնի Վարիչ Հրանդ Թամրազեանն է: Մենք իր գրութիւններուն կը հետեւինք Սփիւռքի դաշնակցական մամուլին մէջ: Ան, հարիւրին հարիւր համեմատութեամբ Յ. Օշականի դպրոցին հաւատարիմ իրր աշակերտ, «Օշականեան Ոգի»ով կը բնութագրէ հին և նոր հայ գրողները:

Բայց վերջերս [9-12-1999-ին], Հրանդ Թամրազեանի Փարիզի Հ.Յ.Դ.ի բանբեր «Կամջ» օրաթերթին մէջ հրատարակուած յօդուածաշարքը, իսկական «գլուխ գործոց» մըն է:

Անդրանիկ Ծառուկեանին վերաբերող այս գրութեան մէջ, Երեւանի համալսարանի գրականութեան ամպիոնի վարիչը նայեցէք, թէ ինչ գրած է.

«ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ՝ ՍԻԱՄԱՆԹՈՅԻ, Ռ. ՄԵՒԱԿԻ, ՎԱՐՈՒԺԱՆԻ, ՄԵԾՄԱՐԵՆՅԻ ՎԱՍՏԱԿԸ...»:

1908-ին Պոլսոյ մէջ, թորախտէն մահացած Միսաք Մեծարեանը ինչպէ՞ս կարելի է Եղեռնի նահատակներուն մէջ դասել:

Եթէ այս սխալը ընողը սկսնակ գրականագէտ մը ըլլար, թերեւս կրնայինք ըսել, թէ՛ նորեկ է: Բայց Երեւանի համալսարանին Գրականութեան ամպիոնի վաստակաւոր վարիչ Հ. Թամրազեանին համար՝ իր գործած սխալը անցերելի ամօթ է:

Ա՛յ, կրնա՞ք երեւակայել, թէ այս գրականագէտին հասցուցած հազարաւոր համալսարանականները, հայկական պատմութեան այս ամենէն կարելոր շրջանին՝ 1915-ի Եղեռնին մասին, ո՛ր աստիճան ճշգրիտ գաղափար մը կազմած են:

\*\*\*

Ծատ անգամ ըսած ենք, թէ Սփիւռքը և մանաւանդ հայրենի մտաւորականութիւնը, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին մասին, հարազատ ու ամբողջական գաղափար մը չունին:

24 Ապրիլ 1915-ը Պոլսոյ մէջ, հայ մտաւորականութեան թուրքերուն կողմէ ձերբակալման թուականն է: Բայց 24 Ապրիլ 1915-էն յետոյ, այս ձերբակալուած մտաւորականները ի՞նչ եղած են, ինչպէ՞ս նահատակուած են:

Սփիւռքի մէջ շատ շատեր և մանաւանդ Հայաստանի հայերը, շատ քան չեն գիտեր այս մասին: Այն աստիճան՝ որ «Սովետական Գրականութիւն» ամսագրի խմբագրապետ Ռուբէն Զարեանի պէս մտաւորական մ'անգամ, այդ տարիներուն, 24 Ապրիլ 1915-ի մասին տուած ճշգրիտ տեղեկատու մտ չէ ունեցած:

Եւ այդ օրերուն, Աւետիգ Իսահակեանը, իր գրոյցներէն մէկուն մէջ, իրենց կը պատմէ Ռուբէն Սեւակի ողբերգական պատմութիւնը: Եւ Ռուբէն Զարեան, այդ ամբողջ գիշերը, այս պատմութեան ազդեցութեան տակ կը մնայ:

Եւ հետեւեալ օրը, Ռուբէն Զարեան, Գրականութեան Պատմութեան մեծագոյն սխալներէն մէկը կը գործէ. իրեն ներկայացող երիտասարդ բանաստեղծ Պարոյր Ղազարեանին «Սեւակ» անունը տալով:

Ռուբէն Զարեան իր այս մասին մեզի գրած նամակին մէջ, հետեւեալ բացատրութիւնը կու տայ. «...եւ մտածեցի, թէ լաւ կը լինի, եթէ Պարոյրին կոչեմ Սեւակ, որպէսզի ողբերգականօրէն կեանքից հեռացած մի Սեւակին շարունակի մի ուրիշ Սեւակ»:

Բոլորս ալ գիտեցք, թէ Ռուբէն Զարեանին բարի նպատակով կատարած այս ահաւոր սխալը, ո՛ր աստիճան շփոթութիւններու տեղի տուած է, և ո՛ր աստիճան ...անմոռանալի Ռուբէն Սեւակը մոռացութեան ենթարկած է:

Եւ մենք, մեր կեանքին նպատակը ըրինք, այս ահաւոր սխալին հետեւանքով, անիրաւօրէն ստուերի մէջ մնացած Ռուբէն Սեւակին իսկական ու ամբողջական կերպարը մէջտեղ հանել, որ հայ ժողովուրդը ճանչնայ իր հերոս նահատակ բանաստեղծը:

★ ★ ★

21 Ապրիլ 2000-ին, Ուրբաթ օր, ժամը 15-ին, Երեւանի Գրողների Միութեան դահլիճին մէջ յիշատակուեցաւ Ռուբէն Սեւակի ծննդեան 115 ամեակը:

Այս Յուշահանդէսը կազմակերպուած էր Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցի տնօրէնուհի՝ Սեւակեան շունջով համակուած Տիկին Ճուլիեթա Ղազարեանի և իր գործակիցներուն ու Հ.Հ. Գրողներու Միութեան Վարչութեան կողմէ:

Հանդիսութիւնը կը հովանաւորէր Երեւանի Զաղաքապետութիւնը, ի ներկայութեամբ փոխ-Զաղաքապետ Կամօ Արէեանի և քաղաքապետութեան Կըրթութեան Վարչութեան (Ժար.ը տես՝ էջ 5)

**ՆԵՌՈՒ ՄԵՆԷ ԱՄՏԱԳԻՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐ... (Ծար. էջ 2-էն)**

Պետ՝ Տիկին Սիլվա Խրիմեանի, որոնց կատարած ելոյթները կ'ապացուցանէին, թէ Ռուբէն Սեւակի յիշատակը վառ է հայ ժողովուրդին մէջ:

Գրողներու Միութեան Վարչութիւնը ջանք չէր խնայած, որ յուշահանդէսը բացողութեամբ պսակուի:

Հանդիսութեան բացառիկ կարեւոր երեւոյթը, հոն ներկայութիւնն էր Ռուբէն Սեւակի դստեր՝ Յճ-ամեայ Ծամիրամ Սեւակի, որ ժամանած էր Ֆրանսայէն, իր եօր յուշահանդէսին ներկայ գտնուելու համար:

Եւ վերջապէս՝ մեզի համար այս հանդիսութեան ամենէն տպաւորիչ մասը, եռետոր-մտատրական ժիրայր Նայիրիին կատարած ելոյթն էր, որ Ռուբէն Սեւակին իսկական կերպարը, իսկական առաջնորդի, հերոս նահատակի կերպարը ճանօթացուց հանդիսականներուն բացառիկ պերճախօսութեամբ:



Տարիներ առաջ՝ 1970-թ.ներուն Աթէնքի մէջ, մեր հօրաքոյր՝ Ռուբէն Սեւակի քրոջը՝ Հայկանոյշ Չեփկեան-Չիլիկկիրեանին յուշերը արձանագրեցին ձայն-ճերիզի վրայ: Մեր հօրաքոյրը պատմեց մեզի ինչ որ կը յիշէր իր եղբօր՝ Ռուբէն Սեւակէն:

Երկու ժամ տեւող այս ձայներիզները, թէ՛ Ռուբէն Սեւակի կեանքին և թէ՛ հայ պատմութեան համար շատ կարեւոր կը նկատենք:

Մեր հօրաքոյրը, շատ մը եղելութիւններու շարքին, պատմեց նաև Ռուբէն Սեւակին թրջանալու գծով ազատիլ առաջարկող ընկերներուն տուած մերժողական պատասխանին մասին: Անձնազոհ մտատրականին կտրուկ հակադարձութիւնը եղած է՝

*«Անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս թրջանալով»:*

Մեր հօրաքոյրը այս նախադասութեան աղբիւրը՝ քսան տարիներ շարունակ փնտռեցինք, բայց չկրցանք գտնել:

Վերջապէս 1990-թ.ներուն, հրաշքի պէս բան մը պատահեցաւ:

Պատմագէտ Վահագն Տատրեան, Նիւ Եորքէն մեզի ուղարկեց, 1920-ից Պոլսոյ մէջ հրատարակուած «Հայ Բուժակ» պարբերաթերթէն պատճենահանուած երկու էջ, որոնց մէջ Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի աքսորավայրի բախտակից ընկերներէն բժիշկ Վահան Ալթունեանին (Չանդըրը-էն հրաշքով փրկուելէ յետոյ) գրի առած յուշերը հրատարակուած էին:

Եւ մենք, մեծ ուրախութեամբ, բժիշկ Վահան Ալթունեանի յուշագրութեան մէջ կարդացինք, մեր հօրաքոյրը վկայութիւնը Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի մէջ քսած հերոսական խօսքերուն. «ԱՆՈՒՆԻՍ ՊԷՍ ՊԻՏԻ ՉՍԵՒՅՆԵՄ ԻՄ ՀՈԳԻՍ ԹՐԵԱՆԱԼՈՎ»:

Բժիշկին Չանդըրը-ի աքսորավայրին վերաբերեալ այս յուշերը, պատմական քացառիկ կարեւորութիւն ունին, թէ՛ 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի պատմութեան և թէ՛, մանաւանդ, Ռուբէն Սեւակի գերմարդկային կեցուածքը կրկին ապացուցանելու տեսակէտով: Այս վկայութիւնը կրկին կը հաստատէ Ռուբէն Սեւակին միւս բախտակից ընկերներուն վկայութիւնները թէ՛ Ռուբէն Սեւակ, իր անունը, իր ազգութիւնը և իր կրօնը չփոխելու համար, մերժած էր թուրքերուն ներկայացուցած մահէն փրկուելու առաջարկը:

Եւ ճիշդ Վարդանանցի հերոս նահատակներուն նման, նախընտրած էր նահատակուիլ՝ վասն կրօնի և վասն հայրենիքի:

Բժիշկ Վ. Ալթունեանի այս վկայութիւնը կու գայ կրկին հաստատելու, թէ Հայ Եկեղեցին շատ անարդար գտնուած է Ռուբէն Սեւակին հանդէպ, անոր մինչև այսօր «Սրբութեան» աստիճան տուած չըլլալուն համար:

Մենք, անհուն հոգեկան գոհունակութիւնը ունինք, «Նայիրի»ի մէջ հրատարակելով, ուսումն տարիներ անյայտ մնացած բժիշկ Վահան Ալթունեանին Չանդըրը-ի իր աքսորական կեանքին դաժան և ցնցիչ յուշերը:

Այստեղ կ'ուզենք, մեր խորին շնորհակալութիւնը յայտնել նաև, այս վաւերագրերը մեզի ուղարկած պատմագէտ Վահագն Տատրեանին:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
**{ՎՐԷԺ ՌՈՒՔԷՆԵԱՆ}**

# Մեակորոյթ

1920 թվականին Պոլսում լույս տեսնող «Հայ բուժակ» Պարբերաբերթում հրատարակվել են բժիշկ Վահան Ալթունյանի հուշերը բանաստեղծ եւ բժիշկ Ռուբեն Սեւակի (Չիլինկիրյան) չանդրոյան օրերի մասին: Այս փաստաթուղթը շատ դարձ ղայկերացում է սալիս այն մասին, թե 1915 թվականի օգոստոսին ինչեր էին կատարվում հայ ասորյալներով լցված թուրքական Չանդրոյ գյուղում:

«Փոսթայի օր»- այսպես սիրած էին կոչել շաբթուան այն երկու օրերը, ուր մենք Չանդրոյ-ի ասորականներու, արբեր սրամադրութիւն-

սամբ ղայրասուիլ: Եոյն գիշերը Չիլինկիրեան ղիս տեսնելու եկած էր. կ'ուզէր ղադսնի տեսակցութիւն մը ունենալ. հետարբութեամբ կ'ընդունիմ առաջարկը. ուսի դուրս կ'ելլեմք բացօթեայ տեղ մը երթալու համար: «Լաւ մտիկ ըրէ, Վահան,- կ'ըսէ ինձ թրթուն ծայնով մը,- ես մահուան դասաղարսուած եմ, ասով հանդերձ կեանս րու ծարմիկութենէդ կախում ունի. աշխատէ՛ ժամ առաջ ազատուիմ...»: Կը սարսռամ, եւ կակազելով, հազիւ «Ի՞նչ կ'ըսես, Տօթորս» միայն կրնամ ըսել: «Այո,- կը շարունակէ Սեւակ,- կամ ղիտ է որ գրական անուանս ղիտ հոգիս ալ սեւցնեմ եւ կամ մեռ-

որ գործին մէջ գերմանները կային:

Սեւակի շենոդ եւ ընկերական ազնիւ բնաւորութիւնը ղայրսնառ եղած էր, որ մենք ալ չբարոյալուէինք, որով իր իսկ թելադրութեամբ ղետեգերեայ ղարտեգներու մէջ փոքր ղոտոյտներ կը կազմակերմէինք. հոն հեքիաթներու մրցումը կը սկսէր եւ բնականաբար առաջնութիւնը ինքը կը իւլէր միտ: Գալով Չանդրոյցի թուրքերուն, Կիչ առ Կիչ սկսած է ին Սեւակը ասուածացնել, այնքան շայրած էին հրաշները, իր բժեկական բարձր կարողութիւնները ի սղաս դրած անդուլ անդադար կ'աշխատէր. դրամը կարեւորութիւն չունէր. «Պէտ է այս մարդիկը երախ-

ցած եւ սրտեղած ըլլալը հրոշ էր. ինձմէ այդ տեսակ խորհուրդ մը չէր սղասէր: Քանի մը օր առաջ, Տիրան Քէլէկեանին ալ խորհուրդ հարցուցեր էր. ան ալ կեանքը ազատելու նղայրակալ իսլամանալու միջոցը միայն ցոյց տուած էր: Սակայն ես, ըմբռնելով ծախող դերիս ծանրութիւնը՝ «Իրաւունք ունիս տօթորս,- ըսի,- րու ղգացումիդ գործը չէ այդ. փակեմք այդ խնդիրը եւ ղանք մեր ընելիքին ըսէ տեսնեմ, ես ի՞նչ ղիտի կարենամ րեգի օգտակար ըլլալ»: Սեւակ հանղարսած: «Տղայութիւն ղիտ է, - ըսաւ, - Պոլիս երթալուդ առաջին գործը ղիտի ըլլայ Բերա ելլեր Կոմիտաս վարղաղեքը առնելով

# Ռուբեն Սեւակ *srուբադուրը*

1915 թ. օգոստոսի 26-ին մահատակվեցին Վարուժանը եւ Ռուբեն Սեւակը: Այդ մասին է Հայաստանի մամուլում առաջին անգամ հրատարակվող ակամասեւի հուշը:

Մերով արթնցած, արեալոյսին իսկ նամակատուն կը վազէին, Պոլսէն եկած նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր սեսել այդ վայրկեանը. ամենքս ալ նոյն թղթատարով երկտող մը, յուսադիչ բաժնի տարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, բառեր, որոնք կրնային անգութ գրաննիչին աչքէն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսաբախութիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ հազիւ 10 նամակ կը սեսնէին: Նամակները ստանալէ վերջ, գունդագունդ կ'երթային Հաճի Պաղային գետեգերեայ եւ ծառախիտ սրճարանը՝ աստուծալներու փոսթի օրուան մեծ ժամադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

Փոսթայի օր մըն էր, ըստ սովորութեան գետեգրը հաւաքուած էինք: Ռմանք թերթ կը կարդային, ուրիշներ նարսով զբաղած էին, իսկ մենք, Վարուժանին շուրջ հաւաքուած, թո՛ւրք բանաստեղծութեան մասին իր բն-



նադասութիւններուն կ'ունկնդրէինք.  
յանկարծ աստուականներու մէջ ու-  
րախութեան ճիշ մը փրթաւ. «Սեւա-  
կը, Սեւա՛կը» կը ղոռային: Ընդա-  
ռաջ վազեցինք, դէմերը կը ճառա-  
գայթին, ինքն ալ զուարթ էր: Շա-  
սարօրինակ բան էր մեր ուրախու-  
թիւնը, որովհետեւ լուրջ դասճառ մը  
չունէինք հրճուելու: Բայց ներքին  
բնագոյ մը մեզ զուարթ ըլլալու կը  
մղէր, թերեւս Սեւակէն բարի լուրեր  
առնելու մեծ յոյսն էր իրադէս այդ  
դասճառը:

Հարցումներու տեղասարափը ա-  
սոր ատայցոյցն էր: Ու Սեւակ կը սկ-  
սի մանրամասնօրէն դասմել իր ծեր-  
բակալման ուժանալուն դասճառը,  
մասնութեամբ միայն ծեղ անցուի-  
լը. Սիւսիրիյի մէջ քաւածները, զի-  
նուորական հագուստներուն բզ-  
տուելու դարագան եւ այլն: Ամենէն  
սխուր դէմքերն իսկ անփութօրէն եւ  
զուարթութեամբ կը նկարագրէր. ա-  
սիկա Չիլիսկիւրեանին բնասուր յա-  
կութիւնն էր: Իր համոզումը այն էր,  
որ մինչեւ դասերագմի վերջաւորու-  
թիւնը մեզ համար Պոլիս դառնալ  
անկարելի էր. բայց կեանքներնիս  
վճանգի տակ չէր կրնար ըլլալ, քանի



սաղարս թողունք, որդեսզի չկարե-  
նան մեզի չարիք հասցնել» կ'ըսէր.  
թերեւս իրաւունք ունէր:

Պոլիս վերադարձողներու կօիկը  
ֆակուլիլ սկսած էր, եւ ասիկա բարե-  
րար նշան մըն էր, թէ մեր կեանքերուն  
դիտի խնայուէին. առաջին խում-

քին բաժանումը մեր յոյսերը ցնդեցուցած էր, այդ բաժանումը ամենէն յուզիչը եւ յուսահասեցուցիչը եղաւ. յիսուն երկու ընկերները դեղի Տիարդէփր եւ Տէր Չօր դրկուելու համար մեզմէ կը բաժնէին եւ այս բնականաբար չաւ նշան մը չէր, մնացեալներս սկսած էինք ահաբեկիլ: Չանազան մեկնութիւններ կու տայինք Տէր Չօր դրկուողներու մասին, որոնք յարգ ենթադրութիւններ էին, քանի որ հրամանը ուղղակի կեդրոնէն կու գար: Այդ միջոցներուն Սեւակ սկսած էր ժխտուր ու մտածկոտ ըլլալ, իր զգայուն հոգին ճնշող գաղտնիք մը կորզած էր. իր ժնշող բնաւորութիւնը մելամաղձոտ ըրած էր զինքը, գաղտնադատ էր, որով չէինք կրնար հոգիին թափանցել:

1915 օգոստոսի կիսուն էր, 25 հոգինոց ցանկ մը եկած էր, չորսերնիս Պոլիս տիտի վերադառնայինք, իսկ մնացեալները Տիարդէփր տիտի երթային: Յաջորդ առաւօտ խմբովին մեկնիլ ստիպուած էինք, ուստի սկ-

նիմ: Ուխտած եմ,- կը կրկնե,- մեռ-  
նիլ, բայց երբեք հոգիս չսուցնել»: «Բան մը չեմ հասկնար», - կը մը-  
ջեմ ատշահար: «Այո՛, Վահանս,- կը  
ժարունակէ նա,- բառ առ բառ  
միտքդ տալիք որդեսոյի լա: հասկը-  
նես: Հոս իթիհասական Չէթէ ռի-  
սի Արատաճը Պաշը ըսուած առա-  
ւածին աղջիկը անյոյս վիճակի մէջ  
հիւանդ էր, խնամելու համար զիս  
կանչեցին, լաւ առիթ մըն էր, այդ  
կարգի գազան մը ձեռք ձգելու, ուս-  
տի անէն ճիգ ու ջանք ի գործ դրի  
աղջիկը ստոյգ մահուընէ մը փրկե-  
լու. յաջողութիւնս կատարեալ եղաւ.  
աղջիկը բուժուած էր: Ժամանակ մը  
վերջ այդ մարդակերտ անասունը  
զիս տուն հրաւիրեց. սենեակին մէջ  
առանձին էինք, սկսաւ շնորհակալ  
ըլլալ, եւ խօսքը ժարունակեց՝ «Աղջ-  
կանս կեանքը ինձ շնորհած ըլլա-  
լուդ յաւիտեան երախտատարս եմ,  
ուստի կը փափաքիմ որ ես ալ փո-  
խարիներմ, ահա առիթը ներկայա-  
ցած է: Պոլսոյ կեդրոնը մահուանդ

վճիռը արձակած է եւ գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր, քանի որ դուն աղջիկս ազատեցիր, ես ալ քեզ յիշի ազատեմ. միայն մէկ յայնմանաւ, այսինքն յետք է անմիջապէս իսլամանաս, եւ աղջիկս կնութեան առնես: Արդէն մեղք չէ՞, որ քեզի յետք գեղեցիկ եւ ֆիսան մէկը ԿԵԱՎՈՒՐ մնայ»: «Բայց յետք, ըսի, ես արդէն ամուսնացած եմ, կինս գերմանուհի է ֆրոն Տեր Կոլց փառայի թիկնադահներէն գերման սոլայի մը փոյրն է, երկու զաւկի ալ հայր եմ, այդ ինչո՞ւ կարելի է»: «Էհ, լաւ, դասասխանեց անայլայլօրէն, շատ մեղք յիշի ըլլայ երիտասարդութեանդ, որովհետեւ վստահ եղիր եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել, քաղաքէդ դուրս ելլելուդ անդայնման յիշի սոլաննուիս, ուրեմն 15 օր միջոց կու տամ, լաւ խորհէ»: Ալ դասասխանել անօգուտ էր. «Շատ լաւ» ըսի ու մեկնեցայ»: Խորհուրդ տուի որ առժամապէս համակերպի. Սեւակ ընկճուած էր, քարկա-

մեզի երթալ, հոն տկնոցս տասմել  
ամէն բան, նա գիտ, թէ ուր տիտի  
դիմէ. ինծի առաջով կերտով ուրիշ  
տեղ մը փոխադրելու ճարը գտնելու.  
հոգ չէ թէ բանտարկուած եւ տղթա-  
յուած ըլլամ, բաւ է որ սա ճնշիչ մթ-  
նոլորտէն ազատիմ»: Իր խնդիրը ա-  
ռանց յատարելու կէտ առ կէտ գոր-  
ծադրելու խոստումով կը համբու-  
րուինք եւ կը բաժնուինք:

Երկու օրուան ճամփորդութենէն  
վերջ կը հասնինք Էնկիւրի, ուր փո-  
խանակ կայարան առաջնորդուե-  
լու, կը բանտարկուինք: Օրեր կ'անց-  
նին, տակաւին Էնկիւրի ենք. յոռի  
նախազգացումներ զիս կը տաւա-  
րեն, Սեւակի դէմքը աչիս առջեւէն  
չի հեռանար, կտրէն «խոստմնա-  
զանց» ըսել կուզէ. բանտի կեանքը  
կը սկսի տակաւ անտանելի դառնալ.  
որոգործ բանտարկեալները, որոնք  
թուրքեր են, անտասկանօրէն կը  
տասմեն թէ ինչդէս սղաննած են  
այն հարիւրաւոր հայերը, որոնք այս  
բանտէն ճամբայ հանուած էին, եւ  
կ'առաջարկէին մեր դրամները իրենց  
տալ, որդէսզի առանց չարչարուելու

մեզի երթալ, հոն տկնոջս տասնել  
ամէն բան, նա գիտէ, թէ ուր տիտի  
դիմէ. ինծի առաջով կերտով ուրիշ  
տեղ մը փոխադրելու ճարը գտնելու.  
հոգ չէ թէ բանտարկուած եւ տղա-  
յուած ըլլամ, բաւ է որ սա ճնշիչ մթ-  
նոլորտէն ազատիմ»: Իր խնդիրքը ա-  
ռանց յառադելու կէտ առ կէտ գոր-  
ծադրելու խոստումով կը համբու-  
րուինք եւ կը բաժնուինք:

Երկու օրուան ճամփորդութենէն  
վերջ կը հասնինք Էնկիւրի, ուր փո-  
խանակ կայարան առաջնորդուե-  
լու, կը բանտարկուինք: Օրեր կ'անց-  
նին, տակաւին Էնկիւրի ենք. յոռի  
նախազգացումներ զիս կը տաւա-  
րեն, Սեւակի դէմքը աչիս առջեւն  
չի հեռանար, կարծես «խոստմնա-  
զանց» ըսել կուզէ. բանտի կեանքը  
կը սկսի տակաւ անտանելի դառնալ.  
որոշորոշ բանտարկեալները, որոնք  
թուրքեր են, անտասկանօրէն կը  
տասնեն թէ ինչդէս սղաննած են  
այն հարիւրաւոր հայերը, որոնք այս  
բանտէն ճամբայ հանուած էին, եւ  
կ'առաջարկէին մեր դրամները իրենց  
տալ, որդէսզի առանց չարչարուելու

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
{ՎՐԷԺ ՌՈՒՐԷՆԵԱՆ}

**ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՍՈՐՎԱԾ ԱՀԱՒՈՐ ԴԱՍԸ՝  
« ԳԼՈՒԽՆԵՐ ԿՏՐԵԼ »**

**ԲԱՅՑ, ՈՉ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԳԼՈՒԽՆԵՐԸ, ԱՅԼ՝  
ՀԱՅ ՂԵՎԱՎԱՐՆԵՐՈՒՆ ԳԼՈՒԽՆԵՐԸ**

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՒՐՔԷՆԵԱՆ)**

**Սփիւռքահայեր՝**

Արդեօ՞ք ձեր ուշադրութիւնը գրաւեց հետեւեալ շատ կարեւոր երեսոյթը՝ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն յետոյ, ամիսներէ ի վեր, նոյնիսկ մինչեւ այսօր, արեւմտեան մամուլին և հեռատեսիլին մէջ, « Հայաստան-երկրին » մասին թեւէ լուր կամ եղելութիւն չհրատարակուիլը:

Կարծեք, թէ « Արեւմուտք »-ին համար, այլեւս « Հայաստան » ըսուած երկիր մը թղութիւն չունի:

Բայց, ինչո՞ւ կը զարմանանք: Աշխարհն ինչո՞ւ հետաքրքրուի երկրով մը, որ քիչ թէ ժողովրդավարական « Պետութիւն », այլ « Մաֆիա-պետութիւն » կը նկատուի:

Աշխարհն ինչո՞ւ հետաքրքրուի երկրով մը՝ ուր տէրութեան մը « սիրտը », մեծագոյն « գանձը » եղող Ազգային Ժողովին մէջ, Ազգային ժողովին նախագահը, Կրկին Վարչապետը և երկրին առաջնակարգ ղեկավարները, քանի մը վայրկեանի մէջ, սպաննուեցան:

Աշխարհն ինչո՞ւ հետաքրքրուի երկրով մը ուր՝ 27 Հոկտ. 1999-ի Եղեռնագործութենէն վեց ամիսներու ետք, ըսել է՝ ողբերգութեան վրայէն վեց ամիսներ անցնելէն յետոյ, դեռ մինչեւ այսօր, պատասխանատուները գիտակցաբար մէջ-մեջ չեն հանուած:

Աշխարհն ինչո՞ւ հետաքրքրուի երկրով մը՝ երբ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն յետոյ, երկրին նախագահը պետական պատասխանատուութենէն զտրուելով « Պոս »-ի մը պէս կը շարժի, այն կազմակերպութեան նման, որ իր հակառակորդները հաշուեյարդարի կ'ենթարկէ:

Սեր գրութիւններուն հետեւողները, թերեւս նկատած են, որ 27 Հոկտեմբեր 1999-ի աղէտէն քանի մը օր յետոյ, 2 Նոյեմբերէն սկսեալ « ՆԱՅԻՐԻ »-ի մէջ, Հայաստանի գրեթէ ամբողջ ժողովուրդին ըսածը կրկնելով, « Այս ողբերգութեան բարոյական բուն պատասխանատուները Հ.Հ-ի նախագահութիւնն ու « Ետանվտանգութեան ղեկավարներն » սեպած էինք:

Այդ օրերէն մինչեւ այսօր, վեց երկար ամիսներ անցան, և այդ օրէն կը տեսնենք, որ սադայելական կարգադրութիւններով, վերին իշխանութիւնը իր հակառակորդները բաժնելու աշխատանքին լծուած է:

Իբր թէ նոր կառավարութիւն նշանակուեցաւ: Իսկութեան մէջ, ասոր բուն նպատակը ժամանակ շահիլ էր: Եւ չուշացաւ մաքրագործումը:

Վարչապետ Արամ Սարգիսեանին և Պաշտպանութեան նախարար Վաղարշակ Յարութիւնեանին պաշտօնազրկուիլը՝ ասոր ապացոյցն է:

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն յետոյ Հայաստանի ժողովուրդը հասկըցած էր, այս աղէտին ետեւը գտնուող ուժերուն ինքնութիւնը:

3000 տարիներէ ի վեր մեծամասնութեամբ յոյներու կողմէ բնակուած այս կղզին, մինչեւ 1945, անգլիացիներուն իշխանութեան ենթարկուած մնաց:

1945-էն սկսեալ անգլիացիները, իրենց գաղթավայրերուն, ստիպողաբար, ազատութիւն տալ սկսան:

Բայց Կիպրոսին ազատութիւն չտուին՝ կղզիին ռազմագիտական դիրքին պատճառաւ:

Եւ այդ օրէն սկսաւ Կիպրոսի ժողովուրդին տառապանքի շրջանը:

Ազատութիւն ուզող Կիպրոսի Յոյն ժողովուրդը, Արքեպիսկոպոս Մակարիոսի առաջնորդութեամբ, անգլիացիներուն դէմ պայքարիլ սկսաւ:

Եւ Կիպրոսը կորսնցնել չուզող անգլիացիները, Կիպրոսի մէջ գտնուող Թուրք փոքրամասնութիւնը գրգռել սկսան իբր հակակշռիչ ուժ:

Բայց Կիպրոսի Թուրքերը, կղզիին բնակչութեան հազիւ հարիւրին տասնը-հինգը կը ներկայացնէին: Եւ անոնք ալ ժամանակի ընթացքին, Օսմանցի Թուրքերուն ճնշումով բռնի իսլամացած յոյներ էին, և մեծամասնութիւն եղող յոյներուն դէմ իսկական ուժ մը չէին ներկայացներ:

Անգլիացիները այն ատեն, ամենէն անմարդկային ճամբուն դիմեցին - Թուրքիոյ Ա. Գ. Նախարար FATIN RÜSTÜ ZORLU-ին թելադրեցին, որ Պոլսոյ մէջ յոյներուն դէմ ցոյցեր կազմակերպեն:

6 Սեպտեմբեր 1955-ին, Սելանիկի մէջ, «Մուսթաֆա Ջեմալ Աթաթիւրքին տունը յոյները [իբր թէ] ռումբ նետեցին» ըսելով [իրականութեան մէջ ռումբը դնողը թուրքերն էին], Պոլսոյ մէջ թուրքերը բողոքի ցոյցեր կազմակերպեցին:

Բայց այս ցոյցերը՝ բոլոր մանրամասնութիւնները առաջուց պատրաստուած թատրոն մըն էին:

6 Սեպտեմբեր 1955-թ. ըսուած չարաշուք գիշերը՝ յոյներուն եկեղեցիները, խանութները, գերեզմանները [և մասամբ ալ հայերուն] քանդուեցան:

Այդ օր թուրքերը, այս վայրագ ցոյցերուն շնորհիւ, շատ «բաներ» շահեցան՝ մինչեւ 6 Սեպտեմբեր 1955-ի օրերը, դեռ Պոլիսը, մասամբ, իր յունական դիմագիծը պահած էր: Այդ օր «Յոյն Պոլիսը», բոլորովին քանդուեցաւ:

Եւ այդ թուականէն յետոյ, Պոլսոյ մէջ հարիւր հազարէն աւելի հաշուող Յոյն քնակչութիւնը, թուրքերուն բռնութեան պատճառաւ, գաղթելու ստիպուեցան:

Կիպրոսի մէջ ալ թուրքերը, անգլիացիներուն աղուեսային կարգադրութեամբ, գրեթէ յոյներուն չափ իրաւունքներու տիրացան:

1973 թուականը Կիպրոսի պատմութեան մէջ, շատ ճակատագրական տարի մըն է: Այդ թուին եգիպտացիները, հրէական “KIPPOUR” ըսուած տօնական օրերուն՝ հրեաներու կողմէ գրաւուած հողերը ետ առնելու համար, Իսրայէլի վրայ յարձակեցան: Բայց չյաջողեցան և պատերազմը կորսնցուցին:

Այս պատերազմին հրեաները նկատեցին, որ Կիպրոս կղզին, Իսրայէլի ապահովութեան համար, կենսական կարեւորութիւն ունեցող խարիսխ մըն է:

Եւ մեզի համար, 1974-ին Կիպրոսի Յոյն ժողովուրդին ենթարկուած դժբախտութեան բուն դրդապատճառը, կղզիին հրեաներուն ապահովութեան համար ներկայացուցած կարեւորութիւնն է:

Եւ 1974-ին Կիպրոսի, իսկ 1955-ին ալ Պոլսոյ մէջ կատարուած ողբերգական բեմադրութիւններուն նման, «թատրոն» մը կազմակերպուեցաւ: MAKARIOS-ը GRIVAS-ը և SAMSON-ը՝ Կիպրոսի այս երեք Յոյն ղեկավարները դասական յունական ողբերգութեան շատ «վայել բեմադրութեամբ» մը, իրարու դէմ հանուեցան:

Անհուատալի այս եղբայրասպան պայքարը, «աւելի ճիշդ՝ ողբերգութիւնը» ակարտեցաւ՝ առիթէն օգտուող թուրքերուն Կիպրոսի վրայ կատարած արշաւանքով:

Թուրքերը, այս անիրաւ արշաւանքի շրջանին, հաւատարիմ իրենց «աւանդութեան», ջարդեցին մեծ թիւով յոյներ և գրաւեցին Կիպրոսին հարիւրին քառասունը:

Այստեղ, ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք, հետեւեալ իրականութիւններուն վրայ.

1.- 1974-ին Ամերիկայի Ա. Գ. Նախարարը՝ հրեայ HENRY KISSINGER-Ը էր:

2.- 1974-ին Թուրքիոյ Վարչապետը և Կիպրոսի վրայ յարձակումի հրամանը տուողը՝ BULENT ECEVIT-Ը էր:

3.- Պիլենթ Էճելթ Ամերիկա ուսանած տարիներուն, հրեայ Զիսինճըրի աշակերտը եղած է:

4.- Զիսինճըրի և Էճելթի միջեւ եղած այս կապը, Կիպրոսի ողբերգութեան բոլոր գաղտնիքներուն բանալին է:

5.- Մակարիոսը, Կրիվասը և Սամսոնը իրարու դէմ թշնամական արարքներու մղողը, Զիսինճըրի թելադրութեամբ՝ Շ. Ի. Ա. կազմակերպութիւնն է:

6.- “THE CYPRUS CONSPIRACY” [Կիպրական դաւադրութիւնը] անունը կրող գիրքին կողքին վրայ, այս դաւադրութիւնը խորհրդանշող երկու նկարներ

Հոն հասնելու համար պայման է սակայն, որ իրարհասկացողությունն ու ժողովուրդի քուէներու կեդրոնացումը սկսի այժմէն: Հարկ է մերժել ամէն նեղմտութիւն, կողմնակի աշխատանք և ուղղուածութիւն: Ծուտիկութիւնը և մեկուսի ու կանխաւ դաշինք կնքելը ասոր ու անոր հետ, նոր խոչընդոտ կը ստեղծեն ցանկալի միասնութեան գոյացումին առջեւ: Այդպէս գործողը կը մնայ յանցաւոր և պատասխանատու:

Կարճ՝ մասնակիին ու անձնականին սիրոյն հիմնականը, ընդհանուրինը չկորսնցնենք: Ժամանակն է, որ պզտիկ փառասիրութիւններէն ու նիւթական ճղճիմ շահադիտութիւններէն վեր, շա՛տ վեր դասենք համայնքին պատին ու վաղուան բարօր կեցութիւնը:

Մեր ներհամայնքային գործօնները կոչուած են, նորագոյն սա ստուգատեսին մէջ, իրենց հասունութիւնն և ազգային ողջախոհութիւնը մէկ անգամ եւս վկայել տալու:

Կը յուսախաբե՞ն մեզ:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶՈՒՆԿԻՐԵԱՆ**  
**{ՎՐԷԺ ՌՈՒՐԷՆԵԱՆ}**

Երեքշաբթի 27 Յունիս 2000



ԹՈՒՐԶԵՐՈՒՆ ԿԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԵՂՈՂ  
ՊՈԼՍՈՅ ԵՐԿՈՒ ՊԱՏՐԻԱՐԶՆԵՐՈՒՆ  
ԽԱՅՏԱԼԻՑ ԽՆԴՈՒԱԾԸ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՌՈՒԲԵՆԵԱՆ]

Պիտի խնդրեցք, որ ուշադրութեամբ դիտեք, վարի Եկարից մէջ, այս երկու թրջամէտ Պատրիարքներուն ուրախութեան և երջանկութեան արտայայտութիւնը՝ Պոլսոյ “HILTON” պանդոկի պարտէզին մէջ:

Ամերիկեան տիրապետութեան խորհրդանիշը եղող «Հիլթըն» պանդոկին մէջ՝ որ 1950-թ.ներուն հիմնուեցաւ Պոլսոյ պատմական «Սուրբ Թակոբ» գերեզմանատան հողերուն, մեր պապերուն դամբաններուն, ոսկորներուն, դիակներուն վրայ:



«Սուրբ Թակոբ» գերեզմանատունը 1940-թ.ներուն, Բ. Աշխարհամարտէն օգտուող Իսմէթ Ինէօնի ըստած ճիւղին կողմէ, բռնի պետականացուեցաւ և դամբաններուն մարմարներով, Պոլսոյ կեդրոնական հրապարակներէն Թաքսիմ-ի դիմացը հիմնուեցաւ՝ “INÖNÜ GEZISI” անունը կրող շատ ընդարձակ, մարմարապատ գրօսավայր մը: «Սուրբ Թակոբ» պատմական գերեզմանատան քանդումով ձեռք-քերուած դամբաններուն մարմարները այնքա՛ն շատ էին, որ 1940-թ.ներուն Պոլսոյ նահանգապետը եղող “LUTFI KIRDAR” ըստած հրէշը՝ «Ս. Թակոբ»ի մարմարները “EMINÖNÜ”ի մզկիթին լայնածաւալ սանդուխներուն շինութեան համար գործածեց:

Մենք, այս մզկիթին սանդուխներուն վրայ, ցաւով տեսած ենք, «Սուրբ Թակոբ»ի դամբաններէն մնացած հայերէն արձանագրութիւններ: Լիւթֆի Ջիրտար կոչուած Պոլսոյ նահանգապետը, 1942-ի “VARLIK VERGISI” «Ունեւորութեան տուրք»ին որ թուրք կառավարութեան կողմէ Պոլսոյ «Ոչ-Իսլամ» ժողովուրդը հարստահարելու համար կիրարկուած էր, առաջնակարգ պատասխանատուներէն մէկն էլ:

Պետականացուած «Սուրբ Թակոբ Գերեզմանատունը» քանդուելէ յետոյ, իբր թէ «կանանչապատ դաշտ» ըլլալով՝ պիտի պահպանուէր:

Բայց քանի մը տարի յետոյ, Պոլսոյ քաղաքապետութեան կողմէ գերեզմանատան հողերուն վրայ, մաս առ մաս մեծ շէնքեր շինուիլ սկսան, և 1950-թ.ներուն ալ, «Սուրբ Թակոբ Գերեզմանատուն»էն մեծ տարածութիւն մը, Ամերիկեան «Հիլթըն» ընկերութեան փոխանցուեցաւ, և քանի մը տարուան մէջ, այս գերեզմանատան հողերուն վրայ համանուն պանդոկը կառուցուեցաւ:

Այս երկու Պոլսոյ Պատրիարքներուն «Հիլթըն»ի պարտէզին մէջ նստած հողը՝ ՄԵՐ ՊԱՊԵՐՈՒՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ ԷՐ: Թուրքը կրնայ նստիլ: Անոնք վարժուած են: Անոնք ամբողջ Անաթոլիոյ մէջ և Արեւմտեան Հայաստանի տարածքին վրայ, մեր պապերուն աճիւններուն, մեր նահատակներուն արիւնով շաղաղխուած հողերուն վրայ նստած են:

Բայց այս երկու Պատրիարքներուն կատարածը՝ իսկական սրբապղծութիւն է:

Մանաւանդ Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Մուֆաֆեանցին համար, Պոլսոյ Պատրիարքարանին պատկանող «Սուրբ Յակոբ» Գերեզմանատան մէջ, մեր պապերուն աճիւններուն վրայ նստած «Զէֆ» ընելը անցերելի է:

★ ★ ★

Բայց, ինչո՞ւ և ի՞նչ առիթով ներկայ էին այս երկու պատրիարքները Պոլսոյ «Հիլթըն» պանդոկին մէջ:

Այստեղ կ'ուզենք հատուածներ նշել, Պոլսոյ հայկական թերթերուն մէջ այս մասին գրուածներէն:

«...ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ 539-ԱՄԵԱԿԸ ՀԻԼՔԸՆԻ ՊԱՐՏԷՋՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՍԱՐԲՈՒԱԾ ՇՔԵՂ ԸՆԴՈՆԵԼՈՒԹԵԱՆՔ:»

...Երէկ (9 Յունիս 2000) «Հիլթըն» պանդոկի զարեզներուն մէջ սարձուած փաթեմ ընդունելութեամբ մը առեւտելու Պատրիարքարանի եիմնարկութեան 539-րդ տարեդարձը:

...Այս առիթ ալ, Պատրիարքարանի եիմնարկութեան այս ընդունելութեան մասնակցեցան, ոչ միայն եամայն-եւրոպայեան երկրացուցիչներ կամ հայ առեւտրականներ, այլ նաեւ պետական գործիչներ, դիւանագիտական մարմիններ և մանաւ:

Երկայ էին յունաց Պատրիարք Բարթոլոմէոս Սրբազան, Վատիկանի Աւագ դեսպան Լուիճի Գոնթի, կղզիներու մերթափոյթ Ափսոսալու, Լատին և Ասորի եպիսկոպոսներ, ամերիկեան և գերման եկեղեցիներու ներկայացուցիչներ, նախկին նախարար՝ Սուտի Թուրէլ, Իսթանպուլի մայր եղաբազնո՝ Ալի Միլֆիտ Կիրբուլա, էմիլեօնի-ի եղաբազնո Լիւքսի Քիպիթոլու, Պաշտօնաւորի եղաբազնո՝ Ահմէտ Պահատըլը, կղզիներու եղաբազնո՝ ձոշուն Էօզտէն... Զուիցերիոյ աւագ դեսպանը, Ամերիկայի, Յունաստանի, Պուլկարիոյ, Գերմանիոյ, Եգիպտոսի, Սպանիոյ, Իտալիոյ, Պելժիոյ, Զուիցերիոյ, Շուէտի, Ռումանիոյ, Խրուաթիոյ Աւագ հիւպատոսները, քաղաքի լրագրողներ, քրոնիկագիրներ և ակադեմիկաններ:

Ընդունելութեան ներկայ գտնուեցաւ նաեւ նշանաւոր պատմաբան ու մտաւորական, նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի Աւագ խորհրդական՝ Ժիրայր Լիպարիտեան: Ո՛վ գիտէ որքա՞ն Ամերիկեան գործակալներ քով-քովի եկած են Հիլթընի մէջ Պոլսոյ Պատրիարքին սարքած ընդունելութեան:

Այս նոյն Պոլսոյ Պատրիարքը՝ Մեսրոպ Մուֆաֆեան, անցեալ տարի՝ 22-5-1999-ին, Պոլսոյ մէջ, Ֆաթիհ Սուլթան Մէհմէտին դամբարանը [TÜRBE] այցելած էր մեծ շքախումբով, և հոն աղօթած էր, և Ֆաթիհին երախտագիտութիւն յայտնած էր, Պոլսոյ Պատրիարքութիւնը հիմնած ըլլալուն համար:

Եւ յետոյ, Պատրիարքը, այս տարուան պէս, «Հիլթըն» պանդոկին պարտէզներուն մէջ, հինգհարիւրի հասնող իր հիւրերուն, պետական և դիւանապետական ներկայացուցիչներուն համար շքեղ ընդունելութիւն մը սարքած էր:

Շատ տարօրինակ և արտասովոր անձնատրութիւն մըն է այս հոգեւորականը:

Այս մեծածախս ընդունելութիւնը սարքողը, երկու ամիս վերջ՝ Օգոստոս 1999-ին, Պոլսոյ Պատրիարքարանին մէջ, հայկական թերթերուն խմբագրապետներուն, ի մէջ այլոց, հետեւեալ տեղեկութիւնները կու տայ.

«Պատրիարքարանի եկամուտը նուազած է, և ծախսերը դիմագրաւելու համար պատրիարքարանը դրամի պէտք ունի»:

Բաղրիք Էֆէնտի.

Եթէ դրամ չունէիր՝ ինչո՞ւ հինգ հարիւր հոգինոց շքեղ ընդունելութիւններ սարքեցիր «Հիլթըն» պանդոկին մէջ: Սուլթանին երախտագիտութիւն յայտնելու և պատրիարքարանին հիմնարկութեան տարեդարձը միջազգային չափանիշով և շքեղ ընդունելութեամբ տօնելու սովորութիւնը, այս պատրիարքը ստեղծեց:

Եւ մենք ընդվզելով Սրբազանին այս անպատշաճ կեցուածքէն, 7-9-1999-ին, «ՆԱՅԻՐԻ»-ի մէջ, իր դէմ սապէս արտայայտուած էինք.

«Նայեցէ՛ք Սրբազան՝ զու՛յ և ձեր մանկաւիկները, ինչ որ կ'ուզէ՛ք, ըրէ՛ք Պոլսոյ մէջ: Որքան որ կրնա՛ք՝ խմակ ծռեցէ՛ք, շօղոքորթութիւն ըրէ՛ք Պոլսոյ մէջ բուրե՛րուն: Բայց Պոլսոյ մէջ մնացէ՛ք: Պոլսէն դուրս մի ելլէ՛ք: Ոտ մի կտօնէ՛ք երբեք Սուրբ Էջմիածին և ձեր բրնձիւրութեամբ՝ մի աղոթե՛ք այս Սուրբ վայրը»:

★ ★ ★

Դժբախտաբար, այս թրջամէտ պատրիարքը, Սեպտեմբեր 1999-ին, գնաց Էջմիածին: Կաթողիկոսական ընտրութեան օրերն էին: Եւ Մեսրոպ Մուրաֆեան, այն ատենուան կաթողիկոսական տեղապահին հետ, Երեւանի մէջ, կրօնի Գործերու պաշտօնակատարին կը ներկայանան և անոր գանգատ կը յայտնեն, թէ կառավարութեան կողմէ մէկ թեկնածուի ի նպաստ միջամտութիւններ կը կատարուին:

Եւ այս չէր բաւեր՝ նոյն օրերուն Պատրիարքը և իրեն պէս արեւմտեան պետութիւններուն սայլին լծուած հինգ կրօնականներ, միասնաբար զեկոյց մը կը հրատարակեն և Հայաստանի կառավարութիւնը կ'ամբաստանեն՝ կաթողիկոսական ընտրութեան միջամտութեամբ:

Եւ ամենէն ցաւալին՝ այս դիւրագրիւ Կրօնապետը, բարձրաստիճան կրօնականի մը ներկայութեան, պետութեան պատասխանատուին կը սպառնայ և կ'ըսէ թէ՝ «Եթէ Գարեգին Ներսիսեանը կաթողիկոս ընտրուի, ես զինքը չեմ նախնար և Պոլսոյ մէջ անկախութիւնս կը հռչակեմ»:

Այս սպառնալիքէն քանի մը օր յետոյ, կաթողիկոս ընտրուեցաւ Գարեգին Ներսիսեանը, որ կոչուեցաւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Բայց նոյն ժամերուն, հայկական պետութեան հիմերը խախտող զարհուրելի ողբերգութիւն մը կատարուեցաւ: Սպաննուեցան Հայաստանի կառավարութեան առաջնակարգ ղեկավարները:

Նահատակուողներուն մէջն էր նաեւ, Հայաստանի կառավարութեան Կարչապետը՝ Վազգէն Սարգիսեանը, որուն դէմ թրջամէտ Պատրիարքը և հինգ տխրահռչակ կրօնականներ միասնաբար բողոքի զեկոյց հրատարակած էին:

Ողբերգութեան նախընթաց օրերուն, հայկական կառավարութեան դէմ կատարուած այս բողոքները դիպուած էին, թէ՛ Սիոնիստական սաղայելալկան ծրագիրներուն մաս կազմող գործադրութիւններ: Չենք գիտեր:

Ամէն պարագայի՝ ողբերգութեան սուգի օրերուն, Մեսրոպ Մուրաֆեան չկրցաւ իր սպառնալիքը գործադրել և ստիպողաբար մասնակցեցաւ Գարեգին Բ. Կաթողիկոսին օծման արարողութիւններուն:

Եւ Պոլիս վերադառնալէն միջոց մը յետոյ, Երեւանի մօտ ամերիկեան դեսպանը, Պոլսոյ հայոց Պատրիարքարանը կ'այցելէ: Կը տեսակցի Պատրիարքին հետ:

Ուրկէ՛ ուր Երեւանի մօտ Ա.Մ.Ն.ի դեսպանը, Պոլսոյ մէջ, Մուրաֆեանին այցի կ'երթայ: Բնական է՝ թշնամին չի քնանար:

Ամերիկեան դեսպանը հարկաւ տեղեակ էր Պատրիարքին սպառնալիքներէն և անկախութիւն հռչակելու մտադրութենէն:

Սիոնիստ ամերիկեան իշխանութեան, Կովկասի մէջ, ամենամեծ արգելքը

եղող Հայաստանը բաժանելու, պառակտելու աշխատանքներուն մէջ, ըմբոստ Պոլսոյ հայոց Պատրիարքի մը դիրքորոշումը, շատ մեծ կարեւորութիւն ունէր:

Եւ այս այցելութենէն քիչ յետոյ, Պատրիարքը, իր ինքնագլուխ գործընթաց-քին վերսկսաւ: Առանց որեւէ պատճառի, Հռոմի Պապին այցելութեան գնաց, և առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկութեան և հաւանութեան՝ Քահանայապետը Պոլիս հրաւիրեց:

Բնական է, որ այս ինքնագլուխ կեցուածքը, Գարեգին Բ. Ամենայն հայոց Կաթողիկոսին հակադէտութեան պատճառ եղաւ:

Եւ Պատրիարքը իր ըմբոստութեան ծրագիրը գործադրել սկսաւ, և 21 Յունիս 2000-թ.ին Էջմիածնի մէջ կայացող Հոգեւոր Գերագոյն Խորհուրդին նիստերուն մասնակցելու համար Էջմիածին չգնաց, պատրուակելով, նոյն թուականներուն զուգահոյսով, Կեսարիոյ ուխտագնացութիւնը:

Եւ այս ընդդիմութեան ուրիշ մէկ երեսոյթը ըլլալով՝ Պոլսոյ «Մարմարա» թերթին 21 Յունիս 2000-ի թիւին մէջ, հրատարակել տուաւ հետեւեալ թրջավայել յայտարարութիւնը.

«Միւս կողմէ արտասահմանի եկեղեցիները, որոշ անհանգստութիւն մը զգացած են «Մտադրութիւններու Յուշագիր» տնուն այն փաստաբուրձէն, որ Հայաստանի հանրապետութեան և Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեւ 17 Մարտ 2000 -ին ստորագրեց Վեհափառ Հայրագետը, առանց պաշտօնապէս խորհրդակցելու Գ. Հ. Խ.-ի կամ նուիրագետական միւս երեք թրոններու հետ»:

Եւ ի՞նչ էր Կաթողիկոսին Հայաստանի կառավարութեան հետ ստորագրած Յուշագիրը՝ «Հայաստանեայց Եկեղեցիին և Հայաստանի կառավարութեան միջեւ աւելի սեղմ գործակցութեան և միասնական աշխատանքի» յուշագիր մըն էր:

Եւ ո՞ր հայկական եկեղեցին անհանգիստ եղած էր այս Յուշագիրէն:

Միայն ինքը: Թուրքերուն տիրահաճոյ Մեսրոպ Մուրաֆեանը, որ Երեւանի մէջ եղեռնի Յուշարձանը այցելելու ո՛չ արտօնութիւնը և ո՛չ ալ համարձակութիւնը ունի, թուրքերէն վախճալուն պատճառաւ:

Բայց ո՞վ է այս Պատրիարքը:

Իր կենսագրութեան մէջ, կ'ուզենք նշել՝ մեզի համար ամենէն կարեւոր հանգրուանը որ, ինքնին, շատ մը հանելուկներուն լուծումն է:

Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքին մէջ կուսակրօն Քահանայ ձեռնադրուած այս հոգեւորականը, իր կրօնական բարձրագոյն ուսումը ստացած է՝

**ԹԵԼ ԱԻԻԻ ՀՐԷԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ:**

★ ★ ★

Շատ անգամ ըսած ենք, որ Պոլսեցի հայերը, թուրքերուն ձեռքը գերիներ են:

Բայց, Պոլսեցի հայերը, հայկականութեան «ջիղ» մը ունին, որը, նոյնիսկ Սփիւռքի հայկական համայնքներուն մէջ, նոյն զօրութիւնը չունի:

Պոլսեցի հայը, իբր հայկականութեան ապաստանարան, միայն իր հայկական եկեղեցին ունի:

Եւ ան միայն գիտէ, իր Հայաստանեայց եկեղեցին, և անքակտելիօրէն կապ-լած է «Սուրբ Էջմիածնին»:

Երբ Մեսրոպ Մուրաֆեան, Սիոնիստներուն և Թուրքերուն

Խաճ. Թիկը, 1995 թ. սեպտեմբեր 30-ին Տիբլիզի Կաթողիկոսական կենտրոնում

(Ծար. էջ 10)

**ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԿԱՄԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԵՂՈՂ ՊՈԼՍՈՅ... (Շար. էջ 2-էն)**

հռչակելու փորձեր կ'ընէ. Պոլսոյ մէջ գիտակից անձնաւորութիւններ, ընդվզելով Պատրիարքին այս անջատողական միտումէն, իրեն կը դիմեն և կ'ըսեն՝

«Դուն ո՞վ ես, որ մեզի էջմիածնէն անջատելու կ'աշխատիս:

Դուն, եթէ կ'ուզես, կը գատուիս կ'երթաս, բայց մենք երբեք չենք ձգեր մեր Սուրբ էջմիածինը»:

Եւ այսօր, Պոլսոյ հայկական համայնքին մէջ, համոզում մը կայ.

«Մեսրոպ Մուրաֆեանը՝ ուր որ ուզէ, ինքը թող երթայ. ուզենէ միւս աշխարհ՝ դժոխք կամ դրախտ երթայ. բայց միայն երթա՛յ»:

**Յ.Գ. ԲԱՅԱՏՐԱԿԱՆ**

**ՀԱՐՑՈՒՄ... Ինչո՞ւ միշտ «մենք» կ'ըսենք:**

**ՊԱՏԱՍԻԱՆ... Հայուն «եսասիրութեան» դէմ հակազդեցութիւն մըն է՝ չըսելու համար տեւական «ես»**

**Հ... Ինչո՞ւ Անաթոլիա և ոչ Անատոլու:**

**Պ... Անաթոլիա՝ յունարէն Արեւելք ըսել է: Աթէնացիները, 3000 տարիներէ ի վեր, այդ երկիրը «Անաթոլիա» կը կոչէին՝ Արեւելք գտնուելուն պատճառաւ: Անատոլու-ն Անաթոլիա-ին թրեացած ձեւն է: Թրեներէն բառ գործածելը չենք սիրեր:**

**Հ... Ինչո՞ւ վրէժ Ռուբէնեան:**

**Պ... Որովհետեւ Ռուբէն Սեւակին վրէժը չէ առնուած: Չեւով մը գայն առնելու կը ջանանք:**

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՒԼՒՆԿԻՐԵԱՆ  
{ՎՐԷՃ ՌՈՒՔԷՆԵԱՆ}**

**Երեքշաբթի 11 Յուլիս 2000**

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵԼ ՊԵՏՔ Է...**

*ԹՈՒՐԶԻՈՅ ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԵԱՅ ԻՍՍԱԾՈԼ  
ՃԵՄԻՆ, ՈՐ ԿԱՐՄԵՆ ԿՈՆՏԵԼ ՏՈՒՄԻ ԼԵՆԻՆԱԿԱՆ (ԿԻՒՄՐԻ)  
ԶԱՂԱԶԻ ՀԱՅ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԵՒ ԱՅՍ ԶԵՒՈԿ ԱՅԴ ՊՆԱԿԱԼԵՉ  
ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՍԿՑՈՒՑ ԹՈՒՐԶԻՆ Ո՞Վ ԸԼԼԱԼԸ*

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԷԺ ՈՒՌԲԵՆԵԱՆ)**

Եղելութիւնը ծանօթ է բոլորին: [Դուք այս եղելութեան ուզէ՞ք ողբերգութիւն ըսէք և կամ խեղկատակութիւն]:

19 Յունիս 2000-թ.ին, Կարսի թուրք քաղաքապետին հրաւերով, 28 Յունիս 2000-ին Կարս կը ժամանեն, Լեւոնականի քաղաքապետի օգնականը, Շիրակ նահանգի պաշտօնատարը, Լեւոնականի առևտրական սեփականի նախագահը և իրենց թարգմանը, «ընդամենը չորս հոգի», մասնակցելու Կարսի մէջ կատարելիք շրջանային համաժողովի մը:

Բայց պանդոկ ժամանելէ միջոց մը ետք, հայու անուն կրելու անարժան այս հայերը, թուրք ոստիկանութեան կողմէ կը բռնուին և ինքնաշարժի մը մէջ դըրելով թուրք և Կրացական սահմանին «ՓՈՍՈՖԻ» անցքէն դուրս կը վճռուին:

Այս ի՞նչ նուաստացուցիչ երեւոյթ է՝ Լեւոնականի հայ քաղաքային պատասխանատուներուն Կարս երթալը, թուրքերուն հիւր ըլլալը և յետոյ, անփառունակ ձեւով, դուրս դրուիլը:

Լեւոնականի այս դեկավարները հայկական պատմութեան բնաւ տեղեակ չէին և բնաւ ազգային արժանապատուութիւն չունէին, որ թուրք ջարդարարներուն հիւրը ըլլալով Կարս գացին: Այս անոպաները, թուրքին ծուղակը իյնալով, Կարս գացին, պարզապէս իրենց հաճոյքին համար, որ «քէֆ» ընեն:

Բայց այս երեւոյթը միայն Լեւոնականի դեկավարներուն յատուկ կեցուածք չէ:

Դժբախտաբար, Հայաստանի հայութեան մեծամասնութեան յատուկ երեւոյթ է:

Այսօր Հայաստանի հայութիւնը [բնական է ա՛յն, որ նիւթական կարողութիւն ունի] թրքական գրօսավայրերը՝ Պոլիս, Անթալիա և նման թրքական քաղաքները կ'երթայ պտոյտի՝ առանց մտածելու, որ իր հարազատներուն ջարդարարները եղող թուրք աւազակներուն, հայուն հայրենիքը գողցողներուն «որք»ը կ'երթայ: ԵՒ Կ'ԵՐԹԱՑ՝ ԱՌԱՆՑ ԽՂՃԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՄՉՆԱԼՈՒ:



**Կարսէն վճռուած Լեւոնականի Տօն Զիշօքներուն 1 Յուլիս 2000-ի թրքական «Հիրփիլէ» թերթի մէջ հրատարակուած նկարը:**

\*\*\*

Գրեթէ 70 տարիներ տեւող Սովետական վարչաձեւը [1920-1991], Հայաստանի և հայ ազգին համար, իր անթիւ և անհամար առաւելութիւններով, իսկական քարեքախտութիւն մըն էր:

Նախ և առաջ հայերը՝ Սովետներուն հովանաւորութեան և պաշտպանութեան ներքեւ «ՊԵՏՈՒԹԻՒՆ» մը ունեցան:

Հայկական Պետութիւն մը որ, 800 տարիներէ ի վեր, իր գլխուն վրայ իշխող թրջական Եաթաղանէն ազատած էր:

Յետոյ, մեզի համար ամենէն կարեւորը՝ հայերը, առանց «ԻՐԱՐ ՈՒՏԵԼՈՒ» միասնաբար ապրիլ սորվեցան:

Դժբախտաբար, դարերու ընթացքին, հայ ազգին նկարագրին վերածուեցաւ, իրարու հետ կռուրտիլը:

Կան ազգեր, որ իրար կը քաշեն, և կան ազգեր ալ, որ իրար կը հրեն:

Մենք, այն ազգերէն ենք, որ իրարու հետ տեւական պայքարի մէջ ենք:

Եւ այս երեւոյթը շատ յատկանշական է. հետեւեալ իրականութեամբ՝

Հայը, օտարին շատ շուտ կ'ենթարկուի, բայց ո՛չ հայուն:

Հայը, հայուն դէմ՝ միշտ ըմբոստ է: Կարծէք, թէ հայուն թշնամին, հայն է:

Սովետական խիստ և կարգապահ վարչաձեւը, հայուն նկարագրին այս տկարութիւնը ձեւով մը յղկեց, ոչնչացուց:

Եւ հայերը, Սովետական կարգապահ վարչաձեւին ենթարկուած տարիներուն, իրենց ցեղային առաւելութիւնը եղող ուշիմութեամբ և աշխատասիրութեամբ, կրթական, մշակութային ու գիտական բոլոր մարզերուն մէջ, ամենաբարձր մակարդակներու հասան:

Այս պատճառաւ ալ, 1960-ին Պոլիս այցելող Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետը, հպարտութեամբ սապէս արտայայտուեցաւ.

«ԵՍ ԵՐԿՐԷ ՄԸ ԿՈՒ ԳԱՄ, ՈՒՐ ԵՐԵՔ ՀՈԳԻԷՆ ՄԷԿԸ ԳԻՏՆԱԿԱՆ Է»:

★ ★ ★

Սովետական վարչաձեւի տարիներուն, երկրին իշխանութիւնները, Սովետ. Միութեան մէջ ապրող զանազան ժողովուրդներուն իրարու հետ ունեցած թըշնամութիւններուն, վեճերուն, վարչաձեւին խստութեան և կարգապահութեան շնորհիւ, կրցան արգելք ըլլալ:

Եւ Սովետական շատ ազդեցիկ քարոզչութեան պատճառաւ, ժողովուրդներու միջեւ եղբայրութեան և համերաշխութեան հոգեվիճակը ստեղծուեցաւ: Եւ այս ձեւով «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻԱԿ ԱԶԳԻ ՄԸ ՀԱԻԱՏՔԸ» մէջտեղ նետուեցաւ:

Եւ Սովետական շրջանին պետութեան սահմաններուն մէջ ամենամեծ յանցանքը ազգայնապաշտութիւնն էր: Եւ ազգայնապաշտութեան յանցանքը գործողները, ամենախիստ ձեւով կը պատժուէին:

Վերը նշուած տուեալներուն պատճառաւ Սովետական վարչաձեւը, Հայաստանի ժողովուրդին վրայ, հայկականութեան չափանիշով ունեցաւ նաեւ վնասակար ազդեցութիւններ ալ:

Սովետական վարչաձեւը հայ ժողովուրդին և մանաւանդ նոր սերունդներուն մէջ, տկարացուց հայ ազգային և կրօնական գրեթէ բոլոր աւանդութիւնները:

Որոշ համեմատութեամբ մը մոռցնել տուաւ հայ ազգին պատմութիւնը, ընդհանուր առմամբ:

Եւ մանաւանդ՝ մասամբ մոռցնել տուաւ թուրքերուն կատարած հայկական

ցեղասպանութիւնը:

Եւ Հայաստանի ժողովուրդը, այս պատճառաւ, Սփիւռքի հայերուն մեծամասնութեան նման, թուրքերուն դէմ թշնամութեան, ատելութեան և վրէժխնդրութեան զգացումներ չունեցաւ:

Եւ Հայաստանի ժողովուրդին համար Թուրքը, դրացի բոլոր ժողովուրդներուն նման, ժողովուրդ մըն էր:

Թէեւ Երեւանի մէջ 1965-ին, ցեղասպանութեան յուշարձանը կառուցուեցաւ: Բայց այս յուշարձանը աւելի խորհրդանշական իմաստ մը ունէր:

Յուշարձանին վրայ, մինչեւ Սովետական վարչաձեւին վերջին օրերուն, որեւէ արձանագրութիւն չկար. և մանաւանդ՝ ցեղասպան Թուրքին անունը հոն չէր արձանագրուած:

Եւ դուք ի՞նչ կրնաք սպասել Սովետական շրջանի հայկական սերունդներէն, որոնք հայկական ազգային դաստիարակութիւն գրեթէ չեն ստացած, թուրքին ով ըլլալը չեն գիտեր, և մանաւանդ՝ ցեղասպանութեան ցաւը իրենց մորթին վրայ չեն զգացած:

Եւ Սովետական շրջանի հայկական սերունդները, ասկէ ետքն ալ, առանց անպատեհութիւն տեսնելու, պիտի երթան ցեղասպան թուրքերուն երկիրը՝ Պոլիս ու Անթալիա, իբր զբօսաշրջիկ կամ աշխատաւոր:

Լեւինականի քաղաքային ղեկավարները պիտի այցելեն Կարս, թուրքերուն հետ բարեկամութիւն ընելու խաբկանքով և մանաւանդ՝ առեւտուր և շահ ընելու հեռանկարներով:

Անոնք, իրենց ստացած դաստիարակութեան պատճառաւ, աւելի ճիշդ՝ իրենց չունեցած ազգային դաստիարակութեան հետեւանքով, ծուղակը պիտի իյնան:

Բայց, ի՞նչ ըսենք այն հայ անձնաւորութիւններուն, որոնք հայուն թշնամիներուն ծախուած ըլլալուն պատճառաւ Հայաստանը, հայուն վերջին յոյսը եղող մեր հայրենիքը կ'առաջնորդեն դէպի «ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԼԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ» ԸՍՈՒԱԾ ԴԺՈՒԱՅԻՆ ՃԱՍՏՈՒՆ:

★ ★ ★

Կեանքը, անվերջ պայքար մըն է, վերապրելու համար:

Եւ այս անողոք պայքարին ընթացքին, «տկարը» կորսուելու դատապարտուած է:

Եւ այս կեանքի արշաւին մէջ, «արդարութիւն» ըսուած բառը որեւէ իմաստ չունի:

Եւ Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝

«ԶԻ ԿԵԱՆՔԸ ԱՆՈՆՑ Է ՄԻԱՅՆ, ՈՐ ԶԱՋ ԵՆ»

«ԱՆՈՆՑ ՈՐ Կ'ԱՊՐԻՆ ՈՒՐԻՇԻՆ ՄԱՀՈՎ»:

Ա՛յս է բնութեան դաժան օրէնքը՝ ամենափոքր արարածէն մինչեւ ամենամեծին համար...: Եւ ամենափոքր ազգէն, ամենամեծ ազգին համար...:

1939-1945-ի աշխարհամարտէն անմիջապէս յետոյ, Ամերիկայի Նախագահ Թրուման՝ Սովետները խորտակելու համար, «Պաղ պատերազմը» շղթայազերծեց:

Եւ այս պատերազմին ամերիկացիները, Իտալացի փիլիսոփայ MACHIAVELLI-ին գրած "LE PRINCE" գրքին մէջ նկարագրածին պէս՝ «Նպատակին հասնելու համար, բոլոր միջոցները» գործածեցին Սովետներուն դէմ:

Մանաւանդ սուտերու, կեղծիքներու, սադրանքներու և դաւադրութիւններու ռազմավարութիւնը, աթոմական ռումբէն շատ աւելի ազդեցութիւն գործեց՝ Սովետները կործանելու համար մղուած պայքարին մէջ:

Այս սադայէլական ռազմավարութիւնը, շատ բացայայտօրէն կ'ապացուցանէր, թէ 1945-էն սկսեալ Ամերիկեան քաղաքականութիւնը, բոլորովին Սիոնիստներուն կողմէ ղեկավարուեցաւ:

★ ★ ★



1988-թ.ներուն Հայաստանի մէջ, նախ Ղարաբաղի համար, յետոյ Հայաստանի «ազատութեան» համար կատարուող ցոյցերը, պաղ պատերազմին վերջին հանգրուաններէն մէկն էին:

Սիոնիստ ամերիկացիներուն ցուցմունքներով առաջնորդուող Լեւոն Տէր Պետրոսեան և Ղարաբաղի կոմիտէ կոչուած կազմակերպութեան իր ընկերները 1991-ին, ի վերջոյ յաջողեցան քանդել Սովետական Հայաստանը:

«Մինչ այդ՝ ուրիշ ամերիկացի գործակալ մը՝ Մոնթէ Մելքոնեանը 1983-ին, Պէյրութի մէջ, Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան համար պայքարող Հայկական Գաղտնի Բանակը քանդած էր:

Եւ Սովետական Հայաստանը քանդող Լեւոն Տէր Պետրոսեանը, խելագարուած հայ ժողովուրդին կողմէ (ինչպէ՞ս և ի՞նչ պայմաններով չենք գիտեր) նախագահ ընտրուեցաւ:

«Ազատութեան» առաջին տարիներուն, Լեւոն Տէր Պետրոսեանին մէկ ոտքը միշտ ամերիկա էր: Տեւական ամերիկա կ'երթար, կու գար: Եւ ամերիկացիները վճարեցին առաջին տարիներուն Հայաստանի պետութեան ծախսերը:

Բայց, ասոր փոխարէն, ամերիկացիները պայմաններ դրին՝

1.- Պիտի բարեկամանար թուրքերուն հետ: 2.- Պիտի մոռնար Եղեռնը: 3.- Պիտի մոռնար Արեւմտեան Հայաստանը: 4.- Եւ հայ ժողովուրդին ուշադրութիւնը Ղարաբաղի վրայ պիտի կեդրոնացնէր: Եւ այդպէս ալ ըրաւ:

Ջանգան պատրուակներով թուրքիա այցելեց:

Եւ ջանաց թուրքերուն հաւատացնել, որ Եղեռնի հարց մը և Արեւմտեան Հայաստանի խնդիր մը գոյութիւն չունի Հայաստանի համար:

Մանաւանդ շատ աշխատեցաւ թուրքերուն հետ դիւանագիտական կապեր հաստատելու համար:

Եւ պատրաստ էր, Անգարայի մօտ Հայաստանի դեսպան նշանակելու, ֆրանսաբնակ թրքախօս հայ մը, որուն կինը, Լեւոն Տէր Պետրոսեանին կողակցին նման, Հրեայ մըն էր:

Եւ ամենէն անհաւատալին՝ թուրքիոյ ծայրայեղ աջակողմեան թուրանական կուսակցութեան նախագահ Ալփասլան Թիւրքէշին հետ բարեկամական կապեր հաստատեց, և անոր հետ քաղաքական երկխօսութիւններ կատարեց:

Թիւրքէշին հետ այս բարեկամական կապը ստեղծուեցաւ շնորհիւ ֆրանսաբնակ թրքախօս հայուն:

Որովհետեւ այս թրքախօս հայուն դպրոցական ընկերն էր Թիւրքէշին տղան:

Եւ այս ձեռով, հայերուն և թուրքերուն միջեւ, անպաշտօն մեղրալուսնի շըրջան մը սկսաւ:

Եւ Լեւոն Տէր Պետրոսեան շատ յոյս ուներ, որ իր կատարած Եղեռնի և Արեւմտեան Հայաստանի ուրացումներէ յետոյ, թուրքերուն հետ, միջոց մը ետք, դիւանագիտական կապերը պիտի հաստատուէին:

Եւ Լեւոն Տ. Պետրոսեանը, այս յոյսով, սպասեց ու սպասեց:

Եւ թուրքերուն՝ այսօր- վաղը խոստումներով, տարիները անցան և հասաւ մինչեւ 1998:

Կրճա՞ք մտածել, թէ ինչ ըսել է Լ.Տ.Պ.ին, 7 տարիներ տեւողութեամբ, Հայաստանի պետութեան Եղեռնը և Արեւմտեան Հայաստանը մոռցնել տալը: (Ժար.ը էջ 7)

Մինչ այդ Ամերիկան, իր կատարած օգնութեան ծորակը, օրէ օր աւելի գոցած էր: Եւ Հայաստանի տնտեսական վիճակը աղէտալի և անտանելի մակարդակի մը հասաւ:

Եւ այն ատեն Ամերիկացիները, օգնութիւն կատարելու համար, նոր պայման մը դրին. «ԱՋԵՐԻՆԵՐՈՒՆ ԼԵՏ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԸ ԿԱՐԳԱԴՐԷ»:

Եւ ամերիկացիներուն կողմէ շատ ծանր սպառնալիքներու ենթարկուող Լեւոն Տէր Պետրոսեանը, 1998-ին յօդուածով մը, տասը տարիներ առաջ իր գլխատրութեամբ ստեղծուած Ղարաբաղի հարցը լուծելու համար, «ՂԱՐԱԲԱՂԸ ԱՋԵՐԻՆԵՐՈՒՆ ԵՏ ՏԱԼ ԱՌԱՋԱՐԿԵՑ»:

★ ★ ★

Եւ այսօր, 7 տարիներէ ի վեր, Եղեռնի և Արեւմտեան Հայաստանի հարցերէն Լ. Տէր Պետրոսեանի «շնորհիւ» ձերբազատուող Թուրքիան, Կարսէն կը վոնտէ Լենինականի քաղաքային ղեկավարները, որոնք, Կարսի քաղաքապետին հրաւերով, հոն եկած էին «Կովկասեան կայունութեան ուխտի պատրաստութեան համաժողովին»:

Այստեղ կ'ուզենք նշել 5 եղելութիւններ, որոնք կ'ապացուցանեն, թէ Լեւոնի ստեղծած Ղարաբաղի հարցը ինչ աստիճան ողբերգական հանգրուանի մը հասցուցած է Հայաստանը.

1.— Կարսի համաժողովին մասնակցող Թուրքիոյ նախկին նախագահ Սիւլէյման Տէմիրէլ, ելոյթ մը կ'ունենայ և, ի մէջ այլոց, կ'ըսէ. «Հայաստան, անկախանալէն անմիջապէս ետք, Ղարաբաղի հարցը յարուցանեց և կոտորեց Ատրպէյջանցիները և մեր մէկ միլիոն եղբայրները գաղթական դարձան»:

2.— Թուրքիոյ արտաքին նախարարութիւնը կը պնդէ, թէ «հայերուն Կարսէն վոնտուելուն հարցին մէջ, սխալ բան մը չէ գործուած. Թուրքիոյ մէջ կիրարկուած քաղաքականութիւնը կը տնօրինէ, որ միջազգային բարձրաստիճան նախաձեռնութիւններու չարտօնուի Հայաստանի մասնակցութիւնը: Եթէ պէտք ըլլայ, Արտաքին Նախարարութիւնը դարձեալ նոյն որոշումը կ'առնէ: Որովհետեւ Ատրպէյճանի հողամասերուն 20 առ հարիւրը հայերու բռնագրաւման տակ կը գտնուի:

3.— Ատրպէյճանի Ապահովութեան նախկին խորհրդատու Վէֆա Կիլիզատէ կ'առաջարկէ՝ «Ատրպէյճան և Թուրքիա իրարու միանան և աւելի զօրանան:

4.— «Ատրպէյճանի Պաշտպանութեան նախարարը և Ամերիկայի Պաշտպանութեան նախարարը Հրեայ Վիլիամ Զոհէն, զինակցութեան և գործակցութեան համաձայնագիր մը ստորագրեցին»:

5.— «Պիլ Զլինթըն կ'ուզէ 4 միլիառ տոլար արժէքով ռազմական ուղղութիւններ տալ Թուրքիոյ»:

Այս բոլոր սարսափելի լուրերը կարդալէ յետոյ, մենք ալ կ'առաջարկենք՝ Լեւոն Տէր Պետրոսեանի առաջնորդութեամբ Ղարաբաղի Կոմիտէի բոլոր անդամները և մանաւանդ Զօրի Պալանեանը բարձրագոյն պատժական ատեանին յանձնել՝ Հայուն հայրենիքը վտանգի ենթարկած ըլլալու յանցանքով:

### Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր յարգարժան աշխատակից Յ. Չիլինկիրեանի «ՆԱՅԻՄԻ»-ի թիւ 128-ի մէջ լոյս տեսած «Թուրքերուն կամակատարները...» խորագրեալ յօդուածին թերթիս Բ. էջին հրատարակուած (Ծար.ը՝ 10-րդ էջ) վերջին պարբերութիւնը կը խնդրուի կարդալ այսպէս.

«Երբ Մեսրոպ Սուքասեան, Սիոնիստներուն և Թուրքերուն համոյակատարութեամբ, 1999-էն սկսեալ էջմիածնէն հեռանալու և անկախութիւն հռչակելու փորձեր կ'ընէ, Պոլսոյ մէջ գիտակից անձնատուութիւններ, ընդվզելով Պատրիարքին այս անջատողական միտումէն, իրեն կը դիմեն և կ'ըսեն... «Դուն ա՞վ ես, որ մեզի էջմիածնէն անջատելու կ'աշխատիս: Դուն, եթէ կ'ուզես, կը զատուիս կ'երթաս, բայց մենք երբեք չենք ձգեր մեր Սուրբ էջմիածինը...»:

Համակարգիչին մէկ քմայքով ակամայ գործուած այս վրիպումին համար, յօդուածագրին և ընթերցողներուն ներողամտութեան կ'ապաւինինք:

Ե.

ԽՈՐՔԻՆ ՄԷՋ, ՄԵՆՔ ԱԼ  
«ԱՅԴՊԷՍ ԵՆՔ» ...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱԼ  
[ԿՐԷԺ ՈՌԻՔԵՆԵԱՆ]

Այո, մենք այլ «Դաշնակցական» ենք, բայց ժողովուրդին «Դաշնակցություն»-  
էն հասկցած իմաստով: Այսինքն՝ Ազգայնական: Ազգը և Հայաստանը շատ սի-  
րող: Հայ Ազգը և Հայաստանը ամեն բանէն վեր համարող:

Մենք համոզուած ենք, թէ այս իմաստով, հայերը պատրաստ են «Դաշնակ-  
ցական», այսինքն՝ Ազգայնական ըլլալու:

Հայերուն պէս անիրաւուած, դարերով ցեղասպանութեան ենթարկուած մեծ  
Ազգ մը, վերապրելու համար ստիպուած է Ազգայնական ըլլալու, այդ գաղափա-  
րականին ծառայելու:

Կը հիանանք Դաշնակցութեան այն կարգախօսին, որ 1895-թ.ներուն՝ «Մահ  
կամ Ազատութիւն» սկզբունքով ինք եւս, յաջողելով Ս.Դ.Հ.Նչակեան Կուսակ-  
ցութեան, քնացող հայ ժողովուրդին մէջ արթնցուց ազգայնական զգացումները,  
ու նաեւ՝ ազգին համար նահատակուելու Վարդանանց զոհաբերութեան ոգին:

Մեր համոզումով՝ «Մահ կամ Ազատութիւն» կարգախօսին հայ ժողովուրդին  
մէջ տարածման տարիները, հայոց պատմութեան մէջ, «Վարդանանց»ի չափ  
ճակատագրական թուական մը կը կազմեն:

Բայց հայ ժողովուրդին մէջ ստեղծուած այս սքանչելի վերածնունդի ոգին,  
հայ ազգի թշնամիներուն կողմէ խափանուեցաւ:

Արեւմտեան պետութիւնները Սիոնիստներուն առաջնորդութեամբ, տեսնելով  
հայ ազգին վերազարթումին իրենց համար ներկայացուցած վտանգը, օգտուե-  
ցան Դաշնակ կուսակցութեան կեդրոնամէտ կառույցէն, և կրցան մոլորեցնել  
որոշ ղեկավարները: Եւ այս ձեւով, հայուն թշնամիները յաջողեցան, հայ ազգին  
շարժումը իր նպատակէն հեռացնել և տանիլ ազգավնաս ուղղութիւններու:

Այս կուսակցութեան պատմութիւնը՝ 1900-թ.ներէն մինչեւ մեր օրերը՝ բարի  
հայ ժողովուրդին ազգային զգացումներու մասամբ շահագործման տարեգրու-  
թիւն է նաեւ:

Մէկ կողմը կը տեսնենք կուսակցութեան հիմերը կազմող, հայ ազգային գա-  
ղափարականով համակուած շարքայիները և նաեւ համակիրները:

Միւս կողմը կը տեսնենք, Արեւմտեան պետութիւններուն ցուցմունքներով  
առաջնորդուող, Կեդրոնական դիւանի որոշ անձեր:

Այս երկու հատուածները՝ բարին ու չարը, հրեշտակը և սատանան, մէկ դարէ  
ի վեր և մինչեւ այսօր, կրցան ապրիլ քով քովի:

Բարին՝ շարունակեց ամբողջական հաւատարմութեամբ և ենթակայութեամբ  
հետեւիլ իր ղեկավարներուն:

Իսկ Չարը չդադրեցաւ իր սադրանքները կատարելէ:

Այս անբնական գոյակցութիւնը մինչեւ ե՞րբ պիտի շարունակէ:

Չենք գիտեր:

Բայց, կը հաւատանք, որ պիտի գան անպայման խկական ազգասէր ղեկա-  
վարներ և հեռացնեն վնասակարները: . . .

★ ★ ★

Մեր Պոլիս ապրած տարիներուն Թուրքերը, Սովետ Հայաստանէն և Սովետ հայութենէն, վրէժխնդրութեան տեսակէտով, որեւէ մտահոգութիւն չունէին:

Որովհետեւ, Թուրքերը գիտէին, թէ այնտեղ որեւէ ազգայնական շարժում, շատ խիստ ձեւով կը պատժուէր:

Թուրքերուն համար, հայկական վրէժխնդրութեան տեսակէտով, ամենէն մեծ մտահոգութիւնը՝ Դաշնակ Կուսակցութիւնն էր:

Այս պատճառաւ Թուրքերը, արտասահմանի մէջ, շատ մօտէն կը հետեւէին այս կուսակցութեան աշխատանքներուն, հաւաքոյթներուն և ընդհանուր հայկական անցուղարձերուն:

Արտասահմանի մէջ, բոլոր թրջական դեսպանատուներուն և հիւպատոսարաններուն առաջնակարգ պարտականութիւնը հայկական, մանաւանդ՝ Դաշնակ Կուսակցութեան աշխատանքները շատ մօտէն լրտեսել էր:

Այդ պատճառաւ արտասահմանի գրեթէ բոլոր թրջական հիւպատոսարաններուն մէջ, անպայման հայերէն գիտցող և ընդհանրապէս [դժբախտաբար] հայու անուն կրող պաշտօնեաներ կ'աշխատէին:

Ասկէ բացի, Թուրք հիւպատոսարաններուն պաշտօնեաները իրենց խորամանկութեամբ, Սփիւռքի հայ ժողովուրդին մէջ, շատ մը հայերու հետ բարեկամական կապեր հաստատած էին, որոնք գիտակից և կամ անգիտակից լրտեսներ էին Թուրքերուն...:

Թուրքերը՝ հայ ժողովուրդէն շատ անելի լաւ գիտէին, իրենց կատարած ցեղասպանութեան տարողութիւնը:

Եւ միշտ մտահոգ էին հայկական վրէժխնդրութենէն, որ մասնաւորապէս «Դաշնակ»ներէն կրնար գալ:

Չէ՞ որ Դաշնակ վրիժառուներու կողմէ սպաննուած էին Թալաթը և ուրիշ Թուրք ճիւղեր:

Եւ Թուրքերուն համար «Դաշնակ» ըսելը՝ վրէժխնդրութեան խորհրդանիշն էր:

Այս պատճառաւ, շատ կը սոսկային այս կազմակերպութենէն:

Թէեւ, Շահան Նաթալիի առաջնորդութեամբ, դաշնակցական վրիժառուներուն Թուրք դահիճները պատժող շարժումը, «Վերէն» եկած հրամանով մը դադրեցունցաւ, բայց Թուրքերը գիտէին, որ կուսակցութեան հիմերը կազմող ժողովրդական խաւերը, ի՛նչ աստիճան ատելութեամբ և վրէժխնդրութեամբ լեցուն էին Թուրքերուն դէմ:

Եւ Թուրքերը միշտ կը վախնային ասոնցմէ գալիք վրիժառական նոր շարժումէ մը:

★ ★ ★

Բայց այս կազմակերպութեան որոշ ղեկավարներ, կուսակցութեան կանոնագրութեան վրայ յենելով, սքանչելի ձեւով յաջողեցան իրենց շարքայիներուն և նաեւ իրենց համակիրներուն արգելք ըլլալ, որ Թուրքերուն դէմ որեւէ վրէժխնդրութեան արարք գործեն...:

Բ. Աշխարհամարտի տարիներուն, անոնք գտան նոր հովանաւոր մը՝ Հիթլերեան գերմանացիները, որոնք 1941-ին Սովետ Միութեան դէմ յարձակումի անցան:

Այդ տարիներուն ի՛նչ զարհուրելի երեւոյթ էր, եռագոյնի վրայ տեսնել՝ Հիթլերական Կեռխաչը:

Եւ նաեւ ի՛նչ մեծ ցաւ էր մեզի համար, տեսնել Գերմանական համազգեստով

հայկական ջոկատ, որ կը պատրաստուէր Սովետ ուժերուն դէմ պատերազմելու  
Բարեբախտաբար, որ Սովետները չախչախիչ պարտութեան մատնեցին  
հիթլերականները և Պերլիցի վրայ կոթողեցին յաղթանակի դրօշը...:

Բ. Աշխարհամարտի տարիներուն սկսած Սովետական և Արեւմտեան պատերազմներուն բարեկամական յարաբերութիւնները, Յաղթանակին հետեւեալ օրը, արդէն վերջ գտած էին:

Ամերիկացի Թրումանը՝ առանց ատեն կորսնցնելու, Ս. Միութեան դէմ «Պատերազմ» կոչուող անողոք պայքարի մը սկսաւ:

Եւ այդ օրերուն Հ.Յ.Դ.ի նոյն վարիչները, կրկին հովանաւոր փոխեցին: Աւելի ճիշդ նախկիններուն վերադարձան, և ամերիկեան ծիրին ենթարկուեցան:

★ ★ ★

Պաղ պատերազմի տարիներուն, այս ղեկավարներուն դիրքորոշումը, հայկականութեան տեսակէտով՝ իսկապէս զգուելի էր:

Ամերիկացիները Միւնիխի մէջ, 1945-էն անմիջապէս յետոյ, ամէն տեսակ հակասովետ գործողութիւններու պատրաստութեան հոյակապ համալիր մը կառուցած էին:

Եւ այս համալիրին մէջ ամերիկացիները, այդ ղեկավարներուն յատկացուցին կեդրոն մը, ուրկէ պիտի կատարուէր, Սովետական Հայաստանը խորտակելու համար, ամէն տեսակի քարոզչութիւն:

Եւ այս կեդրոնէն կատարուեցան տխրահոջակ «Ազատութեան Ռատիօ» հաղորդումները, որ Ս. Հայաստանի ժողովուրդը խաբելու, յուսահատեցնելու տեսակէտով քանդիչ դեր կատարեցին:

Եւ այս հայկական կեդրոնին քովը կը գտնուէր Թաթարական, Չէչէնական Ազրաէյնանական և բոլոր միւս՝ հակասովետ կազմակերպութիւններուն կեդրոնները:

Եւ այս ամերիկեան համալիրին մէջ, բոլոր հակասովետ կազմակերպութիւններուն ղեկավարները, ծանօթ հայ ղեկավարները ներառեալ՝ Սի. Այ. Էյ.ի մեծատրոններու ղեկավարութեամբ, միշտ կը հաւաքուէին և քանդիչ ծրագիրներ կ'պատրաստէին:

★ ★ ★

Այս հարցին վերաբերեալ, այստեղ օգտակար կը նկատենք նշել՝ Պոլսեցի մեծ մէկ բարեկամին Նիսի մէջ մեզի պատմածները՝

«Եթէ շիտակը ըսել պէտք է՝ ես Հ.Յ.Դ.ի հանդէպ որեւէ համակրութիւն չունէի: Ընդհակառակը՝ միշտ կը քննադատէի՝ իրենց վարած ազգային վնասակար քաղաքականութեան պատճառով:

Տարի մը, Պոլսոյ մեր տան մէջ, իբր հիւր ընդունեցի, Պէյրութէն նոր ժամանած, մեզի ազգական Մուշեղ Իշխանը:

Այս բանաստեղծ-մտաւորականին գաղափարները զիս այնքան տպաւորեցին, որ իրեն սապէս ըսի.

«Եթէ բոլոր դաշնակցականները քեզի պէս մտածէին, ես ամենէն թունկ դաշնակցականը կ'ըլլայի»:

Բայց, այս թուականէն տարի մը յետոյ պատահած դէպք մը, Մուշեղ Իշխանին ազդեցութեամբ նոյն կազմակերպութեան մասին իմ կազմած դրական գաղափարներս փոխեց:

Այն տարին, Պոլսոյ արուարձաններէն՝ Սուաւիյէ ամառանոցը գացած էինք:

Եւ այդտեղ, մեր տան քովը կը բնակէր, հանգստեան կոչուած, բայց շատ արոյգ թուրք զօրավար մը:

Զանի մը շաբաթ յետոյ, իբր դրացի, բարեկամացանք իրեն հետ:

Թուրք զօրավարը երբ որ հայ ըլլալս հասկցաւ, մտերմութեան մէկ պահունք ինծի պատմեց հետեւեալ եղելութիւնը.

«Ես, տարին քանի մը անգամ Միւնիխ կ'երթամ, իբր Թուրանական կուսակցութեան ներկայացուցիչ, մասնակցելու համար հակասովետական կազմակերպութիւններուն համաժողովին:

Եւ այս Միւնիխի ժողովներուն ընթացքին ծանօթացայ՝ Ամերիկայէն Պարոն... Ֆրանսայէն Պարոն... Եգիպտոսէն Պարոն... Պելյուրէն Պարոն... բոլորն ալ Հ.Յ.Դ.ի ղեկավարներ: Անոնք Միւնիխ եկած էին մասնակցելու հակասովետական կազմակերպութիւններուն համաժողովին: Ես, անոնց հետ, շատ լաւ բարեկամական կապեր ունիմ մինչեւ այսօր»:

Թուրք զօրավարին ինծի այս եղելութիւնը պատմելէն միջոց մը յետոյ, դիպածով, ուրիշէ մը տեղեկացայ, թէ այս թուրք զօրավարը՝ թրքական գաղտնի կազմակերպութեան՝ «ՄԻԹ»-ին առաջնակարգ ղեկավարներէն մէկն է: «ՄԻԹ»- Միլլի Իսթիհպարաթ Թեշքիլաթի- ազգային հետազօտութեան կազմակերպութիւն: Թրքական Սի. Այ. Էյ.]:

★ ★ ★

1973-ին, Լոս Անճելըսի մէջ, հերոս Գուրգէն Եանըգեանի կողմէ երկու Թուրք դիւանագէտներու զգետնումով վերսկսած հայկական վրիժառու պայքարը, Հայկական Գաղտնի Բանակին ամբողջ աշխարհի տարածքին թուրք դիւանագէտներուն դէմ կատարած ահաբեկումներով շարունակուեցաւ:

Այս ահաբեկումները՝ մինչեւ այդ թուականը, հայկականութեան տեսակէտէ մահաբունի մէջ եղող վրիժառական ոգին վերակենդանացուց:

Այս ահաբեկումները, սկիզբը Թուրքերը կարծեցին, թէ Հ.Յ.Դ.ի կողմէ կը կատարուէր:

Բայց, շատ շուտ մէջտեղ ելաւ, թէ Հայկական Գաղտնի Բանակը՝ այս կազմակերպութեան հետ որեւէ կապ չունէր:

Միջոց մը յետոյ, Դաշնակցութիւնը՝ Հայկական Գաղտնի Բանակին հայկական Սփիւռքին մէջ և նաեւ Հայաստանի մէջ շահած համակրանքէն և ժողովրդականութենէն վրդոված, քիչ մըն ալ նախանձի և մրցակցութեան զգացումներէ մղուելով, իրենք ալ այս շարժումին մասնակցելու ստիպուեցան:

Եւ կատարեցին կարգ մը ահաբեկումներ թուրքերուն դէմ:

Պելկրատի մէջ Թուրք դիւանագէտ մը սպաննեցին:

Եւ յետոյ, Լիզպոնի թրքական դեսպանատան դէմ, անյաջող յարձակում մը կատարեցին:

Յաւախ էր տեսնել, Թալաթը և միւս թուրք ճիւղները պատժելու մէջ բացարիկ յաջողութիւնը ունեցած դաշնակցական Շահան Լաթալիի և ընկերներէն յետոյ, Լիզպոնի մէջ պատահածին արդիւնքը:

1983-ին Հ.Գ.Բ.ին ամերիկացի Մոնթէ Մելքոնեանին կողմէ խորտակուելէն յետոյ, կուսակցութիւնը հանգիստ շունչ մ'առաւ և, այդ թուականէն յետոյ, թուրք դիւանագէտներուն դէմ որեւէ ահաբեկչութիւն չկատարեց:

Այս ձեւով, նոյն կուսակցութեան համար, վրէժխնդրութեան և ահաբեկումներուն տետրակը՝ 1920-թ.ներուն Շահան Լաթալիի և ընկերներուն համար եղաւ ինչ նման, վերջնականապէս գոցուած եղաւ:

★ ★ ★

Հայկական Գ.Բ.ին կազմալուծումէն ի վեր, 17 տարիներ անցած են (Յար. ք. Է. 5)

**ԽՈՐԹԻՆ ՄԷՋ ՄԵՆՔ ԱԼ «ԱՅԴՊԷՍ ԵՆՔ»..... (Ծար. էջ 2-էն)**

այսօր:

Այսօր կը մտածենք, թէ ո՞վ էր արդեօք Հ.Գ.Բ.ի թիկունք կանգնողը: Թերեւս, ապագային, այս մասին անելի ճշգրիտ տեղեկութիւններ պիտի յայտնուին:

Բայց մենք, անձնապէս ու սրտանց կը հաւատանք, որ հայկական գաղտնի բանակը հովանաւորողը, քաջալերողը և անոր թիկունք կանգնողը՝ Ս. Հայաստանը վերականգնող, մեծ ղեկավար, 27 Հոկտեմբեր 1999-ին նահատակուած Կարէն Տեմիրճեանն էր, որուն պէս ղեկավար մը, հայ ազգը, շատ երկար ժամանակներէ ի վեր, չէր ունեցած:

Պատմութիւնը, անոր հայութեան համար կատարած բացառիկ աշխատանքները, անպայման երախտագիտութեամբ պիտի արձանագրէ:

Կարէն Տեմիրճեանը շատ լաւ հասկցած էր, Ազգին ծոցին գործող որոշ ուժերուն վնասարեւ գործունէութիւնը ընդհանուր հայութեան համար:

Եւ այս վրդովումով էր, որ 1980-թ.ներուն, ծանօթ կազմակերպութեան դէմ անարգական արտայայտութիւններ կատարեց:

Մեր անձնական համոզումն է, որ Կարէն Տեմիրճեանը 27 Հոկտեմբեր 1999-ին, ունեցած «ուրիշ շատ մը «յանցանքներուն» կողքին» նաեւ իր կատարած այդ արտայայտութեան պատճառաւ, Հ.Յ.Դ.ի նախկին անդամ Նայիրի Յունացեանի կողմէ նահատակուեցաւ:

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ**  
**{ՎՐԷԺ ՈՐՈՒՔԷՆԵԱՆ}**

**Երեքշաբթի 8 Օգոստոս 2000**

**ՎԵՐՋԱՊԷՄ**  
**« ՀԱՅԱՎԱՅԵԼ ՉԱՅՆ » ՄԸ ԲԱՐՁՐԱՑԱԻ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
 [ՎՐԵԺ ՈՌԻՐԵԿՆԱՆ]

Պիտի խոստովանինք, որ շատ յուսալքուած էինք, Հայաստանի ժողովուրդին քանի մը « աղուէս » դարաբաղցիներու ձեռքին խաղալիք դառնալը տեսնելով:

Ընդվզումով կը դիտէինք այս դարաբաղցիներուն, կոնակնին « Ամերիկեան ուժերուն » և անոնց « դրամին » տալով, հայ ժողովուրդին իբր թէ ներկայացուցիչները եղող Ազգային ժողովին երեսփոխանները խրտուիլակի վերածելին:

Չէինք ուզեր աչքերնուս հաւատալ՝ նահատակ Կարէն Տեմիրճեանի և Վազգէն Սարգիսեանի ընկերներուն՝ նոյնիսկ անոնց ամենէն մօտ հարազատներուն՝ « Աբրոյի » և տիտղոսի մարմաջով կաշառուելին տեսնելով:

Խաճաճիկի վերածուած Ազգային ժողովի երեսփոխաններուն Ազգին ծառայելու համար իրենց կատարած երդումին դաւաճանած ըլլալուն պատճառաւ, այս քանի մը նենգամիտ դարաբաղցիները յաջողեցան 27 Հոկտեմբեր 1999-ին կատարուած ողբերգութիւնը նսեմացնելու և անկարելորդ դէպքի մը վերածելու:

Այս անոպաները այն աստիճան յաջողեցան 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը իր հունէն հանելու, որ Յունանեան կոչուած դահիճները իրենց կատարած բոլոր խոստովանութիւնները ետ առին և նոյնիսկ ամբաստանեցին դատախազութիւնը, որ իրենց վրայ ճնշում բանեցուցած են:

Մինչ այդ, Զոչարեանին Հայաստանի մէջ սարքած սադրանքները, ամենափայլուն հոյիվուտեան ֆիլմերուն մէջ անգամ տեսնել անկարելի էր:

Ան. 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեամբ վրդոված ժողովուրդը խաբելու համար, նախ Վազգէն Սարգիսեանին անփորձ եղբայրը վարչապետ նշանակեց և քանի մը ամիսներ վերջ ալ, Ազգային ժողովի Միասնութեան Դաշինքի երեսփոխանները զանազան ձեւերով « կաշառել » յետոյ, « Պետութիւնը փլուզումի փրանգի մէջ էր » ըսելով, ամբողջ յանցանքը Արամ Սարգիսեանին վրայ նետեց և զինք պաշտօնանկ ըրաւ:

Եւ նոր վարչապետ մը նշանակեց՝ Միասնութեան Դաշինքին խորտակման առաջնակարգ պատասխանատուն՝ Անդրանիկ Սարգարեանը:

Այն Անդրանիկ Սարգարեանը, որ Սովետական Հայաստանի տարիներուն, իբր խռովարար բանտարկուած էր երկար ատեն:

Այսինքն երկրորդ « Պարոյր Հայրիկեան » մը:

Եւ ի՞նչ ըրաւ այս Անդրանիկ Սարգարեանը Վարչապետ նշանակուելէ ետք: Զոչարեանին բոլոր հակառակորդները կառավարութենէն վռնտեց: Բայց ամենէն կարելորդ՝ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան առաջնակարգ պատասխանատուն, այն ատենուան անվտանգութեան նախարար դարաբաղցի Սերժ Սարգիսեանը, Պաշտպանութեան նախարար նշանակեց: Այսինքն անոր՝ որուն 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն առաջ, Վազգէն Սարգիսեանին հանդէպ ունեցած նախանձի զգացումները, Երեւանի պետական բոլոր շրջանակներուն ծանօթ էին:



**Սերժը.** Վազգէն Սարգիսեանին շահած ժողովրդականութեան, երբեք չէր հանդուրժած: Եւ ի վերջոյ՝ Վազգէն Սարգիսեանին իբր՝ Վարչապետ՝ վառելանիւթի ատուծման իրաւունքը Սերժի ձեռքէն առնելով՝ զայն պետական սեփականութիւն դարձնելը, բաժակը յորդեցնող կաթիլը եղաւ: Եւ մենք կը հաւատանք, որ 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութեան մէջ, Վազգէն Սարգիսեանին դէմ անոր ունեցած ատելութեան հասնող նախանձը, մեծ դեր խաղցած է:

Այստեղ, ձեր ուշադրութիւնը պիտի հրաւիրենք, այսօրուան տխուր իրակացութեան մը վրայ: 27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութենէն առաջուան ամիսներուն, Սերժ իր մտերիմներուն՝ «Վազգէն Սարգիսեանը «Սպարապետ» ըլլալ կ'ուզէ» ըսելով կը հեզմէր:

Իրապէս ալ, Վազգէն Սարգիսեանը «Հայոց Սպարապետ» եղաւ: Բայց... նահատակուելէ յետոյ:

Եւ այսօր Սերժը, նահատակ Սպարապետ Վազգէն Սարգիսեանի Պաշտպանութեան նախարարութեան աթոռին նստած է:

Արդեօք վաղն ալ, Վազգէն Սարգիսեանին վարչապետութեան աթոռին պիտի կարենա՞յ նստիլ:

★ ★ ★

Մենք, մեր վերջին յոյսը եղող այսօրուան Հայաստանի մէջ, սրտայոյզ և երկիրը բոլորովին կործանումի առաջնորդող եղելութիւններուն ցաւով կը հետեւէինք: Եւ այս անհաւատալի, թրջավայել և հայակործան, իբր թէ հայկական եղող իշխանութեան գործունէութեան դէմ, մեր ընդվզումի և պոռթկումի արտայայտութիւնները կը բախէին Հայաստանի ժողովուրդին անտարբեր և անզգայ կեցածքին: Եւ այս անտարբերութիւնը մեզ յուսահատութեան կը մղէր:

Բայց, վերջերս Հայաստանի մէջ պատահած կարգ մը եղելութիւնները մեզի կրկին այն յոյսը տուին, թէ հակառակ անտանելի դժուարութիւններուն և հայ ժողովուրդին մեծամասնութեան ենթարկուած թշուառութեան, հայոց մէջ «արդարութեան ջիղը» չէ մեռած:

Այստեղ նշելու պիտի ջանանք, Հայաստանէն եկող սա սրտապնդիչ և հայափայել արտայայտութիւնները [արտատպումը կը կատարենք Փարիզի «Յառաջ»-էն:

### «ԿԱՐԷՆ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ ԿՈՒՍԱԿԻՑՆԵՐԸ Կ'ԱՍԲԱՍՏԱՆԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Կարէն Տեմիրճեանի հիմնած ժողովրդական Կուսակցութեան Վարդենիսի և Արմաւիրի շրջանային կազմակերպութիւնները, յայտարարութիւններով ծանր անբաստանութիւններ ուղղած են երկրին իշխանութիւններուն, Հոկտեմբեր 27-ի ողբերգութեան քննութեան առընչութեամբ:

«Համբերել ենք, որպէսզի չվնասենք դարի ոճրագործութեան հետաքննութեանը, պատմութիւններու բացայայտմանը:

Արդէն լցուել է ժողովուրդի համբերութեան բաժակը, կորել հաւատն ամէնքի և ամէն ինչի նկատմամբ:

Չենք հաւատում ներկայ իշխանութիւններին, որոնք յանցանքը կատարողներին ձերբակալել են և չեն ուզում յանցագործներին ձերբակալել:

Հանրապետութեան ղեկավարները, արդարադատութեան մարմինները վաղ թէ ուշ պէտք է պատասխան տան ժողովուրդին, թէ ո՞ւմ է ձեռնտու այդ ոճրագործութիւնը, ո՞ւմ էր սարսափի մատնել Կարէն Տեմիրճեանի քաղաքական ասպարէզ գալը:

Վրդովեցուցիչ է, որ հանրապետութեան, ժողովուրդի և արդարադատու-

թեան համար պատասխանատուներն այսօր չափազանց անտարբեր դիրք են գրաւել Հոկտեմբեր 27-ի ողբերգութեան հրահրիչների և կատարողների նկատմամբ:

Պատմութիւնը կը դատապարտի նրանց և, նրանց սերունդները, դարեր շարունակ, կ'ապրեն անարգանքի սել խարանով:

Ոչ ոք ապահովագրուած է այդպիսի ոճիրի զոհ դառնալուց, քանի դեռ Հայաստանում անարգել անպատժելիութիւնն է տիրում:

Չարագործ մի ձեռք էլ վաղն անպայման կը հասնի ամէն մի զազրելի չարագործի այսօր հովանաւորողներին:»

## «27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1999-Ի ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

### «ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ» ՈՒ ԹՈՌՈՒՑԻԿԸ

Վերջերս, Երևանի մէջ, անծանօթներ սկսած են տարածել երկու էջոց թռուցիկ մը. «ԿՈՒ ԳԱՅ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՕՐԸ» վերնագրով: Թռուցիկը կը կրէ «Հոկտեմբեր 27-ի վրիժառուներ» ստորագրութիւնը: Օտար գործակալութիւններ կարելորութեամբ կը հաղորդեն այս լուրը:

Թռուցիկին մէջ կ'ըսուի.

«Ակնյայտ է դառնում, որ այս իշխանութիւնների օրոք Հոկտեմբեր 27-ի գործն ըստ էութեան չի բացայայտուելու և մենք, մեր լուրութեամբ, դառնալու ենք այդ ստոր դաւադրութեան մասնակիցը»:

Այնուհետեւ թռուցիկին հեղինակները կը մեղադրեն «Միասնութեան» և «Երկրապահ Կամաւորներու Միութիւն»ի գործիչները, զինուորական Դատախազը և նոյնիսկ զոհուածներու հարազատները:

Թռուցիկին անանուն հեղինակները կը նշեն, թէ բոլորը գիտեն, թէ ովքեր են Հոկտեմբեր 27-ի պատուիրատուները, և կը նշեն Ռոպէր Զոչարեանի, Սերժ Սարգիսեանի և Հրանտ Մարգարեանի անունները:

Թռուցիկը կ'եզրակացնէ. «Մենք, Վազգէնի իսկական ընկերներս, չենք հանդիւրժելու ու մէկ առ մէկ շանսատակ ենք անելու բոլոր նրանց ովքեր, ինչ որ կերպ, կապուած են նրա սպանութեան հետ»:

Միջազգային քաղաքական դէտեր, որոնք մօտէն կը հետեւին Կովկասի իրադարձութիւններուն, կը սպասեն, որ Հոկտեմբեր 27-ի տարեդարձին առիթով, պայքարը սաստկանայ իշխանութիւններու դէմ, որոնք կ'ուզեն ծածկել ահաբեկչական այդ արարքին ծայրերը»:

★ ★ ★

Այս թռուցիկին մէջ նշուածի համաձայն, 27 Հոկտեմբերի ողբերգութեան պատուիրատուներն են՝

Ռոպէր Զոչարեան, Սերժ Սարգիսեան և Հրանտ Մարգարեան:

Առաջին երկուքին՝ «անձը» և «գործունէութիւնը» բոլորին ծանօթ է:

Բայց Հրանտ Մարգարեանին անձը՝ շատերուն ծանօթ չէ:

Ո՞վ է Հրանտ Մարգարեանը: ԱՆ, Հ. Յ. Դաշնակցութեան Հայաստանի Բիւրոյի ներկայացուցիչն է:

Այստեղ կ'ուզենք անոր անձնաւորութեան մասին, «ՆԱՅԻՐԻ»ի 11 Յունուար 2000-ի թիւին մէջ [Հայաստանի թերթերէն առնելով], մեր գրածները արտատրւել:

«27 Հոկտեմբեր 1999-ի չարաշուք օրը, Ազգային Ժողովին մէջ, Կարէն Տեմիրճեանը և Վազգէն Սարգիսեանը սպաննել էտք, Նայիրի Յունանեանը «սեփիւր» հեռաձայնով-իրենց մեծաւորին կը զանգէ:

«Մօրուսաւորը սպաննեցինք, բոլորն ալ մեր ձեռքն են, շուտ հասէք»:

Եւ ո՞վ է Նայիրի Յունանեանին հեռաձայնած անձնաւորութիւնը՝ ծանօթ կուսակցութեան գերագոյն մարմնի անդամ Հրանտ Մարգարեանը:

Բայց, Նայիրի Յունանեանին սպասած անձնաւորութիւններէն ոչ մէկը, չի գար:

Այս ողբերգութիւնը պատուիրողներուն համար՝ բաւ էր Վազգէն Սարգիսեանին և Կարէն Տեմիրճեանին մէջտեղէն վերանալը:

Ասոնց սպանութիւններէն յետոյ, մէջտեղ եկող «քաոս»ով արդէն ամէն բան, այս «Պատուիրատուներուն» ուզածին պէս պիտի ընթանայ»:

Այստեղ, մեր ուշադրութիւնը գրաւեց, հետեւեալ պարագան:

Փարիզի «Յառաջ» թերթին մէջ, 29-7-2000 և 11-8-2000 թ.ներուն հրատարակուած Հայաստանի երկու շատ կարեւոր եղելութեանց լուրերը՝ Փարիզի «Կամք» թերթին մէջ որեւէ ձեւով չէր տրուած:

Ֆրանսայի Լ.Յ.Դ.ի պաշտօնական թերթը եղող «Կամք» օրաթերթին մէջ, 27 Հոկտեմբերի մասին այս կարեւոր լուրերուն չհրատարակուիլը, շատ յատկանշական է:

Այս պարագան միայն մէկ ձեւով կարելի է բացատրել.— Միջազգային դէտերուն ալ շատ մօտէն հետաքրքրող այս լուրերուն մէջ, 27 Հոկտեմբերի ողբերգութեան պատուիրատուներէն մէկը ըլլալով նշուած Լ.Յ.Դ.ի Հայաստանի Բիւրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարեանին անունը խնայելու համար էր:

★ ★ ★

27 Հոկտեմբեր 1999-ի ողբերգութիւնը, Հայաստանի համար 24 Ապրիլ 1915-ի չափ ճակատագրական է- ըսած էինք:

Այդ օրը, ոչ միայն Կարէն Տեմիրճեանը, Վազգէն Սարգիսեանն ու իրենց ընկերները նահատակուեցան, այլ ամբողջ հայ ազգին «հոգին» և «ապագայի յոյսերը» նահատակուեցան:

Եւ գրեթէ բովանդակ հայ ազգը՝ ղեկավարներէն մինչեւ ամենապարզ անհատը, այս մեծ աղէտին դէմ, բառին իսկական իմաստով, լռեց:

Կարգ մը պատասխանատու ղեկավարներ ըսին, թէ երկրին մէջ խռովութեան պատճառ չըլլան ըսելով չեն միջամտած:

Բայց, շատ սխալ կեցուածք էր ասիկա:

27 Հոկտեմբերի ողբերգութիւնը, կատարուած ահաւոր ոճիրին հակազդեցութիւններուն պատճառաւ՝ իսկական հրաբուխ մըն էր:

Երեւութեամբ հանդարտ, բայց ներքնապէս հուր և կատաղութիւն:

